

2. 2. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ)

Հայ-իրանական առնչությունները սկզբնավորվել են դեռևս իրանական պետականության կազմավորման ժամանակաշրջանում: Արդեն Աքեմենյանների օրոք իրանում գոյություն ունեին հայկական ընկալալիքներ, սակայն դրանք առավելապես վուսալական պարտականությունների կատարման համար հայ իշխանների կողմից իրան ուղարկված զինվորական ստորաբաժանումների բանակատեղիներ էին:

Իրանում հայ զաղթօջախներն սկսեցին առաջանալ III—IV դարերում իրանա-հայկական առաջին պատերազմների ընթացքում: Այդ պատերազմներում, որոնք Սասանյանները մղում էին իրանի և Հռոմի պայքարում հակաիրանական կողմնորոշում ընդունած հայ Արշակունիների դեմ, հարձակվող կողմը իրանն էր: Հայաստանում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո իրանա-հայկական հակամարտությունն ավելի սրվեց և ստացավ կրոնական գունավորում:

Իրանի ավատական վերնախավի շահերով թելադրված այդ պատերազմների բուն նպատակն էր կողոպտել Հայաստանի հարստությունները, տիրանալ նրա տերիտորիայով անցնող միջազգային առևտրական ճանապարհներին: Սասանյանների քաղաքական պլանների մեջ էին մտնում նաև Հայաստանը պետականությունից զրկելու, հայ բնակչությունը ուժացնելու խնդիրները:

Նշված ժամանակամիջոցում հայերի մասսայական բռնազաղթը իրան դառնում է պետական քաղաքական միջոցառում: Առավել խոշոր բռնազաղթը իրականացվեց IV դ. երկրորդ կեսին՝ Շապուհ II-ի զորքերի Հայաստան կառարած արշավանքի հետևան-

քով: Հալ պատմիչների տեղեկությունների համաձայն III—V դարերում Իրան է գաղթեցվել մի քանի հարյուր հազար հայ:

Իրենց բնօրրանից բռնի տեղահանված հայերին սպասում էր անախտանձնի ճակատագիր: VII դ. սկզբին, երբ Իրանն ընկավ Արաբական խալիֆայթի տիրապետության տակ, նրանք բուն տեղի ժողովրդի հետ մեկտեղ ընդունելով մահմեդականություն՝ ձուլվեցին ու կորցրին իրենց ազգությունը:

Իրանում (առավելապես նրա հյուսիսային նահանգներում) հալ բնակավայրերի նոր օջախներ սկսեցին ստեղծվել XI դ.՝ սելջուկ-մոնղոլների արշավանքների հետևանքով: Բացի Վաղ, հայկական պետականության անկման հետևանքով, Մաքուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիայի, Ղարադաղի (Արտազ, Հեր, Զարեանդ) և այլ նահանգների հայկական շրջանները մտան Իրանի պետության կազմի մեջ: XI—XIV դարերում հայկական բնակավայրեր կային Բավրիզ, Մարաղա, Ռաշտ, Սուլթանիե քաղաքներում և Իրանի մի քանի այլ մարզերում: Չնայած հիշյալ բնակավայրերում արդեն գոյություն ունեին թեմեր, սակայն տեղի հայ բնակչությունը դեռևս միասնական գաղութ չէր կազմում: Հայաբնակ այդ օջախները փոքրաթիվ էին, մասնատված ու ցրված, իսկ Իրանի սոցիալ-տնտեսական պայմաններն իրենց հերթին անբարենպաստ էին դրանց միավորման համար:

Իրանում հայաբնակ խոշոր օջախներ ստեղծվեցին XV—XVII դ. սկզբին՝ Շահ Աբաս Ա-ի կազմակերպած հայերի մասսայական բռնագաղթի հետևանքով: Շապուհ Բ-ի օրոք իրագործված վերաբնակեցումից ի վեր այդ հայերի երկրորդ խոշոր գաղթն էր Իրան: Այս առումով Սեֆյանների քաղաքականությունը ըստ էության Սասանյանների քաղաքականության շարունակությունն էր:

Շահ Աբաս Ա-ի իրագործած բռնագաղթի ռազմա-ստրատեգիական նպատակը հարձակվող թուրքական զորքերի առաջ ռամալացած շրջաններն ստեղծելն էր: Քաղաքական տեսակետից նա ձգտում էր իրագործել իր վաղեմի միտումը՝ թուլացնել Իրանի սահմանակից շրջաններն ու այդտեղ բնակվող ժողովուրդներին: Բռնագաղթը հետապնդում էր նաև տնտեսական նպատակ՝ բազմաթիվ արհեստավորների, վաճառականների, գյուղացիների տեղահանության միջոցով զարկ տալ Իրանում արհեստների զարգացմանն ու առևտրական կապիտալի կուտակմանը, ինչպես նաև սակավ բնակեցված, հատկապես կենտրոնական գավառների, հողերի յուրացմանը:

Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», որն այդ ժամանա-

կաշրջանի իրադարձությունների հավաստի աղբյուրներից մեկն է, վեպում է, որ գաղթեցված հայերի սի մասը տեղավորվեց Խավ-րիդում և մոտակա շրջաններում, Գիլանի (Ռաշտ, էնզելի¹), Մա-դանդարանի (Քաշան և այլն) նահանգներում, Ղաղվիխում և Թավ-րիդից մինչ Սպահան ընկած հագար կիլոմետր ձգվող ճանապարհին հարակից բնակավայրերում: Գաղթական հայերի հիմնական դանգվածը բնակություն հաստատեց Սպահանում և նրա արվարձանում, Սպահանի նահանգի շրջաններում (Լնջան, Ալիջան, Փե-րիա² և Քեարվանդ), Բախտիարիում (Չհարմհալ) և Սուլթանաբադի (ներկայումս՝ Արաք) շրջակա Բուրվառի և Գյափլա շրջաններում: Հալեբի մանր խմբեր բնակվեցին Շիրազում: Համադանում և այլ վայրերում:

Սպահանը հարավից օղակող Զենդերուդ գետի աջ ափին հա-լերը կառուցեցին մի քաղաք, որ Նոր Զուղա (Նոր Զուլֆա) անունն ստացավ: Կարճ ժամանակում Նոր Զուղան դարձավ Իրանի առե-տրական կարևոր կենտրոններից մեկը, որի հայ վաճառականները (խոջաներ) XVII դ. և XVIII դ. առաջին քառորդում դարձան Հընդ-կաստանի, Եվրոպական երկրների ու Ռուսաստանի հետ Իրանի առևտրա-տնտեսական կապերի զարգացման ակտիվ գործիչներ: Նոր Զուղայի վաճառականների արտաքին առևտրական կապերը որոշակիորեն նպաստեցին նաև երկրի ներսում տնտեսական կա-պերի ամրապնդմանը, ինչպես նաև Հնդկաստանի (Կալկաթա և այլն), Եվրոպայի (Վենետիկ, Ճենովա, Մարսել և այլն) և Ռու-սաստանի (Աստրախան) մի քանի քաղաքներում հայկական գա-ղութների առաջացմանը:

XVII դարում և XVIII դ. սկզբին Նոր Զուղան դարձավ Իրանի հարավում ապրող հայերի թեմական կենտրոն, ինչպես նաև մշա-կութային կարևոր օջախ ամբողջ գաղութի համար:

XVIII դ. 20-ական թվականներին աֆղանների արշավանքի հետևանքով Նոր Զուղան ապրեց խոր անկում: Դրան հաջորդած ֆեոդալական երկպառակությունների և պատերազմների շրջանում նրա բնակչության զգալի մասը, հատկապես ապահովված, հա-րուստ խավը հեռացավ քաղաքից, առավելապես Հնդկաստան, Իրաք և արաբական այլ երկրներ, Կովկաս, Ռուսաստան և այլն: Այսուհանդերձ, Իրանում ապրող հայերի գերակշիռ մասը մնաց

¹ Ներկայումս Փհլիկ:

² Փերեյդուն շրջանի հայերի անվանումը:

³ Ի հիշատակ իրենց նախկին բնակավայրի՝ Արաքսի ափին գտնվող Զուղա քաղաքի, որը Նոր Զուղայից տարբերելու համար կոչվեց Հին Զուղա:

երկրում: Նրանք բնակություն հաստատեցին Իրանի այլ նահանգներում և շրջաններում:

Այդ տարիներին տեղաշարժեր եղան նաև հայ գյուղական բնակչության մեջ: Նոր Զուղային հարակից լնջան և Ալինջան շրջաններում ապրող բոլոր հայ գյուղացիները գաղթեցին դեպի արևմուտք ու հարավարևմուտք՝ Փերիայի, Բուրվառի և Չհարմհալի շրջանները: Հաջորդ տասնամյակում հայ գյուղացիների շատ ընտանիքներ Բուրվառի և Գյափլա շրջաններից տեղափոխվեցին հարևան Քամարա, Քազազ շրջանները:

Այս տեղաշարժերի ընթացքում ստեղծվում էին հայկական նոր բնակավայրեր և կամ համալրվում էր արդեն եղածների բնակչությունը: Դրա շնորհիվ ամրապնդվում էին քաղաքների ու գյուղերի, ինչպես նաև առանձին շրջանների ու նահանգների հայ բնակչության միջև հաստատված բազմապիսի կապերը: Այս իրադարձությունների բովում էր, որ կազմավորվեց տեղի հայ գաղութը:

XIX դ. 20—30-ական թվականներին իրանահայ գաղութը ենթարկվեց նոր վերափոխությունների: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո մոտ 45 հազար հայեր դուրս եկան Իրանի հյուսիսային նահանգներից և բնակություն հաստատեցին Նրևանի և Նախիջևանի նահանգներում:

Իրանում մնացած հայերը ապրում էին երկրի տարբեր մասերում, գլխավորապես նրա հարավային և հյուսիսային նահանգներում: Հարավարևակ հայերի կենտրոնը շարունակում էր մնալ Նոր Զուղան: Նրան էին ենթարկվում Փերիա, Քեարվանդ, Չհարմհալ, Բուրվառի, Համադան, Շիրազ քաղաքների հայաբնակ օջախները: Հետագայում քաղաքական և տնտեսական մի շարք հանգամանքների թելադրանքով այդ նահանգների հայկական բնակչության մի մասը համարեց Թեհրանի, Սուլթանաբադի, Ղազվինի, Ռաշտի, էնզելիի, Ղարաղանի, ինչպես նաև այլ շրջանների հայաբնակ օջախները:

1833 թ. հյուսիսային նահանգներում բնակվող հայերի կենտրոնը դարձավ Թավրիզը: Մինչ այդ, հիշյալ դերը պատկանում էր Մաքուի շրջանում գտնվող սուրբ Թադեոսի վանքին⁴: Այսուհետ Թավրիզը համարվում էր Խոյի, Մաքուի, Սալմաստի, Ուրմիայի (այժմ՝ Ռեզայե), Ղարաղաղի, Մարաղայի և այլ շրջաններում բնակվող հայերի կենտրոն:

⁴ Այս վանքը կոչվում է նաև սուրբ Թադեի վանք: Այն չպետք է շփոթել Սալմաստի գավառում գտնվող սուրբ Թադեի վանքի հետ:

XIX դ. հրկրորդ կեսին իրանահայ գաղութը շարունակեց աճել ավելի արագ թափով, ստեղծվեցին հայ նոր բնակավայրեր Մեշհեդում, Քերմանշահում և այլուր: XX դ. սկզբին, իրանում նավթային արդյունաբերության զարգացման կապակցությամբ հայաբնակ նոր օջախներ առաջացան երկրի հարավում՝ Աբազանում, Ահվազում, Մեսշեդ-Սուլեյմանում և այլուր: Այդ պրոցեսը շարունակվում էր նաև 20-ական թվականներին և հետագա տարիներին:

XVII—XIX դարերում հայ բնակչության մի մասը հարավային գավառներից փոխադրվում է կենտրոնական գավառները, ստեղծելով մի քանի նոր հայկական բնակավայրեր: Տարագաղթման սյատմական այս պրոցեսի հետևանքով իրանի հայ գաղութը բաժանվեց հրկու մասի՝ հյուսիսային (Թավրիզ կենտրոնով) և հարավային (Նոր Զուղա կենտրոնով): Այս բաժանումը պահպանվում էր մինչև XX դ. 40-ական թվականները:

Թեհրանի բնակչության աճին դուգրեթաց խախտվեց գաղութի սյատմականորեն ստեղծված այս բաժանումը: Դարիս քառասնական թվականների կեսերին ստեղծվեց կենտրոնական նոր շրջան, որի մեջ՝ նրա կենտրոնը հանդիսացող Թեհրանի հետ մեկտեղ մտան նաև հարակից կենտրոնական, ինչպես նաև հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան գավառների այն հայկական բնակավայրերը, որոնք մինչ այդ մնում էին գաղութի հարավային շրջանի կազմում:

Այսպիսով, իրանի հայ գաղութը ներկայիս դրությամբ պայմանականորեն բաժանվում է հիմնական երեք շրջանների՝ Հյուսիսային, Հարավային և կենտրոնական: Շրջանների կենտրոններից առավել հինը՝ Նոր Զուղան է, ապա Թավրիզն ու Թեհրանը: Սակայն իր նշանակությամբ, բնակչության թվի ու կազմակերպվածության տեսակետից կենտրոնական շրջանն այժմ առաջատար տեղ ունի և հանդիսանում է ամբողջ գաղութի կորիզը⁵:

ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալական կյանքը: Զբաղմունքը: Հայ ձեռնարկատերերի յեռը Իրանի տնտեսության զարգացման գործում: Կենսամիևիմում, հարկատվություն և վաշխառություն:

Դարեր շարունակ ապրելով իրանում հայերը անխուսափելիորեն հարմարվել են երկրում տիրող պայմաններին: Իրանահայ-

⁵ Տե՛ս Հ. Հ. Մարտիրոսյան, Հայերի տեղաբաշխումն իրանում (գեմոգրաֆիկ տվյալներ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» IV, Իրան, էջ 150—173:

իւրի սոցիալ-տնտեսական դրութիւնը հիմնականում համապատասխանել է երկրի բնիկ ժողովուրդների սոցիալ-տնտեսական վիճակին, ժողովուրդներ, որոնք ապրել են ֆեոդալական հարաբերութիւնների պայմաններում: Բայց, արդեն երկրի տնտեսութեան մեջ երևան եկած ֆաբրիկա-գործարանային արդյունաբերութեան սաղմերի շնորհիվ տեղի հայերի սոցիալ-տնտեսական կյանքում ի հայտ էին գալիս նոր՝ կապիտալիստական հարաբերութիւններին բնորոշ առանձնահատկութիւններ:

20-ական թվականների սկզբին սոցիալական բաժանումները գաղութում ընդհանուր գծերով համընկնում էին Իրանի հասարակարգի սոցիալական կառուցվածքին: Գաղութում ղասերի տոկոսային հարաբերակցութիւնը մոտավորապես հետևյալն էր. գյուղացիներ՝ 75%, քաղաքային բնակչութիւն (ծառայողներ, մասնավոր ձեռնարկատերեր և այլն)՝ 18—20%, արհեստավորներ՝ 5—7%:

Հայ գյուղացիները ֆեոդալական Իրանի գյուղական մյուս բնակչութեան նման գտնվում էին չափազանց դժվարին պայմաններում: «Սպահանի և Սուլթանաբադի շրջանների գյուղական հայ բնակչութիւնը հասել է ծայրահեղ աղքատութեան... Պարսկաստանի բոլոր քաղաքներում կարելի է տեսնել ֆեոդալներից քաղաքները տարավայր զբաղմունքի փախած ու անգործ մնացած քաղցած, աղքատ գյուղացիներ»⁵:

Սակայն ինչպես նորագույն շրջանում, այնպես էլ Իրանում հայկական գաղութի գոյութեան ողջ ժամանակամիջոցում հայերի սոցիալ-տնտեսական գրութիւնը որոշ չափով տարբերվել է երկրի հիմնական բնակչութեան սոցիալ-տնտեսական պայմաններից: Դրանք լիակատար համապատասխանութեան մեջ չեն նաև ներկայումս:

* * *

XX դ. 20—30-ական թվականներին Իրանում, առավելապես արդյունաբերութեան բնագավառում, հստակորեն դրսևորվում էր կապիտալիստական հարաբերութիւնների զարգացման տենդենց: Սակայն գյուղատնտեսութեան մեջ դեռևս ուժեղ էր ֆեոդալական մնացուկների տիրապետութիւնը: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման այդ առանձնահատկութիւնը անդրադարձել է իրանական հասարակութեան սոցիալական կազմի վրա, որը վերին աստիճանի խայտաբղետ է:

⁵ ՀՍՍՀ Կոմուն, ֆ. 4/114, ց. 2, գ. 88, Բ. 45:

Վերստիճյալ շերտավորումը այս կամ այն համամասնությամբ հատուկ է նաև տեղի հայ դադութին: Իրանահայերի սոցիալ-տնտեսական կյանքի այս երևույթը իր պատմությունն ունի: Այն կապված է գաղութի գոյություն իրավական նորմերի, տեղի հայ բնակչության կյանքի սլաամական և քաղաքական պայմանների հետ:

Հայտնի է, որ ընդհուպ մինչև XIX դ. վերջը իրանում տիրապետող էր հողատիրության պետական ձևը: Նման պայմաններում քիչ թե շատ խոշոր հողատերեր ունեին միայն մի քանի հայեր: Նրանք գլխավորապես հայ հոգևորականության ներկայացուցիչներ էին, որոնց իրանի շահերն ու կառավարիչները օգտագործում էին դադութի բնակչության վրա իրենց իշխանությունը ամրապնդելու համար: Առաքել Դավրիժեցու և Հարություն Տեր-Հովհանյանցի մոտ տեղեկություններ կան, որ Շահ Արաս Ա-ն իր «խասսե» հողերից կտորներ էր հատկացնում թեմական առաջնորդներին ու նոր Զուղայի մյուս բարձրաստիճան հոգևորականներին: Ադ մասին նշում է նաև Ի. Պ. Պետրուշևսկին⁷:

Շահ Արաս Ա-ն և իր հետնորդները հովանավորող քաղաքականություն էին վարում նաև հայ նախկին իշխան-ֆեոդալների նկատմամբ, որոնք իրան էին փոխադրվել XVII դ. սկզբին, գյուղացիների հետ: Թեպետ նրանք չէին վերստանում իրենց նախկին իրավունքները, քանի որ զուրկ էին հողերից, սակայն նոր պայմաններում հաճախ շահերի կողմից նշանակվում էին քալանթարի կամ գյուղական ավագի պաշտոնում⁸:

Սեֆյանների հարստության անկումից հետո իրանում ուժեղացան կենտրոնախույս ձգտումները: Փերիա, Չհարմհալ, Բուրվառի, Գյափլա շրջանների, ինչպես նաև հյուսիսային նահանգների հայ գյուղացիությունը XVIII—XIX դդ. «կռվախնձոր» դարձավ կենտրոնական իշխանության և տեղական ֆեոդալների միջև: Այսպես, երկարատև պայքարից հետո Չհարմհալը 1878 թ. միացվեց Բախտիարի խանների տիրույթներին⁹:

XIX դ. վերջին օտարերկրյա կապիտալի ներթափանցումը իրան, ապրանքա-դրամային հարաբերությունների աճը և երկրի ներքաշումը միջազգային ապրանքափոխանակության ոլորտի մեջ

⁷ И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVII—начале XIX вв., Л., 1949, стр. 111.

⁸ Ավ. Լոգաբյան, Իրանի Չհարմհալ քաղաքը, էջ 17—25:

⁹ С. М. Алиев, К национальному вопросу в современном Иране. «Краткие сообщения ин-та народов Азии», М., 1964, № 77, стр. 50.

հանգեցրին այն բանին, որ հողը սկսեց կենտրոնանալ խոշոր կալվածատերերի, վաճառականների, ազդեցիկ խանների և ցեղային առաջնորդների ձեռքերում. որի հետևանքով հայ գյուղացիների մեծամասնությունը զրկվեց հողից:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին տեղական կալվածատերերը (մուլքադարները) դարձան հայ գյուղացիների լիիշխան տերերը: Նրանք հողերի մի մասը գնեցին, իսկ մյուսը՝ զավթեցին ուժով: Այդպես եղավ, օրինակ, Չհարմհալում¹⁰, ինչպես նաև Նյուսիսային նահանգներում: Այսպես, Սալմաստում տեղի կալվածատերերը լուրացրին տասնյակ գյուղեր, այդ թվում նաև ամբողջովին հայաբնակ այնպիսի գյուղեր, ինչպիսիք են Փայաջուկը, Սավրան, Մայլամը և այլն¹¹:

Իրանում հայ ունեւոր խավերը, հիմնականում առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները, ձգտում էին հողեր ձեռք բերել: Սակայն նրանց չհաջողվեց քիչ թե շատ խոշոր հողատերերի տեր դառնալ: Այս ուղղությամբ հատկապես եռանդուն փորձեր արեցին ազդեցիկ Բումանյան առևտրական տան ներկայացուցիչները: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը նրանք սկսեցին հողատերեր գնել Ղարադաղի շրջանում: Բայց պատերազմը և առևտրական տան՝ դրան հաջորդած, սնանկացումը ի դերև հանեցին այդ փորձերը¹²:

Ընդհուպ մինչև մեր դարի 60-ական թվականները Իրանի հողատարածությունների ճնշող մեծամասնությունը գտնվում էր խոշոր կալվածատերերի ձեռքում: Միայն հողային ռեֆորմի իրականացման ընթացքում իրանական իշխանությունները բռնեցին կալվածատիրական խոշոր հողատիրությունը որոշ չափով սահմանափակելու ուղին: Սակայն այդ ռեֆորմը դեռևս չի իրագործվել հայ գյուղացիներով բնակեցված շրջանների մեծ մասում: Հնարավոր է, որ այն ընդհանրապես չանդրադառնա այդ շրջաններից շատերին, քանի որ դրանք (օրինակ՝ Չհարմհալը, Փերիան, Բուրվադին, Գյափլան և ուրիշներ) գտնվում կամ հարում են ցեղերի (րախտիարներ, լուրեր և այլն) բնակության գոտուն, որի վրա հողային ռեֆորմը աննշան չափով է տարածվում¹³:

¹⁰ Ավ. Եղգարյան, Իրանի Չհարմհալ գավառը, Էջ 22—23:

¹¹ А. Султан-заде, Персия. М., 1924, стр. 66.

¹² «Վերածնունդ», 1933, հուլիսի 11:

¹³ А. И. Демин, Аграрные преобразования в современном Иране, сб. «Иран», М., 1963, стр. 117.

Այսպիսով, Իրանում հայ գյուղական բնակչության միջավայրում գոյություն ունեւի և ներկայումս էլ ունի շահագործվող գյուղացիության բավականին ստվար զանգված: սակայն շահագործողների կալվածատիրական դասակարգ գոյություն չունի:

Սակայն կալվածատիրական դասի բացակայությունը չէ նշանակում, թե այն գուրկ է դասակարգային շերտավորումից: Հայ գյուղացիների միջև գոյություն ունեն դասակարգային մի քանի ենթաբաժանումներ՝ աղքատներից ու միջակներից մինչև հարուստ գյուղացիները: Միաժամանակ դասակարգային շերտավորումներ կան վարձակալ-գյուղացիների ու սեփականատեր գյուղացիների միջև:

Իրանի գյուղական բնակչության դասակարգային դրության չափանիշը գյուղացու՝ սեփականության նկատմամբ (հող, քարշուտ, գյուղատնտեսական գործիքներ և այլն) ունեցած հարաբերությունն է: Հայ գյուղացիների՝ հողային սեփականության նկատմամբ ունեցած հարաբերությունները պարզելու համար դիմենք Չհարմհալ, Փնրիա, Քեարվանդ և Բուրվառի շրջանների վերաբերյալ «Պարսկահայ տարեցույցում» 1927 թ. հրապարակված տրվյալներին:

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ 1

Հողատերերի և խոշնեշիներին¹⁴ թիվը երեք շրջաններում

	Տների թիվը	Հողագործ.	խոշնեշիներ
Չհարմհալ	767	487	280
Փերիա և Քեարվանդ	1881	1248	633
Բուրվառի	680	460	211
	3328	3204	11242

Ինչպես երևում է բերված աղյուսակից, այդ շրջանների հայ գյուղացիական ընտանիքների մեկ երրորդից ավելին հող չունի և այն չէր էլ վարձում: Իսկ գյուղացիների այն մասը, որ զբաղված էր երկրագործությամբ, «Պարսկահայ տարեցույցի»¹⁵ տվյալներից պարզվում է, որ հողագործներից Փերիայի շրջանում սեփական հողակտորներ ունեին 427 ընտանիք, Չհարմհալում՝ 17, իսկ Բուրվառի շրջանում գյուղացիներից և ոչ ոք հողատեր չէր: Հողատեր

¹⁴ Խոշնեշիները գյուղերի այն բնակիչներն են, որոնք հող չունեն և այն չեն վարձակալում: Նրանց հարուստ մասը զբաղվում է առևտրով և վաշխառությամբ, իսկ աղքատները՝ բատրակությամբ և վարձու աշխատանքով:

¹⁵ «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 62,

գյուղացիների մեծամասնության հողակտորները ընդամենը մի քանի ջրիւր էին կազմում¹⁶, իսկ սեփականատեր-գյուղացի 444 ընտանիքներից 244-ը մշակում էին նաև ուրիշներից լրացուցիչ վարձած հողակտորները: Հասարար միայն 200 հայ ընտանիք ունեին իրենց պահածները լրացնելու չափ հող:

Վերը բերված տվյալները ցույց են տալիս, որ 1927 թ. Իրանի երեք շրջաններում հողագուրկ հայ գյուղական ընտանիքների թիվը կազմում էր մոտավորապես 87%, քիչ հող ունեցողներին՝ 7% և ընտանիքների միայն 6%-ն էր ապահովված հողով:

Հողագուրկ էր նաև կենտրոնական նահանգների այլ շրջանների, ինչպես նաև երկրի հյուսիսի գրեթե գյուղական ողջ հայ բնակչությունը:

Հաջորդ տասնամյակների հողագուրկ, սակավահող և հողատիր հայ գյուղացիների ընդհանուր փոխհարաբերությունը, ի տարբերություն ամբողջ երկրում տիրող փոխհարաբերության, փոփոխվել է. նվազել է հողագուրկ և սակավահող գյուղացիների թիվը: 40-ական թվականներին այդ փոխհարաբերության փոփոխմանը ակնհայտորեն նպաստեց գյուղական, գլխավորապես հողագուրկ և սակավահող բնակչության, տեղափոխությունը դեպի քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները: 1946 թ. այդ պրոցեսը զուգադրյալեց հայերի՝ Իրանից Հայկական ՍՍՀ հայրենադարձվելուն: Այդ ժամանակ Հայկական ՍՍՀ փոխադրվեց 15.000 գյուղացի: Ավելի քան 10.000 գյուղացիներ, որոնք հայրենադարձության դադարեցման պատճառով չէին հասցրել մեկնել հայրենիք, բնակություն հաստատեցին Թեհրանում և, մասամբ, Թավրիզում:

Չնայած գյուղական աղքատ զանգվածների քաղաք տեղաշարժվելուն, ինչպես նաև Սովետական Հայաստան ներգաղթելուն, տեղի գյուղական հայ բնակչության մեջ ներկայումս էլ ճնշող մեծամասնություն են կազմում հողագուրկ և սակավահող խավերը: Սակայն հայ գյուղական բնակչության հողագրկության, հետևապես նաև դասակարգային շերտավորվածության աստիճանը տարբեր է և կախված է նրանց բնակության շրջանի պայմաններից: Այսպես, Փերիայի շրջանում, մի շարք պատմական ու տնտեսական հանգամանքների, մասնավորապես Իրանի շահերի վարած կենտրոնական շրջանների զարգացումը խթանող քաղաքականության շնորհիվ, մանր հողատերերի թիվը ավելի մեծ է, քան որևէ այլ հայ բնակավայրում: Հայտնի է, որ Իրանում գյուղացիները զատորոշ-

¹⁶ Զրիբը հավասար է 1081 քմ:

վում են արտադրամիջոցների նկատմամբ իրենց սեփականությունում, գլխավորապես ունեցած բանող (քարշող) անասունների և գյուղատնտեսական գործիքների օտանկումը:

Վարձակալող գյուղացու ձեռքի տակ նդառ բանող անասունների թիվը կարևոր նշանակություն ունի, քանի որ ի վերջո նաև որանով է պայմանավորվում վարձվող հողակտորների մեծությունը և, հետևապես, գյուղացիական ընտանիքի ապահովվածության աստիճանը:

Որպես կանոն, հայ գյուղացին ավելի քիչ թվով լծկան անասուններ ունեւր, քան տեղական ալլազգի բնակիչները: Դրա պատճառն այն է, որ ի տարբերություն վերջինների, հայերը զուրկ են արտավալրերից ու մարգագետիններից:

Առավել դժվարին պայմաններում է գտնվել երկրի հյուսիսային նահանգների հայ բնակչությունը: Բավական է ասել, որ նույնիսկ 50-ական թվականներին Ղարադաղի շրջանի հայ գյուղացիների մեծ մասը չունեւր սեփական քարշող անասուններ: Ուրղության գյուղում այդ ժամանակ 23 ընտանիքներ ունեին... միայն 22 եզ: Մոտավոր հաշվումներով գյուղացիները վարձում են մի ջոֆթից¹⁷ էլ պակաս հողակտորներ, իսկ ունեւր գյուղացիներից յուրաքանչյուրը. վարձում էր 2 ջոֆթից ավելի հողակտոր: Քանի որ հայ գյուղացիներից շատերը իրենց սեփական բանող անասունները չունեին, նրանք չէին կարող քիչ թեւ շատ ավելի մեծ չափի հողակտորներ վարձել:

Աղքատ խավերից հետո, ըստ թվաքանակի երկրորդ խումբն են կազմում հայ գյուղացիների միջակ շերտերը: Նրանք համեմատաբար ավելի շատ են Փերիայի շրջանում: Սրանք այն խորդեմալեք-գյուղացիներն են, որ ունեն մինչև մեկ ջոֆթ հող: Միջակների շարքն են դասվում և լրացուցիչ հողակտորներ վարձող սակավահող գյուղացիները, ինչպես նաև զույգ եղ ունեցող և մի ջոֆթ հող մշակող հողազուրկները:

Գյուղացիական միջակ տնտեսությունները Քազազ, Քամարա, Ղարադաղ և Ռիզայի շրջաններում ավելի քիչ են, քան Փերիայի շրջանում:

Իրանի հայ գյուղական բնակչության ընդհանուր թվում ունեւր գյուղացիները աննշան տոկոս են կազմում և ներկայումս հանդիպում են միայն Փերիայի շրջանում: Նրանք առավելապես խորդեմալեքների, վարձակալ-գյուղացիների և խոշնեշիների ունեւր

¹⁷ Ջոֆթ (մի զույգ եզ)—մի օրում մի զույգ եզով վարելի հողակտորի չափ:

խափն են ներկայացնում և զբաղված են վարկատվությամբ, անստուններ վարձու տալով, վաշխառությամբ և այլն:

Հայ բնակչության ունեցվածքային անհավասարության մասին են վկայում Չհարմհուլի լրջանին վերաբերող հետևյալ տվյալները: Հարուստ քաղաքին ունեի 50—60 ոչխար, 1—2 ձի, երկու զուլդե, 3—4 կով, 5—6 գրաստ, 8—10 հավ, 2—3 ջրիբ այդի, 2—3 խաբբա¹⁸ վարելահող, 300—400 ծառ, 6—7 կով և այլ ունեցվածք ու եկամտի աղբյուրների իսկ աղքատ գյուղացին՝ ճերկու կտոր փալաս ու մի քանի մերկ մանուկներ, որոնց կլոր տարին կիսաքաղց էին պահում¹⁹:

Հայ գյուղացիության մեջ ունևորների ու աղքատների հարաբերակցությունը հետևյալն է. աղքատներ՝ 55%, միջակներ՝ 35%, ունևոր գյուղացիներ՝ 10%: Այս հարաբերակցությունը բնորոշ է Փերիայի շրջանին: Մյուս շրջաններում այն փոխվում է՝ միջակների ու լուսնևորների հաշվին նվազում է ունևոր գյուղացիության տոկոսը: Չունևորների թիվը հատկապես մեծ է Բուրվառի և Ղարադաղ շրջանների հայկական գյուղերում:

Ինչպես նախկինում, գաղութում համեմատաբար խոշոր սեփականատերեր են հայկական եկեղեցիները, ինչպես նաև դպրոցները, բարեգործական ընկերությունները և այլն: Զևականորեն հոգևոր ուսումնական հաստատությունների, որքանոցների, վանքերի և այլ հիմնարկների սեփականությունը համարվող հողերը նույնպես փաստորեն եկեղեցիներին են, և նրանց ականատեսներից առավելապես բարձրաստիճան հոգևորականությունն է օգտվում:

Այդ հողակտորների մեծ մասը գտնվում է Փերիայի շրջանում և պատկանում է Ամենափրկիչ վանքին, Նոր Զուղայի եկեղեցիներին, դպրոցներին, զանազան կազմակերպությունների և հիմնարկների: Այդ հողամասերի չափերի ու արժեքի մասին պատկերացում է տալիս ներբերյալ ցուցակը, որ կազմված է 1946 թ. հայերի այդ շրջանը հայրենադարձվելուց անմիջապես հետո:

Ինչպես երևում է ցուցակից, Նոր Զուղայի հայկական եկեղեցիներին, դպրոցներին ու մյուս հիմնարկներին են անցել հայրենադարձությունից հետո շրջանում մնացած 16 գյուղերից 9-ի հողաբաժինները: Դրանցից Բուլորտն գյուղի հողերը ամբողջությամբ պատկանում են Ամենափրկիչ վանքին ու դպրոցներին: Դրանց արժեքը կազմում է Փերիայի շրջանում Նոր Զուղայի եկեղեցիներին և

¹⁸ Խաբբան հողային չափի միավոր է: 1 խաբբան հավասար է 0,96 հա.:

¹⁹ Ավ. Նդգառյան, Իրանի Չհարմհուլ գավառը, էջ 48:

ումը	Ում է պատկանում	Հողի չափը	եկամուտը (հողավարձը)	Արժեքը
	Նոր Զուլայի ազգային դպրոցներին	5 6 մաս.	135 խարվար	58,335
	վանքի հոգև. սեմինարիային	33 խարբա	60	26,500
	»	1 6 մաս	27	11,667
	»	2/7	60	30,000
	»	3 դանդ	2—1/6	1,200
	»	46 ցոռ	15	17,500
	»	6 ցոռ	6	3,000
	»	2	6	3,000
	Կանանց բարեգործական ընկ.	2	6	3,000
	Աղվանյանցների ֆոնդին	2	4	2,000
	»	1	1 1/2	300
	Որբանոցին	1 մադրա	2—1/2	1,200
	Ս. Սարգիս եկեղեցի	14 ցոռ	3—1 1/2	1,750
	Ս. Լուսավորիչ եկ.	13 խարբա	38	19,000
	Ս. Ստեփանոսի եկ.	1/2	2	1,000
	Ս. Հովհաննես	1—1 1/2	4 և 1/2	2,250
	Ս. Աստվածամոր	1/2	3	1,500
	Ս. Ներսեսի եկ.	3/4	4	2,000
	Ս. Ստեփանոս եկ.	2—1/2	3	1,500
	Ս. Նիկողոս եկ.	1/2	2	3,000
	Ս. Մինաս	3	6	3,000
	Ս. Ստեփանոս	1/2	3	1,500
				192,202

Կողմ, ֆ. 57, Իրանա-Հնդկական թեմի առաջնորդի՝ կաթողիկոսին ներկայացրած 7 սեպտեմբերի 19
Հավելվածից: Խարվարը—կշռաչափ է, որը հավասար է 100 թավրիզյան մանի (բաթմանի), այսինքն
մանը—2,969 կգ:

այլ հիմնարկներին պատկանող բոլոր հողատարածությունների արժեքի գրեթե մեկ երրորդը:

Ղարադադի շրջանի երեք՝ Նորաշեն, Զիլակա և Հյուսիս գյուղերի հողերը գնված են հյուսիսային շրջանի բնակիչների նվիրատվություններով և Թավրիզի թեմական առաջնորդարանի անունով գրանցված են որպես վակֆային հողեր²¹:

Քաղաքաբնակ հայերի սոցիալական կազմը իրանում համապատասխանում է երկրում գոյություն ունեցող դասակարգային շերտավորմանը: Սակայն քաղաքային հայ բնակչության սոցիալ-տնտեսական դրությունը ևս իր յուրահատուկ գծերն ունի: Դրանցից մեկն այն է, որ քաղաքային հայ բնակչության մեջ խոշոր ձեռնարկատերերը անշշան տոկոս են կազմում: Տեղական գործարար շրջաններում հայերը հազվադեպ են միջին ձեռնարկատերերի դիրքից ավելի վեր բարձրանում: Այդ երևույթի պատճառը ամենից առաջ երկրում առհասարակ արդյունաբերական արտադրության թույլ զարգացած լինելն է, ինչպես նաև լայն գործարար ակտիվության բացակայությունը: Սակայն այս բացատրությունը հեռու է լիակատար լինելուց:

Հայերի մեջ խոշոր ձեռնարկատերեր չլինելու պատճառներից մեկն էլ տիրապետող ազգի ներկայացուցիչների համեմատությամբ նրանց իրավունքների սահմանափակումն է: Դրանցից զխավորը պետական ապարատի ու կառավարող վերնախավի հետ բավարար կապեր չունենալն է: Նման պայմաններում հայ ձեռնարկատերերը չեն կարող օգտվել այն արտոնություններից ու իրավունքներից, որ ունեն իրանական ազգային բուրժուազիայի ներկայացուցիչները և, հետևաբար, ի վիճակի չեն քիչ թե շատ կայուն դիրք գրավել երկրի տնտեսության մեջ:

Զի կարելի ուշադրություն չդարձնել նաև իրանի քաղաքային հայ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի մի այլ առանձնահատկության վրա: Բանն այն է, որ քաղաքաբնակ իրանահայերի մեջ մանր ձեռնարկատերերը մեծ տոկոս են կազմում: «Պարսկահայ տարեցույցի» տվյալների համաձայն քաղաքաբնակ աշխատող հայերի մեջ, օրինակ, մինչև 30-ական թվականները, մանր ձեռնարկատերերը կազմել են 15%: Քաղաքների հայ բնակչության մանր ձեռնարկատերերի տոկոսը մոտավորապես այդպիսին է նաև ներկայումս:

²¹ «Ամենուն տարեգրքը», 1958, էջ 431:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ քաղաքներում, հատկապես Քեհրանում, մանր ձեռնարկատերերի այդպիսի բարձր տոկոսը պատճառ է դարձել, որպեսզի արտասահմանյան մի քանի հեղինակներ իրենց աշխատություններում խեղաթյուրված պատկերացում տան հայ բնակչության սոցիալական կազմի մասին: Այսպես, էլվել Սաթթոնը, նշելով թե իբր քաղաքներում հայերը մեծ մասամբ զբաղված են առևտրա-ֆինանսական գործունեությամբ, անհիմն կերպով իրանի հասարակության մեջ հայերի դրուժյունը նմանեցնում է հրեաների վիճակին՝ Եվրոպայում²²:

Այդպիսի համեմատությունը վերապահումներով անգամ, քննադատության չի դիմանում: Մանր ձեռնարկատերերը երբեք չեն բնորոշել և չեն բնորոշում ղաղութի սոցիալական դեմքը: Մենք արդեն նշել ենք, որ իրանում դարեր շարունակ ղաղութի բնակչության մեծամասնությունը կազմել են գյուղացիությունն ու արհեստավորները: 20-ական թվականների սկզբին ղաղութի սոցիալական այս բաժանումը հիմնականում համընկնում էր ամրոզը երկրի սոցիալական բաժանմանը:

Ընդհուպ մինչև 1946 թ. երկրի հայ բնակչության մեծամասնությունը առաջվա պես կազմում էին գյուղացիներն ու արհեստավորները: Այդ ընդունում է անգամ ամերիկյան բուրժուական պատմաբան Վիլյամ Հյուդը: Ըստ նրա տվյալների, 40-ական թվականներին իրանի հայ բնակչության մեծ մասը ընդգրկված էր գյուղատնտեսության մեջ²³: Ամերիկյան մի ուրիշ հետազոտող՝ Լեոնարդ Բինդերը նշում է, որ ազգային բոլոր փոքրամասնություններից միայն հայերն են, որ զգալի թիվ են կազմում գյուղացիության և գյուղական բնակչության մեջ²⁴:

* * *

Իրանում հայերի համար զբաղմունք ընտրելու հնարավորությունները համեմատաբար սահմանափակ են: Այս առումով առավել դժվարին կացության մեջ էր հայ բնակչության կրթված մասը: Գլխավորապես նրա վրա են տարածվում պետական կառավարման հիմնարկներում, ղեկավար ապարատում հայերի մասնակցության իրավունքի սահմանափակումները: Իրանահայերի սոցիալ-տնտեսական դրության այս յուրահատկությունը մատնացույց է անում

²² L. P. Elwell-Sutton, *Modern Iran*, London, 1941, p. 15.

²³ William S. Haas, *Iran*, New-York, 1946, p. 108—109.

²⁴ Binder Leonard, *Iran; political development in changing society* New-Jersey, p. 162.

նույնիսկ Վիլյամ Հյուզը: Նրա խոսքերով ասած, մինչև XIX դ. իրանահայերը գտնվում էին սոցիալական ստորին դրուժյան (social inferiority) մարդկանց վիճակում: Նա նշում է նաև, որ հայերի դիրքը ամրացավ միայն XIX դ., երկրում օտարերկրյա տերությունների ազդեցության շնորհիվ: Հայերից ոմանք այդ շրջանում նույնիսկ բարձր պաշտոնների հասան²⁵:

XIX դ. հայազգի առանձին անհատներ, իրոք, բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական և ղեկավար մարմիններում: Հայերից ոմանք այդպիսի պաշտոններ էին զբաղում ընդհուպ մինչև մեր դարի 30-ական թվականները: Սակայն արդեն 20—30-ական թվականներից իր դիրքերն ամրապնդած իրանական ազգային բուրժուազիան և կալվածատերերը սկսեցին ավելի սահմանափակող քաղաքականություն վարել հայերի և ազգային այլ փոքրամասնությունների նկատմամբ: Իրանական իշխանությունների այդ քաղաքականության արդյունքները հատկապես զգալիորեն անդրադարձան հայ բնակչության սոցիալ-տնտեսական դրության վրա: Էլվել Սաթթոնը այս կապակցությամբ հավաստում է, որ «Հայերը բոլորից շատ տուժեցին... նրանց մերժում են պետական ծառայության ընդունել, և նրանք դժվարանում են որևէ տեղ աշխատանք գտնել²⁶»: Վիլյամ Հյուզը, իր հերթին նշում է, թե «Հայերը... ամենից շատ վնաս կրեցին այդ փոփոխությունների պատճառով»: Նա այդ երևույթը բացատրում է իրանական ազգային կադրերի աճով և ազգային հակասությունների սրումով²⁷:

Ստեղծված հանգամանքներում հայ քաղաքային բնակչության կրթված խավի ներկայացուցիչները ձգտում են ձեռք բերել այնպիսի մասնագիտություններ, որոնք հնարավորություն կտային հարմարվել երկրում ստեղծված պայմաններին և ապահովել ապրուստի միևնույնում:

Դրանից ելնելով, տեղի հայ մտավորականությունը սովորաբար ձեռք է բերում այսպես կոչված «ազատ մասնագիտություններ» — բժիշկ, փաստաբան, ուսուցիչ, ինժեներ և այլն:

Իրանում բազմակողմանի վիճակագրություն չլինելու պատճառով մենք պաշտոնական տվյալներ չունենք գաղութի մտավորականության թվի մասին: Այս բացը ինչ-որ չափով լրացնում են տեղի հայ պարբերական մամուլից քաղված տվյալները: Այսպես, 30-ական թվականներին Թավրիզի 1533 զբաղված հայերից (տղա-

²⁵ William S. Haas, p. 108—109.

²⁶ L. P. Elwell-Sutton, Modern Iran, p. 146.

²⁷ William S. Haas, Iran, p. 171—172.

մարդ և կին) 70-ը ուսուցիչներ էին, 27-ը՝ բժիշկներ, 48-ը՝ իրավաբան, երաժիշտ և այլ «ազատ մասնագիտությունների» ներկայացուցիչներ: Միասին նրանք կազմում էին աշխատող հայերի ընդհանուր թվի 10%-ը: Հայ բնակչության Թեհրանում կենտրոնանալուն զուգընթաց «ազատ մասնագիտությունների» ներկայացուցիչների թիվն այնտեղ համապատասխանաբար աճում էր: Ներկայումս մայրաքաղաքում ազատ մասնագիտությունների տեղ հայ մտավորականների թիվը մոտավոր տվյալներով կազմում է ոչ ավելի քան 10%:

Չնայած գոյություն ունեցող սահմանափակումներին, իրանահայերի մեջ, այնուամենայնիվ, կան որոշ թվով ծառայողներ: 20—30-ական թվականների համեմատությամբ ծառայող հայերի թիվը ներկայումս զգալիորեն նվազել է: Սակայն դա նկատելի է գրլխավորապես իրանական գերատեսչություններում, բանկերում և այլն: Դեռևս 30-ական թվականներին և, հատկապես, II համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո հայերի մի մասը աշխատանքի անցավ արտասահմանյան ֆիրմաների ու ընկերությունների տեղական մասնաճյուղերում²⁸: Ոչ մեծ թվով իրանահայեր, գլխավորապես Թեհրանում, ծառայում են տեղի սովետական հիմնարկներում՝ ուղա-իրանական բանկում, սովետական Վարմիր խաչի» ընկերության հիվանդանոցում և այլուր: Իրանական գերատեսչություններում հայ ծառայողները հիմնականում ցածր պաշտոններ են զբաղեցնում: Միջին պաշտոնների են միայն նավթային, ֆինանսական և այլ կարգի հիմնարկություններում աշխատող մի քանի հայ մասնագետներ:

Քաղաքարնակ զբաղված հայերի ընդհանուր թվում ծառայողները ներկայումս 10%-ից պակաս են: 20—30-ական թվականներին նրանք Թավրիզում կազմում էին 14,5, Արաքում՝ 14,22% և այլն: Ինչ վերաբերում է Իրանի հայ բանվորների թվին, ապա նրանք գաղութի բնակչության ընդհանուր թվի համեմատությամբ նշանակալից չափով ավելի մեծ տոկոս են կազմում, քան իրանցի բանվորները՝ երկրի արմատական բնակչության ընդհանուր թվի համեմատությամբ: 1956—1957 թթ. Իրանի բանվոր դասակարգը երկրում զբաղվածների թվի համեմատությամբ կազմում էր 23%: Այնինչ 30-ական թվականներին Թավրիզում բանվորները կազմում էին զբաղված հայերի 28%-ը: Ներկայումս, եթե նկատի առնենք,

²⁸ Binder, Leonard, Iran: Political development in changing society, p. 163.

որ գաղութի քաղաքաբնակ հայերի թիվը երկու անգամ գերազանցում է երկրի քաղաքային բնակչության տոկոսը, ապա քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում հայ բանվորների թիվը առնվազն կրկնապատկվել է: Հայ բանվորների խավը աճել է զբլխավորապես ի հաշիվ հողագուրկ կամ սակավահող գյուղացիների: Հինգսմին, պետք է նկատի ունենալ, որ քաղաք տեղափոխված, նախկինում գյուղատնտեսության մեջ աշխատող սակավահող հայ գյուղացիների (առանձնապես աղքատ խոշնեշիների) մի մասը ըստ էության միայն փոխեց իր բանվորական մասնագիտությունը:

Հայ բանվորության շրջանում վերջին տասնամյակներում ավելացել է գերազանցապես արդյունաբերական և շինարարական բանվորների թիվը: Այս տեսակետից հայ բանվորների կազմը մի քանի զծերով տարբերվում է իրանական բանվոր դասակարգի կազմից: Այսպես, հայերը ավելի շատ զբաղված են մշակող արդյունաբերության ու շինարարության մեջ, քան գյուղատնտեսություն:

Հայերի թիվը նշանակալից է նաև նավթարդյունաբերության բնագավառում և ֆաբրիկա-գործարանային պրոլետարիատի կազմում: Այսպես, «Ալիք» թերթի տվյալներով Աբադանի նավթարդյունաբերության մեջ վերջին տարիներս զբաղված էին մինչև 1.200 հայ բանվորներ: Իսկ ըստ պաշտոնական տվյալների, 1956/1957 թթ. Աբադանի նավթազտիչ գործարանում աշխատում էր ընդամենը 24,2 հազար մարդ:

Արդյունաբերության մեջ աշխատող հայերը ձեռք են բերել իրենց համար մի քանի նոր մասնագիտություններ: Բնականաբար, այստեղ որոշակի ազդեցություն ունի նաև Իրանի արդյունաբերության զարգացման բնույթը, նոր ճյուղերի երևան գալը: Եթե 20—30-ական թվականներին հայ բանվորները հիմնականում տիրապետում էին կաշեգործի, ծխախոտագործի, օճառագործի, պանրագործի, երշիկագործի, գորգագործի և այլ մասնագիտությունների, ապա վերջին տասնամյակներում նրանց միջավայրերում արդեն երևան են եկել ոչ քիչ թվով մետաղագործներ, մեխանիկներ, խառատներ, փականագործներ, էլեկտրիկներ, մոնտաժողներ և այլն:

Իրանում հայերի կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները անհրաժեշտաբար թելադրում են ձեռք բերել բանվորական այնպիսի մասնագիտություններ, որոնք կբավարարեն տեխնիկայի զարգացման ներկայիս պահանջները, կխթանեն նրանց որակա-

վորման բարձրացումը և այլն: Այսպես, Իրանի նավթարդյունաբերության մեջ հայ նավթագործներից շատերը տիրապետում են զանազան մասնագիտությունների, վարպետների և և՛ ամ մտնում են տեխնիկական միջին անձնակազմի մեջ:

Խուզիստանում, և հատկապես, Արագանում արտասահմանյան մոնոպոլիաների վարած քաղաքականության հետևանքով հայ բանվորները հաճախ ենթարկվում էին մասսայական գործազրկության: Անգլո-իրանական նավթային ընկերությունը, որին հետագայում փոխարինեց Միջազգային նավթային կոնսորցիումը, հետևողականորեն անց էին կացնում արտագրության ավտոմատացման և բանվորներին աշխատանքից ազատելու կուրս: Աշխատանքից ազատում էին գլխավորապես որակավորում չունեցող բանվորներին: 50-ական թվականներին ցրեցին այն նավթագործ բանվորներին (այդ թվում և հայերին), որոնք մասնակցել էին նավթարդյունաբերության ազգայնացման համար մղված շարժմանը: Այդ բոլոր արձակումների ժամանակ հայ նավթագործների մեջ աճեց «բանվորական արիստոկրատիայի» խավը:

Արդյունաբերական բանվորներից հետո ըստ թվի երկրորդ խումբը դաղութում կազմում են շինարար բանվորները: Նրանցից շատերը նույնպես հաղթահարել են հասարակ բանվորից մինչև բարձր որակավորում ստացած բանվորի անցած ճանապարհը: Հայ բանվորների որակավորման բարձրացմանը նպաստում է նաև աշխատանքը արտասահմանյան շինարարական ընկերություններում, որտեղ նրանք յուրացնում են արտագրության ժամանակակից մեթոդներ, հաղորդակցվում նոր տեխնիկային և այլն:

Շինարարական բանվորների խմբից հետո մեծ թիվ են կազմում տրանսպորտում, հատկապես՝ ավտոտրանսպորտում, զբաղված հայերը: Երկրում ավտոտրանսպորտի զարգացման դեռևս առաջին տարիներին տեղացի հայերից շատերը ձեռք բերեցին վարորդի, մեխանիկի, ավտովերանորոգողի և այլ մասնագիտություններ: Այսպես, 30-ական թվականներին թավրիզահայ 430 բանվորներից (տղամարդ և կին) 170-ը ունեին ավտոտրանսպորտային մասնագիտություն: Ներկայումս էլ զաղութում մեծաթիվ են վարորդները, մեխանիկները, ավտովերանորոգողները և այլն: Վարորդների ճնշող մեծամասնությունը գարաթատեր-ձեռնարկատերերից մեքենաներ է վարձում:

Հայերն աշխատում են նաև որպես գյուղատնտեսության բնագավառի բանվորներ: Հայ գյուղական բնակչության վարձով աշ-

խատող հիմնական մասը խոշնեշինների աղքատ խավերն են։ Նրանք որպես ժամանակավոր կամ սեզոնային բանվորներ գյուղերում վարձվում են տարրեր տեսակի աշխատանքների համար։

Հայերի մեջ նշանակալից թիվ են կազմում նաև արհեստավոր բանվորները, որոնց հիմնական մասը վարձով աշխատում է կարի, մորթու և կոշիկի արհեստանոցներում, ոսկերչական խանութներում, փոերում, հրուշակատներում և այլն։ Կանայք զբաղված են տնայնագործությամբ, քաղաքներում՝ ձեռագործով, իսկ գյուղերում՝ գորգագործությամբ։

Սպասարկման ու առևտրի ասպարեզում զբաղված են համեմատաբար ոչ մեծ թվով հայ բանվորներ (քիմիաքրման արհեստանոցներում աշխատողներ, խանութների բեռնակիրներ, զանազան մանր գործեր կատարող բանվորներ և այլն)։

Ոչ մեծ թվով հայ բանվորներ են զբաղված նաև լեռնարդյունաբերության մեջ (եթե հաշվի չառնենք նավթահանքերը)։ Այս բնագավառում նրանց սակավ զբաղվածության պատճառն այն է, որ հանքերի ու հանքահորերի մոտակայքում ընկած շրջաններում գրեթե բոլորովին հայեր չեն բնակվում։

Իրանահայ գյուղացիների հիմնական զբաղմունքը դարեր շարունակ եղել են հողագործությունն ու անասնապահությունը։ Նայած բնակլիմայական պայմաններին, նրանք զբաղված են եղել այգեգործությամբ, խաղողագործությամբ, բանջարա-բոստանային կուլտուրաների մշակությամբ, մեղվաբուծությամբ և այլն։ Բոլոր այս ճյուղերում իրանի հայ գյուղացիությունը զբաղված է նաև ներկայումս։

Գաղութում անասնապահությամբ են զբաղվում հիմնականում Փերիա, Քազազ, Քամարա և Բուրվառի շրջանների, ավելի պակաս՝ հյուսիսային նահանգների գյուղացիները։ Սակայն հայերը ընդհանրապես ավելի քիչ են զբաղվում անասնապահությամբ, քան տեղի գյուղացիները։ Ինչպես արդեն նշեցինք, դրա պատճառը արոտատեղիներ և ձմեռային արոտավայրեր չունենալն է։

Գաղութի բոլոր շրջաններում հողը մշակվում է պարզունակ ձևով։ Գյուղատնտեսական հիմնական գործիքները փայտե արորն ու փոցին են։ Բերքահավաքը կատարվում է ձեռքով, մանգաղի և գերանդու օգնությամբ։ Կալատեղերում մասամբ օգտագործվում են եզները, գրաստներն ու ջորիները, բայց բերքի կալսման աշխատանքի նշանակալից մասը, մասնավորապես ցորենի և այլ

մթերքների մաքրումը և չորացումը, նույնպես ձեռքով է կատարվում: Յուրենը մաղում են սովորական մաղի օգնությամբ:

Գյուղատնտեսական աշխատանքներում զբաղված են առավելագույն տղամարդիկ: Գոյություն ունի աշխատանքի բաժանում ըստ տարիքային առանձնահատկությունների: Կանայք հիմնականում զբաղված են տնային տնտեսության մեջ, նրանց մասնակցությունը դաշտային աշխատանքներին սահմանափակվում է միայն կալատեղիներում ցորեն մաքրելով:

Կանանց հիմնական զբաղմունքը գորգագործությունն է, որը տարածված է գրեթե բոլոր հայ գյուղերում: Սակայն այն հատկապես զարգացած է Քազազ, Քամարա, Գյափլա և Բուրվառի, ինչպես նաև Փերիա և Զհարմհալ շրջաններում: Արդյունաբերվում են հիմնականում ընտիր՝ խալիչ կոչված գորգեր, որոնց պատվիրատուները վաճառականներն ու գործարանատերերն են: Էժանագին գորգերը («կարպետներ»), տարբեր ծածկյունները, փսիաթն ու այլ իրերը գործածվում են տնային կարիքների համար:

Հայ կանանց ու աղջիկների հյուսած գորգերն ու գորգագործական այլ իրերը մեծ պահանջարկ ունեն և բարձր են գնահատվում տեղական շուկայում: Դրանք իրանում կոչվում են «Արմանի-բաֆ», որ նշանակում է «Հայկական գործվածք»²⁹:

Հայկական գյուղերում համեմատաբար քիչ են հողի ու գյուղատնտեսական արտադրության հետ չկապված այլ զբաղմունքները: Հյուսիսային շրջաններում այդպիսի զբաղմունքներ գրեթե չկան: Կան աննշան թվով վարպետ-արհեստավորներ, որոնք, որպես կանոն, բավարարում են իրենց գյուղերի պահանջները: Մյուս շրջաններում հայ բնակչության մեջ կան փոքր թվով առևտրականներ, որոնց գործունեությունը հիմնականում սահմանափակվում է այս կամ այն գյուղի շրջանակներով:

Հայաբնակ գյուղերում արհեստավորներն ու վարպետները բաժանվում են մի քանի մասնագիտությունների, որոնցից գլխավորը դարբինները, հյուսները, քարտաշները, ջրաղացպանները, կոշկակարներն ու վարսավիրներն են:

* * *

Հայ ձեռնարկատերերը զգալի տեղ էին գրավում Իրանի տնտեսության զարգացման մեջ:

²⁹ «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 103, Ավ. Նղզադյան, Իրանի Զհարմհալ գավառը, էջ 43:

Նպատակ շունենալով ցույց տալ երկրի տնտեսութեան կապիտալիստական զարգացման գործում հայերի մասնակցութեան դեմն ու աստիճանը (քանի որ այդ հարցը հատուկ ուսումնասիրութեան առարկա է), համառոտակի նկարագրենք Իրանի հայ ձեռնարկատերերի գործունեութիւնը 20—30-ական և, ըստ ունեցած նյութերի, հետագա տարիներին:

Իրանի հայ ձեռնարկատերերից շատերը օգտագործում էին ռուսական շուկայի հետ ունեցած վաղեմի կապերի միջոցով կուտակած իրենց փորձն ու գիտելիքները: Մագումով ռուսաստանցի կամ ժամանակին այնտեղ աշխատած անձինք սկզբում կազմեցին ձեռնարկատերերի այդ խմբի կորիզը: Պատահական չէ, որ հայերին պատկանող գործարանների ու ֆաբրիկաների մեծ մասը առաջ եկավ Թավրիզում և Իրանի հյուսիսի այլ կենտրոններում:

20-ական թվականներին շորս բաժնետերեր (հայեր և ռուսներ) Թավրիզում հիմնեցին բաժնետիրական «Պշելա» ընկերութիւնը, որը գլուխ բերեց մետաղյա մահճակալների ու ամանեղենի արտադրութիւնը: Հետագայում արդյունաբերութեան այդպիսի ճյուղ ստեղծվեց նաև Թեհրանում: Ընկերութեան անդամները միաժամանակ ծրարանյութեղենի արտադրութեան արհեստանոց բացեցին: Արտադրութեան մեջ զբաղված էր 18 բանվոր: «Պշելան» երկու մեծ խանութ ունեւր. մեկը՝ Թեհրանում, մյուսը՝ Թավրիզում:

Արդի կապիտալիստական ձեռնարկութիւններին առավել նման էին 1925 թ. Թավրիզում ստեղծված ծխախոտի ֆաբրիկան և օճառի գործարանը, որոնց հիմնադիրներն էին «Միր» ընկերութեան անդամ սալմաստցի Շահգեղեյան եղբայրները. որպէս հումք օգտագործվում էր Տրապիզոնից (Թուրքիա) ներմուծվող, ինչպես նաև տեղական ծխախոտը: Վերջինս աճեցվում էր Ռեզայե շրջանի Սհաթլու գյուղում Շահգեղեյան եղբայրների ունեցած հողատարածութիւններում: Օճառի պատրաստման համար անհրաժեշտ պարֆյումերային յուղը բերվում էր Գերմանիայից: Ընկերութեան ֆաբրիկայում այն ժամանակ կար 20 բանվոր: Ծխախոտային արտադրանքն ու օճառը Շահգեղեյան եղբայրները իրացնում էին Թավրիզում, Թեհրանում և այլուր:

1928 թ. մոտավորապէս նույն մասշտաբի մի ձեռնարկութիւն էին հիմնել Թավրիզում «Հիլալ» ընկերութեան անդամ հայերը: Նրանք բացել էին աղիքների մշակման գործարան, ուր զբաղված էին 15—20 բանվոր: Գործարանի արտադրանքը արտահանվում էր արտասահման: Այդ ժամանակ, ամեն տարի միայն Ամերիկա

էր արտահանվում 100—150 հազար աղիք, որն իրանի արտահանության ավանդական ապրանքներից մեկն էր:

20-ական թվականների վերջին Թավրիզում իրենց գործունեությունը ծավալեցին նաև Սահակյան եղբայրները: Նրանք հիմնեցին մի գործարան, որը 1930 թ. բաժանվեց չորս արտադրության՝ ալրաղաց, տնտառասղոցային, ձիթհանք և չոր մրգերի պատրաստման բաժանմունք: 1935 թ. Սահակյան եղբայրները բացեցին նաև գարեջրի գործարան՝ օրական 3000 շիշ գարեջրի կարողությամբ:

30-ական թվականների սկզբին մի խումբ հայեր Թավրիզում հիմնեցին «Օմիդ» կաշեգործարանը, որտեղ ընդգրկված էր 35 բանվոր: Գործարանը ամսական մշակում էր 1200 կովի և գոմեշի և 6 հազար ոչխարի կաշի: 1936 թ. այնտեղ արդեն աշխատում էր 70 բանվոր, իսկ նրա արտադրողական կարողությունը կազմում էր 40—50 հազար այծի և ոչխարի, ինչպես նաև 40 հազար կովի ու եզան կաշի:

1936 թ. տեղի հայ վաճառականներն ու մասնագետները կազմակերպեցին «Րաֆֆի» ընկերությունը, որը 1936 թ. հունվարին բացեց ալրաղաց գործարան:

Երկար տարիներ իրանի հյուսիսում մի քանի հայ ընտանիքներ զբաղված էին չոր մրգերի պատրաստությամբ: Չոր մրգեր պատրաստելու համար նրանք օգտագործում էին Մարաղայի շերջանում աճեցվող պտուղների ու խաղողի լավագույն տեսակները: Չոր մրգերի պատրաստությամբ և արտահանությամբ զբաղված էին Աֆթանդիլյանների, Բուդաղյանների, Հարությունյանների, Բադդասարյանների, Պատմագրյանների ու Արզումանյանների առևտրական տները: Ներկայումս էլ Թավրիզում և Մարաղայում հայերի ձեռքում է գտնվում չոր մրգերի արտադրության ու վաճառքի մեծ մասը:

Դեռևս XIX դ. Ռուսաստանից եկած հայերը բամբակազտիչ գործարաններ հիմնեցին Խորասանի նահանգի Սաբզեվար քաղաքում: Այդ գործարանները գոյություն ունեին մինչև 1933 թ. և փակվեցին այն բանից հետո, երբ բամբակի առևտուրը պետական մենաշնորհ դարձավ³⁰:

Հայերը մի շարք ձեռնարկություններ հիմնեցին նաև Արաքում: Այստեղ կար գորգագործական մի քանի ֆաբրիկա, որոնք պատկանում էին Կարակոզյանների, Թելֆեյանների, Թավթաշյան-

³⁰ «Ամենուն տարեգիրքը», 1958, էջ 387:

ների և հայ առևտրական այլ տներին: Այդ ֆաբրիկաներում վար-
ձու աշխատանքից բացի կիրառվում էր նաև քաղաքային և գյու-
ղական տնայնագործ-գորգագործների աշխատանքը: Այսպես,
Գլափլա, Քաղազ, Քամարա շրջանների, ինչպես նաև Արաքի գրեթե
բոլոր հայ ընտանիքները իրենց գործած գորգերը հանձնում էին
առևտրական այդ տներին: Համաշխարհային տնտեսական ճգնա-
ժամի տարիներին Արաքի գորգագործական ֆաբրիկաները փակ-
վեցին, բայց շնայած դրան, տնայնագործական գորգագործական
արհեստը շարունակում էր իր գոյությունը:

II համաշխարհային պատերազմի տարիներին Ղազվինի մա-
նածագործական ֆաբրիկայի տներն էր արդյունաբերող Քյոոզլլը-
յանը:

Թեհրանի՝ երկրի տնտեսական կենտրոն դառնալուց հետո
Թավրիզի և մյուս քաղաքների դերը նշանակալից չափով նվազեց:
Դեռևս 20-ական թվականների վերջին և 30-ական թվականներին
հայ ձեռնարկատերերից շատերը սկսեցին տեղափոխվել Թեհրան:
Տեղի հայ ձեռնարկատերերից տեղական մասշտաբով առավել խո-
շորն էր Ռոման Իսաևը (Իսայան), որը 30-ական թվականներին
հիմնեց առևտրական-շինարարական ընկերություններ:

Իսաևը Թեհրանում 1933 թ. ստեղծված իրանական առաջին
գարեջրագործարանի հիմնադիրներից մեկն էր: Միաժամանակ
մինչև 60-ական թթ. նա 4 հիմնարկների և իրանական 22 ընկերու-
թյունների բաժնետեր էր և դրանցից մեծ մասի դիրեկտոր-կարգա-
դրիչը:

Գաղութի մասշտաբով խոշոր ձեռնարկատերեր էին արդեն
հիշատակված Սահակյանների, ինչպես նաև Սարգսյանների, Թով-
մասյանների, Դավիթխանյանների և Աբրահամյանների ընտանիք-
ները: Միջին մասշտաբի ձեռնարկատերեր էին Ֆրանգյանների,
Միքայելյանների և Արզումանյանների ընտանիքները:

Սահակյանների, Սարգսյանների, Թովմասյանների, Դավիթխան-
յանների և Աբրահամյանների ընտանիքները իրենց կապիտալ-
ները ներդրել էին մի քանի արտադրաճյուղերում, որոնցից առավել
մեծը գինի-օղի արդյունաբերող հիմնարկներն են, գարեջրի, լի-
մոնադի գործարանները և այլն: Ֆրանգյանների ընտանիքին է
պատկանում Թեհրանի կաշեգործարաններից մեկը, իսկ Միքայել-
յաններին ու Արզումանյաններին՝ մամթեքների ֆաբրիկաները:

Թեհրանում մանածագործական ֆաբրիկա է հիմնել Ղազվի-
նից այդտեղ փոխադրված Քյոոզլլյանը:

Հայ սեփականատերերինն էն «Մարմար», «Նադերի» հյուրանոցները, «Էյֆել» կինոթատրոնը, «Շիմրան», «Նադերի» սրճարանները։ Մի քանի հայեր տարբեր բնույթի միջին ու մանր կարգի իւանութների տեր են։ Դրանցից մի քանիսը ավելի մեծ խանութների, ռեստորանների և սրճարանների բաժնետերեր են։ Թեհրանցի հայերը ունեն նաև ավտովերանորոգման արհեստանոցներ, գարաժներ, կենցաղ-սպասարկման արհեստանոցներ և այլն։

Հայ ձեռնարկատերերի մեջ, ինչպես և ամբողջ բուրժուազիայի շրջանում, վերջին տասնամյակներում որակական փոփոխություններ են կատարվել։ Եթե 20—30-ական թվականներին մասնավոր ձեռնարկատերերի շրջանում հիմնականում իշխում էին առևտրական տները, ապա ներկայումս առևտրական բուրժուազիայի տեղը զրավել է արդյունաբերական բուրժուազիան։

* * *

Հայերի աշխատավորական խավերը իրանում գտնվում են ծանր վիճակում։ Այս իմաստով նրանք կիսում են երկրի աշխատավոր բնակչության ճակատագիրը։

Իրանում կենսական մինիմումը 1936/37 թթ. պաշտոնապես որոշվեց 198,8 ռիալ։ 1945/46 թթ. այն հավասար էր 1753, 1953/54 թթ.՝ 1964, 1959/60 թթ.՝ 2938, 1960/61 թթ.՝ 3350 ռիալ³¹։ Բազմակողմանի վիճակագրական տվյալների բացակայության պատճառով դժվար է որոշել իրանցի բանվորների՝ այդ թվում և տեղի հայերի աշխատավարձի չափը՝ նայած նրանց որակավորմանը և արդյունաբերության այս կամ այն բնագավառում աշխատելու հանգամանքին։ Միայն արդյունաբերության հիմնական ճյուղերի բանվորների ամսական միջին դրույքների մասին եղած տվյալներն են հնարավորություն տալիս որոշ պատկերացում կազմելու իրանի բանվորների աշխատավարձի չափի մասին։

Ըստ այդ տվյալների, օրինակ, 1959/60—1960/61 թթ. արդյունահանող և մշակող արդյունաբերության բանվորների ամսական միջին աշխատավարձը (նայած բնագավառին) տատանվել է 1216—3312 և 960—2250 ռիալից մինչև 1344—3817 և 1200—2250 ռիալի սահմաններում։ Քանի որ հայերը առավելապես ընդգրկված են մշակող արդյունաբերության մեջ, ապա նրանց աշխատավարձային դրույքները բարձր են իրանցի այն բանվորների դրույքներից, որոնք աշխատում են արդյունահանող արտադրու-

³¹ III. М. Бади, Рабочий класс Ирана, стр. 61.

թյան մեջ: Այս կապակցությամբ հայ բանվորների աշխատավարձի չափը որոշելիս կարելի է հիմք ընդունել մշակող արդյունաբերության մեջ աշխատող բանվորների միջին աշխատավարձը, այսինքն՝ 1959—1961 թթ. վիճակով 2264—2580 դրամ:

Չնայած սրան, թվելի սլարգ համադրումն անդամ ցույց է տալիս, որ Իրանի հայ բանվորների մեծամասնությունը չի ապահովում իր ապրուստի նվազաչափը:

Հայ բանվորների, ինչպես նաև քաղաքային հայ բնակչության շունեոր խավերի վիճակը ավելի է ծանրանում նրանց աշխատանքի, կյանքի և բնակարանային ծանր պայմանների հետևանքով: Ապահովագրության սխտեմը, ութժամյա բանվորական օրն ու աշխատանքային այլ օրենքներ Իրանում սկսել են իրագործվել միայն 40—50-ական թվականներից:

20—30-ական թվականներին, իսկ մի շարք հիմնարկներում նաև պատերազմի տարիներին, աշխատանքային օրը 12—14 ժամ էր տևում: Նույնիսկ ներկայումս արդյունաբերության մի քանի ճյուղերում (շինարարության, տեքստիլ, քիմիական, պարֆյումերային) բանվորները աշխատում են 9 և ավելի ժամ: Տասներկու ժամ են աշխատում տնայնագործական արհեստանոցների բանվորները: 12-ժամյա աշխատանքային օրը «նորմալ վիճակ» է համարվում նաև տաքսիների վարորդների համար³²:

Մի շարք հիմնարկներում բանվորներին զրկում են հանգրստյան օրերից և արձակուրդներից: Արդյունաբերության շատ ճյուղերի բանվորների վրա դեռևս չի տարածվում սոցիալական ապահովագրության օրենքը:

Հայ բանվորների մի մասը տնտեսական ծանր կացության պատճառով չի կարող սեփական բնակարան ձեռք բերել և ապրում է վարձու սենյակներում:

Հայ գյուղացիների եկամուտների մասին պատկերացում են տալիս 30-ական թվականների Չհարմհալի շրջանի վերաբերյալ «Ալիք» թերթի հրատարակած տվյալները: Հողի անբերրիության պատճառով գյուղացին հազիվ էր կարողանում իր ցանածից 4—5 անգամ ավելի հավաքել: Բերքի առատ տարիներին նա ցանածից 6—7 անգամ ավելի էր հավաքում: Մեկ խաբբայի վրա գյուղացին տարեկան (աշնանն ու գարնանը) պիտի ցաներ 200—300 շահա-

³² А. И. Шахиде, Рабочее и профсоюзное движение в Иране после второй мировой войны, 1946—1953 гг., Баку, 1965, стр. 32.

կան լիտր³³ սերմացու, հետևաբար հունձի ժամանակ լավագույն դեպքում նա մեկ խաբբայից ստանում էր 800—900, վատթար դեպքում՝ 550—700 լիտր հացահատիկ:

Ինչպես էր բաշխում գյուղացին ստացած բերքը: Նա սերմացուի համար թողնում էր 225 լիտր, օգնող բանվորին՝ վճար՝ 100 լիտր, տավարը արածացնողին՝ 55 լիտր, ընտանիքին՝ հացի՝ 210 լիտր, շնախատեսված ծախսեր (անասնակեր)՝ 25 լիտր, Այգ բոլորը կադմում էր 835 լիտր: Այսպիսով, նույնիսկ միջակ գյուղացին միայն լավագույն բերքային տարիներին կարող էր ծախսերը հողալ: 30-ական թվականներին Փերիայի շրջանում առավել ունեվոր գյուղացին սերմացուից ու հացահատիկից բացի ընտանիքի կերակրման համար 3—4 խարվար խնայած ցորեն ու գարի էր ունենում:

Հայ գյուղացիական աղքատ խավերի գրությունը վատթարացավ II համաշխարհային պատերազմի տարիներին, որի հետևանքով էլ ծայր առավ նրանց զանգվածային գաղթը դեպի քաղաք, Ետպատերազմյան տարիներին նույնպես զգալի բարելավումներ տեղի չունեցան: Նույնիսկ «Ալիք» թերթը, աշխատելով իր կողմը գրավել աշխատավոր զանգվածներին Ղարաբաղի հայկական գյուղերի աղքատ գյուղացիության 1954 թ. վիճակի մասին գրում էր. «...բնակչության կեսից ավելին միայն տարվա վեց ամիսներին հաց ունի, մյուս ամիսներին ապրում է պարտքով և կամ թե մի կերպ կարճում է իր օրը... Ամեն ձմեռ որոշակի թվով տղամարդիկ աշխատանք ճարելու համար գնում են Թեհրան և այլ վայրեր...»³⁴:

Եթե գյուղացի տղամարդկանց մի մասը լրացուցիչ վաստակ է որոնում քաղաքներում, ապա մյուս մասը ձգտում է այն ճարել իրենց բնակավայրում: Այդպիսի վաստակի աղբյուր են ճանապարհաշինական աշխատանքը, անասուն արածացնելը և այլն: Ինչ վերաբերում է կանանց, ապա նրանք ընտանեկան եկամտին լրացուցիչ միջոցներ են բերում գորգագործությամբ:

Իրանի հայ գյուղացիության համար ծանր բեռ են հարկերը: Հարկերից առավելագույն տարածված է վարձավճարի մասնատրական սխտեմը: Վարձակալող գյուղացիները կավածատիրոջը տալիս են վարձված հողերից ստացվող բերքի որոշակի մասը:

³³ Տեղի հայերը լիտր են կոչում բաթմանը (մանր): Շահական մանը հավասար է 5,939 կգ (6 կգ):

³⁴ «Ալիք», 1954, 11 փետրվարի:

Վարձավճարի չափը մեծ մասամբ կախված է հողի բերրիությունից, այս կամ այն հողակտորի օգտագործման ձևից (ջրովի կամ անջրդդի) և այլ գործոններից: Հաճախ կալվածատերերը վարձակալվող հողակտորի վճարը որոշելիս նպատակ են հետապնդում գյուղացիներին կապել հողին:

Այդպես էին վարվում, օրինակ, բախտիարի խաները Չհարմհալում: Այդ շրջանի գյուղացիների մի մասը կալվածատիրոջն էր տալիս բերքի 1/4-ը³⁵: Փերիայի շրջանում, որտեղ հողն ավելի բերրի է, կալվածատերերը ստանում էին և ներկայումս էլ ստանում են բերքի 1/3-ը: Վարձակալող գյուղացիների վիճակը դժվարանում է այն պատճառով, որ, ինչպես արդեն նշվեց, նրանց մեծամասնությունը զուրկ է բանող անասուններից: Նրանցից շատերը վարձած մի զույգ եզան դիմաց ստիպված են հողատիրոջը վճարել իրենց բերքի կեսը:

Անհամեմատ ավելի վատթար պայմաններում են ենթավարձակալ-գյուղացիներն ու խոշնեշիների աղքատ մասը: Նրանք կազմում են գյուղացիության ամենաընչազուրկ այն խավը, որն զբաղվում է վարձու աշխատանքով կամ բատրակությամբ:

Չնայած խորդեմալեք գյուղացիների դրուժյունը ավելի լավ է, քան աղքատ խավինը, այսուհանդերձ, նրանք ևս ազատ չեն կալվածատերերի, պետության և առևտրա-կոմպրադորական տարրերի շահագործումից: Նրանց նշանակալից մասը տալիս է բերքի մեծ բաժինը կալվածատերերին կամ կուլակներին:

Որպես օրինակ բերենք Չհարմհալի շրջանի Հսիջիաբադ գյուղի հայ գյուղացիների 30-ական թվականին տված վարձավճարի վերաբերյալ տվյալները: Տեղի հողատեր-արքաբները (հողը սպառկանում էր բախտիարի 3 խաների) բերքի 1/3-ից բացի այգիների ամեն մի ջրիբից ստանում էին 25 դրան (ռիալ)³⁶, 1 կովից՝ 2 դրան, 1 ձիուց՝ 2 դրան, մեկ ոչխարից ու մեկ այծից՝ 10 շահի³⁷:

Այստեղ գյուղացին ամեն տարի աճեցնում էր 36 հազար լիտր ցորեն, գարի և հացահատիկային այլ կուլտուրաներ, որը դրամական արտահայտությամբ կազմում էր 54 հազար դրան: Այգիներից նա ստանում էր 12 հազար դրան, անասնապահությունից և ալ-

³⁵ Ավ. Նդգարյան, Իրանի Չհարմհալ գավառը, էջ 40:

³⁶ Ղրանը դրամական միավորի հին անվանում է, հավասար է 1 ռիալի և լայնորեն գործածական է առօրյայում: 10 ռիալը կազմում է 1 թուման:

³⁷ Շահին իրանական դրամի հին անվանումներից մեկն է, հավասար է 0,05 ռիալի:

նից՝ 4500 ղուան: Այդ ամենը միասին կազմում էին 70500 ղուան: Հողատիրոջը գյուղացին վճարում էր 12 հազար լիտր հացահատիկ (27 հազար ղուան), այգիների համար՝ 2500 ղուան, որպես հողահարկ՝ 3600 լիտր հացահատիկ (720 ղուան), անասունների համար՝ 950 ղուան: Ընդամենը 30870 ղուան: Այսպիսով, բոլոր տեսակի վարձավճարները կազմում էին բերքի 44%-ը:

Այդ տարիներին Փերիայի շրջանում գյուղացիների վիճակը քիչ էր տարբերվում Զհարմհալի և հայկական այլ բնակավայրերի գյուղացիների վիճակից: Այդ շրջանի գյուղացիների 99%-ը պարտքեր ունեին: Հող ունեցողներն էլ տարեցտարի վաճառում էին իրենց հողակտորները՝ պարտքերը վճարելու համար: Հաճախ 50 թուման պարտքը վճարելու համար գյուղացին վաճառում էր ունեցվածքն ու մեկնում էր քաղաք: Նույնիսկ հարուստ գյուղացին ամեն տարի շուկա կարող էր տանել ընդամենը 10—15 ոչխարից ոչ ավելի, որից ստացված գումարով հոգում էր ընտանիքի ծախսերն ու վճարում հարկերը:

Վաղուց ի վեր իրանում գոյություն ունեին աշխատանքով վճարելու՝ պարհակի, հարկի ու տուրքի զանազան ձևեր: Դրանք այս կամ այն ձևով գոյություն ունեին նաև հայաբնակ բոլոր գյուղերում: Գյուղացին պարտավոր էր կալվածատիրոջը տալ հարդ, կանաչ և չոր խոտ, վառելիք, ձու, հավեր, ոչխարներ, հատուկ հարկ վճարել արշառների համար: Ի լրումն այս ամենի, նա պետք է տարեկան 20—40 օր ձրի աշխատեր արքաբի համար՝ շինարարական վերանորոգման և այլ աշխատանքներ կատարելու:

Աշխատավճարի, պարհակի, հարկ ու տուրքի այդ տարրերը դադարեցին գոյություն ունենալ միայն հողային ռեֆորմի իրագործման ընթացքում:

Վարձակալ գյուղացիները հարկ են վճարում նաև եկեղեցուն, դպրոցներին և այն հիմնարկներին, որոնց տիրապետության տակ է գտնվում հողը:

Պետական հարկատվության սխտեմը արդի իրանում ենթարկվել է մի քանի փոփոխությունների³⁸: Դեռևս 20-ական թվականների սկզբին, ինչպես և նախկինում, պետությունը հողային հարկը անմիջականորեն գանձում էր գյուղացիներից՝ բերքի 1/10-ի

³⁸ См. В. С. Глухoded, Начальный период развития прямого обложения в современном Иране, сборник «Иран», стр. 45—47; Ш. М. Бади, Аграрные отношения в современном Иране, стр. 89—94.

և ավելի մեծ չափով: Մի քանի այլ հարկերի հետ մեկտեղ հողային հարկը մտնում էր տվյալ գյուղից գանձվող մյուս հարկերի ընդհանուր գումարի մեջ: 1926 թ. գյուղերի հարկը սկսեցին վճարել իրենք կալվածատերերը: Մեծ մասամբ այդ հարկը կազմում էր կալվածատիրոջ ընդհանուր եկամտագումարի միայն մի քանի տոկոսը: Սկսած 30-ական թվականներից այն ստանում է հողի սեփականատերերից գանձվող եկամտահարկի ձև:

Եկամտահարկը տարածվում է նաև քաղաքային բնակչության վրա: Չնայած Իրանի հարկային քաղաքականության սոցիալական էությունը բացասում է տիրապետող դասակարգերի, տվյալ դեպքում՝ բուրժուազիայի և քաղաքների ունեւոր խավի թեկուզ փոքրինչ զգալի ծանրաբեռնումը, սակայն քաղաքային բնակչության լայն զանգվածների աղքատությունը հնարավորություն չի տալիս նրանցից ևս բարձր հարկեր գանձել: Այսպես, բնակչության պրոլետարական շերտերի եկամուտը հաճախ ցածր է չհարկվող նվաղաչափից: Ինչ վերաբերում է հայ բանվորներին, ապա նրանցից հիմնականում հարկվում են նավթային-մշակող արդյունաբերության և տրանսպորտի բնագավառում աշխատող, համեմատաբար բարձր վճարվող բանվորները:

Բացի պետական հարկերից, քաղաքային հայ բնակչությունը վճարում է նաև գաղութի տեղական թեմական մարմինների կողմից դրված այսպես կոչված ծխի հարկ, որը մտցված է 1947 թ.: Սրա միջոցով հայթայթված գումարները նախատեսվում են դրպրոցներին և գաղութի մյուս հիմնարկներին օժանդակելու համար: Սակայն բնակչության նշանակալից մասը դժվարանում է վճարել ինչպես պետական հարկերը, այնպես էլ ծխահարկը: Այսպես, Թեհրանի ծխական խորհրդի տվյալների համաձայն 1955 թ. քաղաքի 8 հազար հայ ընտանիքներից 2 հազարը որպես չունեւորներ չեն վճարել այդ հարկը:

Իրանում գյուղացիների ուսին ծանրացած էր նաև վաշխառուների լուծը: Ապրուստի բավարար միջոցներ չունենալու պատճառով գյուղացին հարկադրված է դիմել վաշխառուին (միևնույն կալվածատիրոջը, կուլակին, կրպակատիրոջը և այլն), որպեսզի ստացած վարկով ապրի մինչև նոր բերքը: Ճեմեն գարնան պես անցյալ տարի ևս գյուղերի բնակչության մեծամասնությունը ենթակա էր այս դառն իրականության: Ընտանիքի պետքերը գոհացնելու համար, նա վաճառում է իր հացի անհրաժեշտ պաշարը և գարնանը ստիպված է բարձր արժեք վճարելով ձեռք բերել իր ուտելիքը: Ահա

այս ժամանակ է, որ հացահատիկը մի քանի նյութապաշտ տրզ-րուկների ձեռքում գտնվելով, սկսում է արժեքի գլխապտույտ վե-րելքը, դարնան հացահատիկի պակասը նորույթ չէ, միշտ շոքել է խեղճ ու կրակ հողագործի առաջ, Լրբեմն խլելով մեծ թվով զոհեր, որոնք խոտ ուտելուց ու քաղցից մահվան գիրկն են անցել:

1954 թ. հարկերի ու վաշխառության հետևանքով Ղարադաղի հալ բնակչությունը հազիվ էր քարշ տալիս իր գոյությունը: «Բնակչության կեսից ավելին, տարվա մեջ միայն վեց ամսվա հաց ունի, մնացած ամիսներին՝ ապրում է պարտքով, կամ մի կերպ քաշ է տալիս իր օրը: Մութն ընկնելուն պես քնում են, որովհետև քար-յուղը ծախվում է եռապատիկ արժեքով, շատերն օջախում վառ-ված փայտի լույսով են բավարարվում: Թեյ չեն խմում, որովհետև չարաշահող ձեռքերը շաքարի կիլոն ծախում են 60 դիալով»³⁸ :

Այսպիսով, 20-ից 60-ական թվականների միջև ընկած շրջա-նում իրանահայերի սոցիալական ու տնտեսական կյանքում նշա-նակալից տեղաշարժեր ու որակական փոփոխություններ են տեղի ունեցել: Սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից իրանա-կան հասարակության համեմատ, ամբողջությամբ վերցրած, գա-ղութը հասել է ավելի բարձր աստիճանի: Այդ, մասնավորապես, դրսևորվում է քաղաքային և գյուղական բնակչության թվական հարաբերակցությամբ, գաղութում բանվորների համեմատաբար բարձր տոկոսով և այլ փաստերով:

Իրանահայ գաղութի սոցիալ-տնտեսական զարգացման յուրա-հատուկ պայմանների հետևանքով հայերը իրանական հասարա-կության սոցիալական կառուցվածքի մեջ զբաղեցնում են միջին և ստորին օղակները:

Իրանահայերի տնտեսական վիճակը ընդհանրապես և ամբող-ջությամբ համապատասխանում է նրանց սոցիալական դրությունը: Հայերի շրջանում գոյություն չունեն խոշոր կարողության տեր ան-ձինք, բայց կան զգալի թվով միջին ունեցվածքի տեր մարդիկ:

38- «Ալիք», 1954, 11 փետրվարի:

Թեմական կառուցվածքը: Թավրիզի, Իրանա-Հնդկական և Թեհրանի
քաները: Գաղութի քաների անառաւումը էշմիածնից: Իրանափայտի
ընտանեկան-ժառանգական իրավունքը: Հայկական դարձներին ներ-
քին ինքնավարությունը: Հայե-ի ներկայացուցչությունը մեջխում:
Իրանաճայերի իրավունքների սահմանափակումները:

Իրանահայերի իրավական դրույթյան հիմքը կրոնա-եկեղեցա-
կան ինքնավարությունն է: Ինքնավարության այդ ձևը գաղութում
գոյություն ունի XI դ. ի վեր, երկրում առաջին հայկական գաղթ-
օջախների սկզբնավորման օրից: Գաղութն ունեցել է ինքնավա-
րության սեփական մարմինները՝ թեմական առաջնորդարանները:
Սկսած XX դ. դրանք գործում են թեմական կամ համայնքային
խորհուրդների ձևով:

Իրանահայ գաղութի, ինչպես նաև հայկական մյուս գաղթա-
վայրերի թեմերը միշտ ենթարկվել են հայկական եկեղեցու մայր
աթոռին՝ կաթողիկոսությանը: XII դ. սկզբից մինչև XV դ. 40-ական
թվականները, նրանք ենթարկվում էին Հոմեկլային, որտեղ այդ ժա-
մանակ գտնվում էր կաթողիկոսությունը: 1441 թ. երբ հայոց եկե-
ղեցու կաթողիկոսական աթոռը կրկին հաստատվեց էշմիածնում,
Իրանում գտնվող թեմերը ենթարկվեցին նրան:

Քանի որ այդ ժամանակ էշմիածինը գտնվում էր պարսից
տիրապետության ոլորտում, ապա պարսկական կառավարողների
«գրովն և հրամանուն նստիւր կաթողիկոսն, և անարգելօրեն վա-
րէր զիշխանութիւնն իւր յազգս Հայոց»³⁹,

Հոմեկլան, ապա և էշմիածինը, թեմերի և նվիրակությունների
շրջաններն էին ուղարկում իրենց ներկայացուցիչներին՝ թեմական
առաջնորդներին: Գաղութի իրավական դրույթունը ամրապնդված
էր շահական մի շարք ֆեոմաններով (հրովարտակներով) և այլ
փաստաթղթերով: Իրանական իշխանություններն, իհարկե, ել-
նելով երկրի ներքին ու արտաքին դրույթունից պատմական տար-
բեր ժամանակաշրջաններում հաշվի էին նստում գաղութի ինքնա-
վարական մարմինների հետ, արձագանքում նրանց խնդիրներին

³⁹ Սիմեոն Երևանցի, Զամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 57.

ու միջնորդութիւններին: Իրանահայ գաղութի նկատմամբ պարսից պետութեան քաղաքականութիւնը միշտ էլ համապատասխանել է երկրի կառավարող շրջանների շահերին: Այդ իսկ պատճառով իրանահայ գաղութի իրավական դրութիւնը ոչ միշտ է եղել կայուն. պատերազմների, ֆեոդալական երկպառակութիւնների տարիներին երկրում ստեղծված հեղհեղուկ վիճակի հետևանքով սովորական երևութ էին իրավազրկութիւնն ու կամայականութիւնները: Իրադրութիւնների այս մթնոլորտում հասկանալի էր այն համառ պայքարը, որ տեղի հայ բնակչութիւնը մղում էր իր ֆիզիկական ու հոգևոր գոյատևման համար:

Մինչև XX դ. 40-ական թվականները գաղութը պահպանում էր իր պատմական բաժանումը երկու թեմերի՝ Թավրիզի (Ատրպա-աականի) և Իրանա-Հնդկականի: Թեմերի կենտրոնները համապատասխանաբար Թավրիզն ու Նոր Զուղան էին: 1944 թ. նախկինում Իրանա-Հնդկական թեմի մեջ մտնող համայնքների մի մասից կազմվեց նոր՝ Թեհրանի թեմը, որի կենտրոնը գտնվում է Թեհ-րանում:

Մինչև 1900-ական թվականները թեմերի ղեկավարութիւնը շարունակում էր մնալ թեմական առաջնորդների ձեռքում: Հետագայում մշակվեցին թեմական կանոնադրութիւններ, որոնցով հաստատվեց ընտրութիւնների կարգը: Դրա հետևանքով, տեղա-կան աշխարհիկ մարմինների գոյութեամբ որոշ չափով սահմանա-փակվեց թեմական առաջնորդների իշխանութիւնը:

Թեմական կանոնադրութեան համաձայն թեմերում ստեղծվե-ցին պատգամավորական ժողովներ: Ընտրովի այդ մարմինները որոշակի ժամկետներում նորոգվում էին և դարձան թեմերի յուր-օրինակ գերագույն օրենսդիր մարմիններ: Նրանց վերապահվեց թեմական կամ համայնքային խորհուրդներ ընտրելու իրավունքը, իսկ այդ խորհուրդները հանդես էին գալիս որպես թեմերի գործադիր գերագույն մարմիններ:

Թեմական և համայնքային խորհուրդները կազմված էին աշ-խարհիկ անձանցից: Խորհրդի նախագահը թեմական առաջնորդն էր: Նա՝ ունեւր իր հոգևոր տեղակալը, որի վրա էր դրված խորհրդի նիստերին մասնակցելու, իսկ թեմական առաջնորդի բացակայու-թեան դեպքում՝ նրան որպես խորհրդի նախագահի փոխարինելու պարտականութիւնը:

Թեմական իշխանութիւնները ի դեմս գործակալութիւնների իրենց ներկայացուցիչներն ունեին տեղերում: Գործակալութեան

նախագահն էր տեղի քահանան, որը տվյալ դեպքում կոչվում էր գործակալ:

Թեմական առաջնորդներն ընտրվում էին թեմական կամ համայնքային խորհուրդներում և հաստատվում կաթողիկոսի կողմից: Իրանական պետությունը ճանաչում էր թեմական կանոնադրությունը, սակայն թեմական առաջնորդների ընտրությունն ու նշանակումը առանց իրանական իշխանությունների գիտությունն ու համաձայնության չէր կատարվում: Թեմական կառավարման այս կարգը աննշան փոփոխություններով ուժի մեջ է մինչև այսօր: Սակայն թեմական կառուցվածքը այս կամ այն թեմում կանոնադրական ու կազմակերպչական բնույթի որոշ տարբերություններ ունի:

Թավրիզի թեմը միավորում է հյուսիսային նահանգներում ապրող հայ բնակչությանը: Մինչև 1833 թ. այն կոչվում էր Ատերպատականի թեմ, որի կենտրոնն էր սուրբ Թադևոսի վանքը՝ Մաքուի շրջանում: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո Ատրպատականի թեմի կենտրոնը Սուրբ Թադևոսի վանքից փոխադրվեց Թավրիզ: Այնուհետև 1833 թ. սկզբնավորվում է Թավրիզի թեմը, որը ավանդաբար անվանում են նաև Ատրպատականի թեմ:

1901 թ. թեմը մշակեց իր կանոնադրությունը⁴⁰: Թավրիզի թեմական խորհրդի բնորոշ առանձնահատկությունն նրանում է, որ նահանգում Վայկական բնակավայրերի (Ռեզայե, Սալմաստ, Ղարադաղ, Մարադա և այլն) ղեկավարությունից բացի նա միաժամանակ կատարում է Թավրիզի քաղաքային գործադիր ժողովի և սրան հարակից մարմինների գործառնությունները⁴¹: Թավրիզի թեմի ներկայացուցչական ժողովը ընտրվում է չորս տարին մեկ և բաղկացած է 16 անդամից, որոնցից 8-ը գավառներից են, 6-ը՝ Թավրիզից, և 2-ը՝ եկեղեցու կողմից: Ժողովի նախագահը, թեմական առաջնորդը կամ նրա հոգևոր տեղակալն են, որոնք տվյալ դեպքում խորհրդակցական ձայնի իրավունք ունեն: Ժողովի կողմից ընտրված թեմական խորհուրդը բաղկացած է 6 անդամից: Խորհրդի յոթերորդ անգամը թեմական առաջնորդը կամ նրա հոգևոր տեղակալն են՝ վճռական ձայնի իրավունքով:

1913 թ. մինչև 1948 թ. Թավրիզի թեմական առաջնորդը արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանն էր: Նրա մահից հետո մինչև 1949 թ. վերջը այդ պարտականությունը համատեղաբար

⁴⁰ «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 149—150:

⁴¹ ՀՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 289, թ. 3:

կատարում էր Թեհրանի թեմի այն ժամանակվա առաջնորդ եպիսկոպոս Ռուրեն Դրամբյանը:

1961 թ., երբ թեմը ապօրինաբար անջատվեց Անթիլիասի (Բեյրութ-Լիրանան) Կիլիկյան կաթողիկոսության կողմից, Թավրիզի թեմական առաջնորդներն սկսեցին նշանակվել Անթիլիասից⁴²:

XX դ. վերջից ե, հատկապես, թեմական կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո, ընդհուպ մինչև 1936 թ., Թավրիզի թեմը կարևոր դեր է խաղացել երկրի հայ բնակչության կյանքում: Սակայն ներկայումս Թավրիզը կորցրել է իր ունեցած առաջատար, որոշող դերը: 1936 թ. և հատկապես II համաշխարհային պատերազմից հետո այդ դերն անցավ նոր կենտրոնին՝ Թեհրանին:

Խրանա-Հնդկական թեմ. 1605—1606 թթ. Սպահանի շրջակայքում հայերի բնակություն հաստատելու առաջին տարիներին ստեղծվեց, նոր Զուղայի թեմը, որը Կենտրոնական և Հարավային շրջաններում ապրող հայերի կենտրոնը դարձավ: Հետագայում XVII—XIX դդ. իրանահայ բնակչության մի մասի Հնդկաստան, ինչպես նաև Հարավարևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի երկրները տեղափոխվելու պատճառով թեմը փոխում է իր անունը և կոչվում Իրանա-հնդկական:

1909 թ. նա մշակում է իր կանոնադրությունը⁴³: Ստեղծված լինելով 1905—1911 թթ. իրանական հեղափոխության ժամանակ, այդ կանոնադրությունն իր վրա է կրում երկրի քաղաքական կյանքում երևան եկած նոր տրամադրությունների դրոշմը: Դրա շնորհիվ տեղական համայնքային կազմակերպությունները ավելի մեծ իրավունքներով են օժտված, քան ասենք, հյուսիսային գավառներում:

Արդեն այն տարիներին շրջանի հայկական կյանքի վրա սկսեցին ներազդել կենտրոնախույս ուժերը, որոնք և սկիզբ դրին թեմի՝ մի շարք առանձին համայնքների բաժանվելուն: Այս երևույթն ուներ իր օբյեկտիվ պատճառները, որոնք պայմանավորված էին կենտրոնական և հարավային շրջանների ընդարձակ տարածություններում եղած հայկական հին օջախների զարգացմամբ, նորերի երևան դալով: 20-ական թվականներին այդ պրոցեսի խորացման ազդակ դարձավ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և, մասնավորապես, Թեհրանի աճը, ինչպես նաև հայկական բնակավայրերի ստեղծումը երկրի հարավի նավթաբեր

⁴² Այս մասին տե՛ս գլխի համապատասխան բաժնում:

⁴³ ՀՄՄՀ ԿողՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1860, թ. 2—8:

շրջաններում՝ Ահվազում, Աբազանում, Մեսքեդ-Սուլեյմանում, Աղա Ջարիում և այլուր:

Դեռևս 1912 թ. նոյեմբերին էջմիածինը թուլյատրեց Իրանա-Հնդկական թեմը բաժանել երկու մասի: Առաջարկվում էր ինքնուրույն մի թեմ ստեղծել, որի մեջ կմտնեին Նոր Զուղան, Փերիա, Զհարմհալ շրջաններն ու երկրի հարավի հայկական այլ բնակավայրերը, ինչպես նաև Հնդկաստանի և Ժավայի հայկական համայնքները: Թեմի կենտրոնը մնում էր Նոր Զուղան: Մյուս մասի մեջ պիտի մտնեին Թեհրանը, Ղարադաղ, Քազազ, Քամարա, Բուրվառի և Գյափլա շրջանները, Համադանը, Ղազվինը, Ռաշտը, էնդեխին և Գիլանի նահանգի մյուս քաղաքներն ու շրջանները, ինչպես նաև Մաղանդարանում և Խորասանում ապրող հայությունը⁴⁴:

Սակայն այս տարիներին աշխարհիկ ու հոգևոր իշխանություն կողմնակիցների միջև ծագած բախումների հետևանքով թեմի բաժանումը տեղի չունեցավ, իսկ սկսված I-ին համաշխարհային պատերազմը խնդիրը հետաձգեց էլ ավելի երկար ժամանակով: 1912—1920 թթ., չնայած տեղում առաջնորդ ընտրելու մասին էջմիածնի տված թույլտվությունը⁴⁵, Իրանա-Հնդկական թեմի առաջնորդի աթոռը թափուր էր մնում:

20-ական թվականների սկզբին աշխարհիկ և հոգևոր իշխանության կողմնակիցների հետագա բախումները հանգեցրին նրանց սահմանազատման: Այդ բախումների հետևանքով իր գոյությունը դադարեցրեց «Առաջնորդական խորհուրդը», որը հիմնվել էր անցյալ դարի 90-ական թվականներին⁴⁶:

Այդ մարմինը որոշ չափով փոխարինում էր թեմական խորհրդին, քանի որ իրավասու էր քննել ոչ միայն զուտ կրոնա-եկեղեցական հարցերը, այլև կարգավորել Նոր Զուղայի և մերձակա շրջանների հայ բնակչության միջև ծագած վեճերը և դատական որոշումներ կայացնել: Խորհրդի անդամներին նշանակում էր թեմի առաջնորդը: 1922 թ. առաջնորդական խորհրդի փոխարեն Նոր Զուղայում ընտրվեց եկեղեցական խորհուրդ, որի անդամները կրկին ընտրվում էին տեղական քահանաներից⁴⁷:

Եկեղեցական խորհուրդ ստեղծելուց հետո Նոր Զուղայում 1923 թ. առաջ եկավ նաև համայնքային խորհուրդ: Դրանով իսկ ավարտվեց հոգևոր իշխանության ու համայնքային կազմակեր-

⁴⁴ ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1945, թ. 39:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 20:

⁴⁷ Նույն տեղում, էջ 17 և 20:

պությունների լիակատար տարանջատումը: Ծիշտ է, իշխանությունը շարունակում էր մնալ թեմական առաջնորդների ձեռքում, որոնք յուրահատուկ կապող օղակ էին դարձել եկեղեցական և համայնքային խորհուրդների միջև: Նրանք նախաձեռնությամբ խորհուրդները վճռում էին ինչպես Նոր Զուղայի, այնպես էլ նրան հենթակա գտնվող շրջանների բոլոր գործերը⁴⁸: Սակայն այս իրավիճակը Զուղայում հտրատեց մինչև 30-ական թվականների սկիզբը, քանի դեռ այնտեղ թեմական առաջնորդներ կային: 1920—1924 թթ. թեմի առաջնորդը արքեպիսկոպոս Սահակ Այվատյանն էր, որը թեմը գլխավորել էր նաև նախկինում՝ 1902—1912 թթ.: Նրանից հետո թեմը գլխավորեց եպիսկոպոս Մեսրոպ (Մաքիստրոս) Տեր-Մովսեսյանը (1926—1930), 1930 թ. ընդհուպ մինչև 1945 թ. Նոր Զուղայի թեմական առաջնորդի տեղը թափուր էր: 1945 թ. էջմիածինը այստեղ ուղարկեց թեմական Նոր առաջնորդ, Կպիսկոպոս Վահան Կոստանյանին: Սակայն վերջինս այդտեղ մնաց միայն մինչև 1949 թ.:

Թեմակառն առաջնորդի բացակայության ժամանակ թեմական խորհրդի գործառնությունները ձևականորեն կատարում էր Նոր Զուղայի համայնքային խորհուրդը, սակայն վերջինիս չէին հենթարկվում շրջանի համայնքներից և ոչ մեկը, նույնիսկ այնպիսի համայնքներ, ինչպիսին Փերիայի և Զհարմհալինն են: Նոր Զուղայի հետ նրանք կապ էին պահպանում սոսկ կրոնա-եկեղեցական հանգամանքով՝ ի դեմս եկեղեցական խորհրդի:

Այս երկու մարմիններից բացի Նոր Զուղայում կա նաև դրպրոցական հոգաբարձություն: Այս երեք մարմիններն էլ ընտրովի են: Համայնքային խորհուրդն ընտրվում է համայնքային ժողովի կողմից, իսկ հոգաբարձությունը՝ համայնքային խորհրդի: Ինչպես նշեցինք, եկեղեցական խորհուրդն ընտրվում է եկեղեցական ժողովի կողմից:

Իրանա-Հնդկական թեմում կազմակերպչական միասնական կառուցվածքի բացակայությունը պատճառ է դարձել, որպեսզի մինչև վերջերս էլ համայնքներից յուրաքանչյուրը տեղում ինքնավարության իր մարմինն ունենա: Եթե Նոր Զուղայում այդպիսին են համայնքային ժողովն ու համայնքային խորհուրդը, ապա Ահվազում այդ դերը կատարում է համայնքային վարչությունը, Արագանում և Խորեմշահում՝ սկզբում եկեղեցիների ու դպրոցների միացյալ հոգաբարձությունը, իսկ հետո՝ քաղաքներից յուրաքան-

⁴⁸ Նույն տեղում, էջ 37:

լյուրի հոգաբարձութիւնը: Մեսչեդ-Սուլեյմանում ինքնավար մարմինի գործառնութիւնն ունեն ծխական խորհուրդը⁴⁹: Ռաշտում համայնքային խորհրդի գործառնութիւնն իրագործում էր «Հորդանանյան» դպրոցի հոգաբարձութիւնը: Նուլնպիսի իրավունքներով էին օժտված նաև Համադանի, Փեհլեի և այլ քաղաքների դպրոցների հոգաբարձութիւնները:

Այսպիսով, մինչ 50-ական թվականները Իրանա-Հնդկական թեմը, շնայած իր կոլմանը, շունքի աշխարհի թեմական կառուցվածք, որպիսին Թավրիզի թեմն էր: Այնտեղ թեմական մարմիններ ստեղծվեցին 50-ական թվականների վերջին:

1961 թ. Բեյրութից Նոր Զուլաւ ժամանեց Անթիլիասի նշանակած թեմակալը:

Թեհրանի թեմը կազմակերպվել է 1944 թ. սեպտեմբերին: Թեմի ստեղծման նախադրյալներն էին Թեհրանի հայ ազգաբնակչության թվական աճը, գաղութի ինքնավարութեան օրգանների մայրաքաղաքում գտնվելը, իրանահայերի հասարակական ու մշակութային հիմնական ուժերի Թեհրանում կենտրոնանալը և այլն:

Չնայած պաշտոնապես թեմի ստեղծումը հապաղեց, բայց Թեհրանի համայնքը արդեն այն ժամանակ խիստ կարևոր դեր էր խաղում գաղութի կյանքում: Նա ունեն իր մարմինները, որոնք իրենց նշանակությամբ մոտ էին թեմական մարմիններին՝ ընդհանուր ժողով, համայնքային վարչութիւն (ազգային խորհուրդ) և վերստուգիչ հանձնաժողով: Թեհրանի համայնքի գործադիր օրգանը՝ համայնքային վարչութիւնը ունեն իր կանոնադրութիւնը, որն ընդունվել էր 1912 թ.⁵⁰:

Թեհրանի համայնքային վարչութիւնը աստիճանաբար յուրացրեց երկրի ողջ հայ բնակչության լիիրավ մարմնի դերը: Իրանական իշխանութիւններն այն ճանաչեցին որպես գաղութի ներկայացուցչական մարմին: 1917—1918 թթ. գաղութի հարավային շրջանի համայնքները սկսեցին Թեհրան ուղարկել իրենց ներկայացուցիչներին, որոնցից կազմվեց իրանահայերի խորհուրդը⁵¹:

1927 թ. ընտրվեցին համայնքային վարչութեան նոր մարմիններ: Ինքնավարային մարմիններ դարձան ներկայացուցչական խորհուրդը՝ բաղկացած 12 հոգուց, համայնքի վարչութիւնը՝ կազմոված հինգ հիմնական և երկու փոխարինող անդամներից⁵²:

⁴⁹ «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 92, 94:

⁵⁰ ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1862, թ. 37—44, Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 397:

⁵¹ Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, էջ 397—398:

⁵² «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 112—113:

Թեհրանի ազգային խորհրդի օրինակով, սկսած 1917 թ. նման վարչութիւններ ընտրվեցին Համադանում և Արաքում⁵³:

40-ական թթ. սկզբներին դաշնակցական պարագլուխները փորձեցին Թեհրանում ստեղծել թեմական խորհուրդ: Էջմիածինը չճանաչեց այդ ապօրինի խորհուրդը⁵⁴: Թեհրանի թեմի ստեղծման նախաձեռնութիւնը էջմիածինը վերցրեց իր ձեռքը: 1944 թ. ապրիլին ալդ նպատակով Իրան ուղարկվեց կաթողիկոսի անձնական ներկայացուցիչը՝ պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը: Թեմի պաշտոնական հռչակումից հետո որպէս թեմական առաջնորդ Թեհրան ուղարկվեց Վահան Ժ. վարդապետ Կոստանյանը: Թեհրանում նա երկար չմնաց (1945 թ. հունվարից մինչև հունիս) և փոխադրվեց Նոր Զուղա, որպէս Իրանա-Հնդկական թեմի առաջնորդ: Թեհրանի թեմի առաջնորդի պաշտոնում նրան փոխարինեց Ռուբեն Դրամբյանը (1945 թ. հունվարից մինչև 1948 թ. դեկտեմբերը):

Թեմական մարմինները Թեհրանում ստեղծվել են 1947—1948 թթ.:

1949 թ. հոկտեմբերին թեմի պատգամավորական ժողովը ընտրեց թեմական խորհրդի նոր կազմ: Ժողովի ընտրած հատուկ հանձնաժողովը մշակեց թեմական կանոնադրութիւն, որը 1951 թ. ապրիլին արժանացավ պատգամավորական ժողովի հավանութեանը և հաստատվեց կաթողիկոսի կողմից: Այն ուժի մեջ է մտնում մինչև օրս:

Կանոնադրութեան համաձայն պատգամավորական ժողովը հրավիրվում է երեք տարին մեկ: Ժողովի պատգամավորները ընտրվում են թեմի մեջ մտնող քաղաքներից ու գյուղերից: 1949 թ. ժողովի կազմում 35 անդամ կար, այդ թվում Թեհրանից՝ 22, Վանաքից ու մերձակա գյուղերից՝ 1, Ղազվինից՝ 2, Ղարաղանից՝ 3, Համադանից՝ 2, Քիրմանշահից՝ 1, Ռաշտից՝ 1, Փեհլէից՝ 1, Խորասանից (Մեհշեդ)՝ 2: Թեհրանում պատգամավորներին ժողով է ուղարկում քաղաքային գործադիր ժողովը, իսկ շրջաններում՝ տեղական ժխական խորհուրդները:

Պատգամավորական ժողովը ընտրում է թեմական խորհուրդ, ինչպէս նաև անմիջականորեն իրեն հաշվետու վերահսկիչ հանձնաժողով: Թեմական խորհուրդը կարող է ունենալ 9—11 անդամ: Նրան են ենթարկվում Թեհրանի գործադիր ժողովն ու գավառների ժխական խորհուրդները:

⁵³ Հր. Աճառյան. Կյանքիս հուշերից, էջ 398:

⁵⁴ ՀՍՍՀ Կողմ, ֆ. 57, Գևորգ 6-րդ կաթողիկոսի 1941 թ. ապրիլի 14-ի կոնդակի պատճենը:

Թեհրանի ծխական խորհուրդն ու գավառների ծխական խորհուրդները, որոնք թեմական խորհուրդների ներկայացուցիչներն են տեղերում, իրենց հերթին ընտրում են ծխահարկի իրենց ենթակա վարչություն, դպրոցական հոգաբարձություններ ու եկեղեցական վարչություններ: Այդօրինակ կազմակերպությունների կենտրոնական մարմինները Թեհրանի ծխահարկի կենտրոնական հարկային վարչությունն (12 հոգուց բաղկացած կազմով) և Թեհրանի եկեղեցական խորհուրդն են (նույնաթիվ կազմով): Վերջին ժամանակներս գաղութի կյանքում առաջին անգամ Թեհրանի թեմական խորհրդին կից ընտրվեց կրթական խորհուրդ:

1960 թ. հունվարին Թեհրան թեմակալ ուղարկվեց Անթիլիասից:

* * *

Հայկական դարավոր սովորույթների ու հայ եկեղեցու կանոնների համաձայն, թեմական մարմինները վաղուց ի վեր օգտվում են ընտանեկան և ժառանգական հարցերի լուծման իրավունքից, ինչպես՝ ամուսնության, ապահարզանի, որդեգրման, ժառանգության, կռակի և այլն: Այդ իրավունքի գոյությունը պայմանավորված էր առկա կրոնական դավանանքների տարբերությամբ: Քանի որ, իրանում տիրապետող մուսուլմանական իրավունքը անհաշտելի է եղել երկրի հայ քրիստոնյա բնակչության ընտանեկան-ժառանգական իրավունքների հետ, երկրի կառավարիչներն ու շահերը աշխատել են դրանք առանձնացնել՝ որպես եկեղեցական ինքնավարության շրջանակներում իրականացվող իրավական նորմերի մի խումբ: Այդպես շարունակվեց մինչև իրանում սահմանադրական կարգերի հաստատումը: 1905—1911 թթ. իրանական հեղափոխությունը, հռչակելով մի շարք բուրժուական իրավական նորմեր, դրանք գրանցեց երկրի սահմանադրության մեջ⁵⁶:

Սակայն քանի որ հեղափոխության պատվերից օգտվեցին բուրժուա-կալվածատիրական շրջանները, մինչև 30-ական թվականները ազգային փոքրամասնության իրավունքները, ալդ թվում

⁵⁶ Պարսկական լիբերալ բուրժուա-կալվածատիրական արիստոկրատիայի և հոգևորականության ներկայացուցիչները սահմանադրությունը կազմելիս «միլլեթ» (ազգ, ազգություն, ժողովուրդ) հիմնական հատկանիշը համարել են դավանանքը (ինչպես մուսուլմանական միջնադարյան իրավունքներում): Տե՛ս С. М. Алиев, К национальному вопросу в современном Иране, «Краткие сообщения Ин-та народов Азии», 1964, № 77, стр. 47.

և նրանց ընտանեկան-ժառանգական իրավունքները, իրանի օրենսդրության մեջ իրենց արտահայտությունը չգտան (ի դեպ, հայազգի անձանց դատական գործերի քննության կարգը բացատրվելու պարզաբանման է ենթարկվել իրանի կառավարության արձակած մի քանի հրահանգներում և հրամաններում)։ Սակայն քանի որ հայերի իրավունքները օրենսդրական կարգով որոշված չէին, իրանական դատավորները հաճախ հրաժարվում էին քննել նրանց գործերը⁵⁶։ Բայց անգամ դրանք քննելու դեպքում, այդ տարիներին իրանի կրոնական ունեցվածքային իրավունքը հավասար մոտեցում չէր ցուցաբերում մահմեդականների ու քրիստոնյաների նկատմամբ։ Այդ իսկ պատճառով հայերը փաստորեն իրանական դատարաններում դատվելու հնարավորություն չունեին⁵⁷։

Միայն դատավարության օրենքի բարենորոգումից հետո⁵⁸ հայերի, ինչպես նաև ազգային մյուս փոքրամասնությունների իրավունքները, իրենց արտահայտությունը գտան իրանական գործող օրենսդրության մեջ, 1312 թ. թիրամսի 31-ին (1933 թ. հունիսի 22) մեջլիսը հաստատեց ոչ շիաների (սուննիներ, քրիստոնյաներ, զրադաշտականներ, հրեաներ և այլն) ընտանեկան հարցերի վերաբերյալ օրենսդրական իսլամագիծը։ Վերջինիս համաձայն, ամուսնության կամ ապահարզանի դեպքում, երկրի դատական մարմինները գործը պետք է քննեն ըստ ամուսնու կրոնական պատկանելության, իսկ կտակի կամ ժառանգության դեպքում՝ ըստ հանգուցյալի կրոնական դավանանքի։ Որդեգրման հարցը պետք է քննարկվեր որդեգրող հոր կամ մոր կրոնական պատկանելությունից՝ նկատելով⁵⁹։

1935 թ. իրանի արդարադատության մինիստրության առաջարկությամբ գաղութի թեմական և ազգային մարմինները 74 հոդվածներից բաղկացած մի օրենսգիրք կազմեցին, որը 1937 թ. մայիսի 21-ին հաստատվեց կաթողիկոսի կողմից⁶⁰, թարգմանվեց

⁵⁶ С. Аракелян, Автономные права национальных меньшинств в Персии, «Новый Восток», кн. 10—11, 1925—1926, стр. 278.

⁵⁷ ՀՍՍՀ Կողմ, ֆ. 4/114, ց. 2, գ. 88, թ. 44։

⁵⁸ Դատակազմության օրենքը հրատարակվել է 1928 թ.։ Լրացումներն ու ուղղումները մտցված են 1936 թ.։

⁵⁹ ՀՍՍՀ Կողմ, ֆ. 57, «Իրանահայության ընտանեկան և ժառանգական իրավունքները ըստ հայադավան առաքելական եկեղեցական կանոնների, և ուղղորդությունների և պետական օրենքների»։

պարսկերեն և հանձնվեց Իրանի արդարադատության մինիստրությանը⁶⁰:

Ինչով էր թելադրված 1312 թ. թիր ամսի 31-ի օրենքի հրապարակման և գաղութի համար օրենսգրքի ստեղծման անհրաժեշտությունը: Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերըստին անդրադառնալ գաղութի իրավական վիճակին, որը հիմնված էր կրոնա-եկեղեցական ինքնավարության վրա: Ինչպես թեմական կառուցվածքը, այնպես էլ ընտանեկան-ժառանգական բնույթի հարցերը Իրանում պատկանում են կրոնական մարզին: Այդտեղից էլ բխում է դեռևս իսլամի ազդեցության տակ գտնվող իրանական օրենսդրության ձգտումը՝ այլակրոն և այլադավան ազգային փոքրամասնությունների իրավունքները ինչ-որ ձևով նմանեցնել տիրող ազգի իրավունքներին:

Գաղութի օրենքների ժողովածուն ուղեցույց փաստաթուղթ հանդիսացավ իրանահայերի դատական գործերի քննության համար: Դատական մարմինները այժմ դրանով են ղեկավարվում:

Սակայն ժողովածուի պատրաստումից որոշ ժամանակ անց դատական պրակտիկայում մի շարք հակասություններ ի հայտ եկան նրա ե 1312 թ. թիր ամսի 31-ի օրենքի միջև: Բանն այն է, որ իրանական դատարանները հայերի գործերը քննում են օրենսգրքով սահմանված սոսկ հինգ դեպքերում՝ ամուսնության, ապահարզանի, ժառանգության, կտակի ու որդեգրման: Այդ որոշակի դժվարություններ է ստեղծում ընտանեկան-ժառանգական բնույթի մի շարք այնպիսի հարցերի քննության անհրաժեշտության դեպքում, որոնք չկան այդ օրենսգրքում, բայց նախատեսված են գաղութի օրենքների ժողովածուով: Այդ հարցերից է, օրինակ, անչափահաս երեխաների խնամակալությունը⁶¹: Ի թիվս ընտանեկան-ժառանգական մյուս հարցերի, դրանք իրանական դատարաններում քննվում էին դեռևս նախքան Իրանում սահմանադրության ընդունելը և իրենց ուժը պահպանել էին մինչև դատավարական օրենքի ունեֆորմը:

⁶⁰ ՀՄՍՀ Կողմ, ֆ. 57, «Տեղեկագիր Թահրանի հայոց եկեղեցական վարչության 10 ապրիլի 1942— 29 հունիսի 1944 թ. գործունեության»:

⁶¹ Համաձայն իրանական օրենսդրության, հորը կորցրած զավակները համարվում են խնամակալությանից զուրկ, այսինքն որքան նրանք հասունացած են համարվում 25 տարեկանից: Այդ պարագան լուրջ խոչընդոտ է հատկապես հայրենադարձության դորժին և հաճախ հանգեցնում է հայրենադարձների ընտանիքների ջայթալման, քանի որ որքան իրավունք չունի դուրս գալու իրանահայտակությունից:

1312 թ. թիդի 31-ի օրենքի և գաղութի օրենքների միջև եղած այդ անհամապատասխանությունները, բնականաբար, կարոտ են կարգավորման: Գաղութի թեմական մարմինները վերջին ժամանակներս ջանում են այդ հարցը լուծել իրանական համապատասխան իշխանությունների հետ բանակցելու միջոցով: Այսպես, 1962 թ. Թեհրանում կայացած երեք թեմերի համագումարում ի թիվս այլ հարցերի քննարկվեց նաև իրանահայերի ընտանեկան, ժառանգական իրավունքների վերանայման ու պաշտոնական ճանաչման հարցը:

Հարկ է նշել, որ ի տարբերություն արտասահմանի հայկական շատ այլ գաղութների, իրանահայ գաղութի թեմերը ընդհուպ մինչև XX դ. 50-ական թվականները ընտանեկան-ժառանգական և ամուսնա-ապահարդանական հարցերի շուրջ տեղական եկեղեցական ու համայնքային խորհուրդների որոշումները ներկայացնում էին էջմիածին՝ կաթողիկոսի հաստատման: Այդ, անշուշտ, վկայում է իրանահայերի՝ իրենց մայր հայրենիք Հայաստանի հետ ունեցած դարավոր կապի մասին:

Այսպիսով, ընտանեկան-ժառանգական հարցերի լուծման իրավունքը իրանում տեղի հայ բնակչության նկատմամբ կիրառվող իրավական նորմերի տարրերից մեկն է: Այն դարավոր վաղեմություն ունի և դրանով իսկ մարմնավորում է իրանահայ գաղութի կենսուսնակությունը, մի հանգամանք, որը պահպանվել է մինչև մեր օրերը:

* * *

Իրանում հայկական ազգային դպրոցներին իրավական երաշխիք է տրված շահերի մի քանի ֆիրմաններով ու փաստաթղթերով⁶², իրենց սկզբնավորման օրից (XIX դ. 30-ական թթ.) մինչև 1936 թ. ամբողջ մի դար հայկական աշխարհիկ հանրակրթական դպրոցները համաձայն այդ երաշխիքների ունեցել են ներքին

⁶² Մեր ձեռքի տակ չկա հայկական դպրոցներին վերաբերող շահական ֆիրմաների ու իրանական փաստաթղթերի ցուցակը: Սակայն ստորև հիշատակվող պատմական փաստաթղթերը, կարծիք, բավարար կլինեն հայկական դպրոցների իրավունքները հիմնավորելու համար: Ահա դրանք՝ Թավրիզում «Արամյան» դպրոցի հիմնադրման մասին (տե՛ս Հ. Անեմյան, Պատմություն Արամյան ազգային դպրոցի (Նոր Զուզայի և Թավրիզի թեմական առաջնորդների՝ Նասր-էդ-դին շահին ուղղված միջնորդությունը) տե՛ս Հաբուսյուն Տեր Հովանյանց, Պատմություն Նոր Զուզայի, հ. 2, էջ 83—85, և ՀՄՄՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 224, թ. 13—18), Մոհաֆեր-էդ-դին շահի ֆիրմանը (տե՛ս Ե. Տրանգյան, Ասրպատական, էջ 108—109):

ինքնավարություն: Այդ իրավունքի արտահայտությունն են եղել սեփական ուսումնական ծրագրերը, հայերեն լեզվով ուսուցումը: Դպրոցները ստեղծվում և պահվում էին ժխականների միջոցներով և ղեկավարվում էին թեմական կամ համայնքային խորհուրդների ընտրած հոգաբարձությունների կողմից:

Իրանի սահմանադրությամբ, ճիշտ է սահմանափակ ձևով, երաշխավորվում էր ազգային դպրոցների գոյությունը: Այսպես, հիմնական օրենքի «Լրացումների» 19-րդ հոդվածում խոսվում է ժողովրդական միջոցներով դպրոցների հիմնադրման մասին⁶³:

Չնայած այս երաշխիքին, պետությունը «իրանացեցելու» քաղաքականության հետևանքով, որ 1936 թ. իրագործեց Ռզա շահը, ինչպես հայկական, այնպես էլ ազգային այլ փոքրամասնությունների դպրոցները կառավարության կարգադրությամբ փակվեցին: Հայերին ըստ կրոնական հատկանիշի «իրանացեցելու» համար հիմքեր լուծենալով (ինչ արվում էր ադրբեջանցիների, քրդերի ու մուսուլմանական այլ ազգերի նկատմամբ) իրանական իշխանությունները ընտրեցին գաղութը ազգային դպրոցներ ունենալու իրավունքից զրկելու ուղին:

1941 թ. Մերձավոր և Միջին Արևելքում ծավալված ազգային-ազատագրական շարժման ճնշման տակ իրանական իշխանությունները հարկադրված էին վերացնել ազգային դպրոցների արգելքը: Հայկական դպրոցների վերականգնումը ձեականորեն իրականացվեց Թավրիզի թեմակալ, արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Բանգյանի՝ Իրանի նոր շահին հղած միջնորդության շնորհիվ⁶⁴:

Վերականգնելով գաղութի՝ դպրոցների վերաբերյալ ունեցած իրավունքները իրանական կառավարությունը, միաժամանակ գրանցում պարտադիր կարգով մտցրեց Իրանի լուսավորության մինիստրության տարրական դպրոցների ծրագիրը: Այդ ծրագիրը ընդունելու հետևանքով, հայկական դպրոցներում ուսուցման հիմնական լեզուն փաստորեն պարսկերենը դարձավ:

Հայկական դպրոցներում ծրագրից դուրս թույլատրված էր միայն հայոց լեզվի և կրոնի ուսուցումը: Այդ երկու առարկաներն էլ մտցվեցին ոչ պարտադիր առարկաների շարքը: 1946 թ. Թեհրանի թեմական խորհրդի միջնորդությամբ կրոնը ճանաչվեց որ-

⁶³ «Конституции государств Ближнего и Среднего Востока», М., 1956, стр. 189.

⁶⁴ Զ. Աճեմյան, Հիշատակարան ու պատկերացույց Թեհրանի ժողովրդի Սահակյան, դպրոցների, Թեհրան, 1961, էջ 29.

պես պարտադիր առարկա⁶⁵։ Սակայն հայոց լեզուն դեռևս այդպիսի համարում չի ստացել, թեև գաղութի թեմական մարմինները այս ուղղությամբ չեն դադարեցրել իրենց ջանքերը⁶⁶։

Հայկական դպրոցների հարցում Իրանի լուսավորության մինիստրությունը բնականաբար կողմնակից է պետական ծրագրի իրականացմանը, իսկ գաղութի թեմական մարմինների վրա են ընկնում դպրոցների նյութական բազայի պահպանման ու ամրապնդման, դպրոցական շենքերի կառուցման և այլ հոգսերը։ Սեփականության իրավունքների տեսակետից այդ դպրոցները գաղութի սեփականությունն են։

* * *

Պառլամենտում իր ներկայացուցիչներն ունենալու իրավունքը իրանահայերը ստացել են 1905—1911 թթ. իրանական հեղափոխության ժամանակ։ Այդ իրավունքը ելնում է ընտրական իրավունքի համապատասխան հոդվածից, որ ընդունել է երկրորդ գումարման մեջլիսը, 1909 թ. (ըստ դրա յուրաքանչյուր 50.000 մարդուց ընտրվում է մեկ պատգամավոր)։ Տվյալ դեպքում ազգային փոքրամասնությունները դասվում են հատուկ կուրիաներում (ընտրախավերում) և կազմում են յուրօրինակ, ըստ ազգային ու կրոնական հատկանիշի առանձնացված ընտրական օկրուգներ⁶⁷։

Այս իրավունքը սահմանափակվում է գաղութի շրջանակներով։ Դրանում համոզվելու համար բավական է քննել մեջլիսում հայերի պատգամավորների գործունեությունը։ Նրանց, ինչպես և ազգային մյուս փոքրամասնությունների պատգամավորների գործունեությունը մեջլիսի մյուս պատգամավորների համեմատությամբ սահմանափակված է գաղութին վերաբերող հարցերի շրջանակով։ Մյուս հարցերում հայերի պատգամավորների դերը իրանական մեջլիսում լուկ ձևական է։

Հետևաբար, տվյալ դեպքում էլ մենք բախվում ենք իրանական օրենսդրությանը բնորոշ մի երևույթի՝ ազգային փոքրամասնու-

⁶⁵ «Վերածնունդ», 1947, 12—13 նոյեմբերի։

⁶⁶ Իրանի հայկական դպրոցների մասին տե՛ս «Մշակույթ» գլխի համապատասխան բաժինը։

⁶⁷ Ազգային փոքրամասնություններին այդ իրավունքը տրվել էր դեռևս 1907—1908 թթ.։ Սակայն նտադիմական հոգևորականության ջանքերի հետևանքով հայերի ու հորանների համար, այդ իրավունքը մեջլիսի ընտրությունների ժամանակ չի դարձվեց (տե՛ս С. М. Алиев, К национальному вопросу в современном Иране. «Краткие сообщения Ин-та народов Азии», 1964, № 77, стр. 48.

թյունների, մասնավորապես. հայերի իրավունքները տրոհելու, դրանք իրավական հարցերի առանձին խմբի մեջ դասելու ձգտմանը:

Ընտրական իրավունքն ընդունելու տարին իրանում գոյություն ունեցող հայ բնակչության թիվը իրավունք էր տալիս մեջլիսում ունենալ երկու պատգամավոր, թեև իրանահայ գաղութը բաղկացած էր 80.000 հայութունից և պատմականորեն բաժանված էր երկու հատվածների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր թեմական առանձին հաստատությունները, սակայն բուրժուա-կալվածատիրական շրջանները հեղափոխության տարիներին անտեսվեցին հայերի մեջլիսում երկու պատգամավոր ունենալու իրավունքը⁶⁸:

Այդ հարցը կրկին քննության առարկա դարձավ 1915 թ., որից հետո գաղութի հայ բնակչությանը իրավունք տրվեց մեջլիսում ունենալ նաև երկրորդ պատգամավորը:

Այս կարգը, որն արդեն ավանդույթ է դարձել, պահպանվում է մինչև օրս: Սակայն դրանից որոշ շեղումներ երբևմն լինում են. օրինակ, հարավային նահանգներից հայերի պատգամավորը ընտրվում է նաև կենտրոնական նահանգների հայերի կողմից, թեև 1944 թ. այդ բնակչությունը ինքնուրույն թեմ է կազմել:

Չնայած մեջլիսում հայերի ունեցած ներկայացուցչության ձևական բնույթին, այդ իրավունքը նրանց որոշ հնարավորության է տալիս անհրաժեշտության դեպքում այնտեղ պաշտպանել իրենց շահերը: Օրինակ, հայերի պատգամավորները օգտվում են հայ բնակչության դիմումները և բողոքները քննարկելու, պետական ու ղեկավար մարմիններին միջնորդություններ հարուցելու և այլ իրավունքներին:

⁶⁸ Մեջլիսում հայերի երկու պատգամավոր ունենալու հարցը 1908—1910 թթ. բուրժուա-կալվածատիրական լիբերալ շրջանների ու գաղութի թեմական մարմինների միջև բանավեճի առարկա դարձավ: Այն քննարկվել էր դեռևս առաջին գումարման մեջլիսում (տե՛ս «Մշակ», 1908, 8 և 25 հունիսի) և նորից լույս աշխարհ եկավ ընտրական օրենքի կազմման ու երկրորդ գումարման մեջլիսի ժամանակ: Նշանակալից է, որ հայերը մերժեցին իրենց հակառակորդների այն թեզը, թե իբր իրենց այդ պահանջը պիտի ուղղեն սահմանադրական շարժմանը ունեցած նրանց մասնակցության հատուցում դիտվի (տե՛ս «Վերածնունդ», 1933, 28 հոկտեմբերի): Հայ պատգամավորները մեջլիսում ներկայացնում էին նաև ասորի բնակչությանը, որը հիմնականում բնակվում էր հյուսիսային նահանգներում: Սկսած 20-րդ գումարումից մեջլիսում ասորիների ներկայացուցչին մի տեղ է հատկացված:

Կաղութի թեմական մարմինները երկրի մինիստրությունների ու գերատեսչությունների, ինչպես նաև շահական պալատի հետ շփվում են այդ պատգամավորների միջոցով:

Հայերի, ասորիների, զրադաշտականների ու հրեաների գաղութներին մեջլիսում ներկայացուցչություն ունենալու իրավունքը կրկին վերապահվեց 1960 թ.⁶⁹:

Տարբեր ցենզերի գոյության հետևանքով (զրադիտության, նստակեցության, ունեցվածքի և այլն) իրանահայ աշխատավորների մեծ մասը զրկված է մեջլիսի պատգամավորների ընտրություններին մասնակցելու իրավունքից: Այսպես, ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն միայն 20 տարին լրացած, տվյալ ընտրական շրջանում ոչ պակաս, քան 6 ամիս բնակվող ու հարկերը վճարած քաղաքացիները:

* * *

Ինչպես պարզվում է վերը ասածից, Իրանում տեղի հայ բնակչությանը տրված իրավունքները սահմանափակվում են գաղութի շրջանակներով: Դրանում իր արտահայտությունն է գտնում իրանական օրենսդրության առանձնահատկությունը: Այս առանձնահատկությունը պետք է նկատի առնել ամեն անգամ, երբ խոսքը վերաբերում է Իրանի հայ բնակչության իրավական վիճակին, քանի որ իրավական երաշխիքների կողքին այն իրանահայերի իրավունքների որոշակի սահմանափակումներ է ծնում:

Այդ սահմանափակումներից մի քանիսի մասին մենք արդեն առիթ ենք ունեցել խոսել:

Իրանում սահմանափակված են նաև հայերի միությունների, ժողովների ու մամուլի իրավունքները⁷⁰: Այդ սահմանափակումներն, անշուշտ, զուտ ազգային բնույթ չեն կրում, այլ առնչվում են քաղաքական մոտիվների: Այսպես թե այնպես, 20-ական, ինչպես նաև 40 և 50-ական թվականներին արգելվեց մի քանի հայկական թերթերի, ամսագրերի ու այլ պարբերականների հրատարակությունը⁷¹: Այս իսկ պատճառով պարբերականների թիվը իրա-

⁶⁹ Avery, Peter, Modern Iran, p. 490.

⁷⁰ Նկատի ունենք «Հիմնական օրենքի լրացումներին» 20 և 21 հոդվածները:

⁷¹ Հայերեն թերթերի հետ միաժամանակ արգելվեցին ադրբեջաներեն, քրդերեն ու ասորերեն թերթերը (սե'ս С. М. Алуев, к национальному вопросу в современном Иране, «Краткие сообщения Ин-та народов Азии», 1964, № 77, стр. 54).

նահայ գաղութում ի տարբերություն արտասահմանի մյուս գաղութների, խիստ սահմանափակ է:

20—30-ական թվականներին իրանում իրենց գոյությունը դադարեցրին հայկական գրեթե բոլոր կուսակցություններն ու խրմբավորումները: Ներկայումս իրանում գործում է միայն դաշնակցական կուսակցությունը:

Պետության գործերում կրոնի ազդեցության թուլացումից և, հատկապես, Ռեզա շահի անցկացրած բարենորոգումներից հետո, իրանահայերի ու ազգային մյուս փոքրամասնությունների նկատմամբ նախկինում գոյություն ունեցող կրոնական հալածանքների մնացուկները զգալիորեն նվազել են:

50-ական թվականների երկրորդ կեսին, իրանի իշխող շրջանները որոշակիորեն փոխեցին ազգային փոքրամասնությունների իրավական վիճակի նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքը՝ հրաժարվելով «իրանացնելու» քաղաքականության բացահայտ ձևերից: Այսպես, ընդառաջելով գաղութի լայն հասարակության ցանկություններին, իրանական կառավարությունը Սպահանի համալսարանում բաց արեց հայագիտական բաժանմունք: Քիչ ավելի ուշ, 1964 թ. Թեհրանի համալսարանի բանասիրական ֆակուլտետում ևս բացվեց այդպիսի բաժանմունք:

* * *

Ո՞րն է իրանահայ գաղութի այժմյան իրավական վիճակի առանձնահատկությունը: Իհարկե, գաղութը շարունակում է իր գոյությունը կրոնա-եկեղեցական ինքնավարության շրջանակներում: Գաղութի իրավական դրույթյան վրա, նախկինի պես շարունակում է ազդել իրանի օրենսդրությունը, որն ի վիճակի չէ հայ բնակչությանը լիարժեք երաշխիքներ տալ. այն է՝ հավասարություն օրենքի առջև առանց սեռի, տարիքի, ազգության ու կրոնի խտրության:

Այդպիսի պայմաններում կրոնա-եկեղեցական ինքնավարությունը ավանդաբար շարունակում է գաղութի իրավական դրույթյան հիմքը լինել: Ինքնավարության այդ ձևի շրջանակներում են գործում օրենսդրական ու գործադիր մարմինները, ինչպես նաև զանազան կազմակերպություններ: Այսպիսով, հայկական եկեղեցին կարևոր դեր է խաղում իրանահայ, ինչպես և ամբողջ սփյուռքահայության կյանքում, ընձեռելով աշխարհիկ վարչական կառուցվածքի տարրեր: Միաժամանակ կրոնա-եկեղեցական ինքնավարությունը տեղի հայ բնակչության պահպանման ու համախմբման միջոց ու ձև է: Կրոնա-եկեղեցական ինքնավարության

շրջանակներում հայ բնակչությունն օգտվում է մայրենի լեզվի, կենցաղի, ավանդությունների ու մշակույթի հիման վրա գոյատևելու հնարավորությունից:

ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒՑԹՂ

Գրացոցներ: Գրականություն: Նկարչություն: Երաժշտություն: Թատրոն: Տպարաններ և մամուլ: Ժառանգապետություն: Ակումբներ: Գրադարաններ: Նոր Զուլայի մատենադարանն ու քանգարանը:

Իրանահայ գաղութում մշակույթի օջախները ստեղծվել են դեռևս մինչև XVII դ.: Առաջին օջախներից մեկը, ամենայն հավանականությամբ, Ս. Թադևոսի վանքն էր, որը Ատրպատականի թեմի կենտրոնն էր: Որպես թեմի աթոռանիստի նրա մասին հիշատակություններ կան Կիրակոս Գանձակեցու և Միքայել Չամչյանի մոտ: Իրանում հայերի մշակութային կարևոր օջախներից էին նաև Սուլթանիե և Թավրիզ քաղաքները: Վկայություն է պահպանվել մինչև 1600 թ. Թավրիզում հայկական դպրոցների գոյության մասին:

XVII դ. սկզբին իրանահայերի մշակութային հիմնական օջախը դարձավ Նոր Զուլան: 1633 թ. Նոր Զուլայի թեմի առաջնորդ Գրիգոր Կեսարացին Ամենափրկիչ վանքին կից հիմնեց դպրոց, որը պատմական մի քանի փաստաթղթերում հիշատակվում է որպես «համալսարան»: Գրիգոր Կեսարացին իր աշակերտների հետ միասին 1640 թ. հիմնեց նաև տպարան: Նոր Զուլան դարձավ նաև հայ ձեռագրերի կարևոր կենտրոններից մեկը: Նորջուղայեցիների միջավայրից ծնվեցին մի խումբ նշանավոր նկարիչներ, ծաղկողներ, երգիչ-գուսաններ:

XVIII դ. և XIX դ. սկզբին, պատերազմների և ֆեոդալական երկպառակությունների շրջանում մշակութային կյանքը գաղութում անկում ապրեց: XIX դ. կեսերից իրանահայ մշակույթը սկսեց վերածնվել:

* * *

Իրանահայ գաղութում, ինչպես և արտասահմանի մյուս հայ գաղթօջախներում, հատուկ դեր ունի ազգային դպրոցը: Արտասահմանի հայերի համար դպրոցը ոչ միայն լուսավորության ու կրթության օջախ է, այլև հոգևոր գոյատևման կարևորագույն միջոց:

Դպրոցական կրթության պատմութիւնը, ամենայն հավանականությամբ, սկսվում է հայ գաղթօջախների ծագման առաջին իսկ օրերից: Պատմական տվյալները վկայում են, որ հայկական եկեղեցիներին ու վանքերին կից դպրոցներ են գոյություն ունեցել դեռևս XII—XIII դարերում: Սակայն դրանք բացառապես հոգևոր դպրոցներ էին: Աշխարհիկ դպրոցները գաղութում երևան են գալիս միայն XIX դ. առաջին կեսին: Առաջին այդպիսի դպրոցները ստեղծվում են Թավրիզում և Նոր Զուղայում՝ Կովկասի, Ռուսաստանի, Հնդկաստանի և այլ երկրների հայ մշակութային օջախների բարերար ազդեցության տակ:

Նոր Զուղայում առաջին դպրոցը բացվեց 1833 թ., սուրբ Ստեփանոս եկեղեցուն կից: Մադրասցի բարեգործ Գ. Սամյանի գումարներով կառուցված այդ դպրոցը միջոցների սղության պատճառով 3—4 տարի հետո փակվեց⁷²: 1843 թ., Աստվածամայր եկեղեցու բակում կալվաթացի բարեգործ Ա. Արդարյանի միջոցներով բացվեց մի նոր դպրոց, որը կրում էր «Հայկական հայրենասիրական» անունը: 1853 թ. համանման դպրոցներ հիմնվեցին սուրբ Մինաս և սուրբ Ստեփանոս եկեղեցիներին կից⁷³:

1854 թ. Նոր Զուղայում բացվեց գաղութում առաջին իգական դպրոցը, որն ի դեպ իրանում ևս առաջին իգական դպրոցն էր: Այն կառուցված էր կանանց Կատարինյան վանքին կից, ճավացի Մ. Հորդանանյանի ծախքով⁷⁴:

Նյութական դժվարությունների, ինչպես նաև բավարար թվով ուսուցիչներ չլինելու պատճառով այդ դպրոցները 1880 թ. միավորվեցին և կազմեցին Ազգային կենտրոնական դպրոցը, որի շենքը կառուցվեց Ճավայի, Բիրմայի և Հնդկաստանի հայերից հավաքած նվիրատվություններով⁷⁵:

Արդեն XX դ. սկզբին՝ 1901—1905 թթ. Ռ. Պատկանյանի դպրոցական ընկեր, մոսկվացի Գևորգ Քանանյանի կտակած միջոցներով Նոր Զուղայում բացվեցին «Գևորգ Քանանյան» իգական դպրոցն ու մանկապարտեզը, որոնք տեղավորված էին բարեկարգ երկհարկանի շենքում⁷⁶:

⁷² Հ. Տեր-Հովհաննես, Պատմություն Նոր Զուղայի, հ. 2, էջ 255—259:

⁷³ «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 31—32:

⁷⁴ ՀՄՍՀ Կողմ, ֆ. 56, ց. 3, գ. 417, թ. 150, «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 32:

⁷⁵ Նույն տեղում:

⁷⁶ «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 33:

1835 թ. Թավրիզում հիմնվեց «Արամյան» դպրոցը: Որի հարյուրամյակը նշվեց 1935 թ.⁷⁷ Սկզբում այն տեղավորված էր Թավրիզի թեմի առաջնորդարանի շենքում, Ղալա թաղում: Այնուհետև առանձին շենք կառուցվեց թեմակալ Սահակ Սաթունյանի (առաջնորդ էր 1851—57 թթ. —Ղ. Մ.) օրոք: «Արամյան» դպրոցի առաջին ուսուցիչներից մեկը Մեսրոպ Թադիսդանն էր⁷⁸:

1875—1877 թթ. «Արամյան» դպրոցում դասավանդել է Բաֆֆին: Նա մտադիր էր Թավրիզում հիմնել նաև կանանց դպրոց, ինչպես նաև տպարան: Սակայն հարկադրական մեկնումը Թավրիզից ի դերև հանեց նրա այդ ծրագրերը:

Թավրիզում իգական դպրոց հիմնելու գաղափարը ի վիճակի եղավ իրագործել «Ավարայրյան» ընկերությունը, 1879 թ.: 1883 թ. Թումանյան եղբայրների (Թումանյան առևտրական տան անդամներ—Ղ. Մ.) միջոցներով ստեղծվեց «Աննայան» դպրոցը, որը 1905 թ. միացավ «Արամյան» դպրոցին: 1882 թ. Թավրիզի Լիլավա թաղում բացվեց «Հայկազյան», իսկ 1895 թ. «Թամարյան» դպրոցը:

Իրանական հեղափոխության տարիներին, 1909 թ. Թավրիզում հիմնադրվեց ևս մի դպրոց՝ թեմական կենտրոնական միջնակարգ ուսումնարանը:

Թեհրանում հայկական դպրոցները հիմնվել են շատ ավելի ուշ, քան Նոր Զուղայում և Թավրիզում: Դրա պատճառը այդ ժամանակներում Թեհրանի հայ բնակչության փոքրաթիվ լինելն է: Հանրակրթական առաջին՝ «Հայկազյան» դպրոցը Թեհրանում բացվեց 1870 թ., Դարվազե Ղազվին թաղում: Կանանց կազմակերպությունների՝ աղջիկների համար դպրոց հիմնելու ջանքերը քսան տարի մնում էին անարդյունք: Միայն 1891—1892 թթ. Թեհրանում հիմնվեց առաջին իգական դպրոցը: 1891 թ. Ազգային դպրոց բացվեց Դարվազե Ղազվին թաղում, իսկ 1903 թ.՝ դպրոց Դարվազե Դովլաթի թաղում:

1910 թ. Հասանարադ թաղամասում, որտեղ այդ ժամանակ ապրում էր Թեհրանի հայ բնակչության մեծամասնությունը, կառուցվեց «Հայկազյան» նոր դպրոցը:

Դավառներում հայկական դպրոցներ սկսեցին երևան գալ XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Անցյալ դարի 70-ական թվական-

⁷⁷ «Վերածնունդ», 1935, 8 դեկտեմբերի:

⁷⁸ Ղ. Աճեմյան, Պատմություն «Արամյան» ազգային դպրոցի, Թավրիզ, 1936, էջ 12—13 և 26—28:

ներին դպրոցներ կային Սալմաստի Հաֆթվան, Փայաշուկ, Ղալասար գյուղերում: Ավելի ուշ դպրոցներ բացվեցին նաև Սարնա, Ախթախանա, Սավրա և այլ գյուղերում: XX դ. սկզբին դպրոցներ կային Սալմաստի գավառի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերում: 1903 թ. Փայաշուկ գյուղում տեղական դպրոցի համար կառուցվեց երկհարկանի շենք: 1904—1905 թթ. ուսումնական տարում Սալմաստի 11 դպրոցներում 800 աշակերտ էր սովորում:

1885 թ. տեղի եկեղեցուն կից դպրոց հիմնվեց Մարաղայում: 1898—1900 թթ. Թավրիդի հայ կանանց բարեգործական ընկերության ջանքերով դպրոցներ բացվեցին Ուրմիայի, Մաքուի, Ղարադաղի և Բարանդուզի մի քանի գյուղերում և քաղաքներում:

XX դ. ոկղբին հայկական դպրոցներ բացվեցին երկրի հեռավոր շրջաններում. 1904 թ. Համադանում, իսկ 1905—1909 թթ.՝ Ղաղվինում, Մեհհեդում, Սուլթանաբադում, Ռաշտում և էնզելիում:

Այդ տարիներին դպրոցներ կային Չհարմհալի շրջանի 8 գյուղերից չորսում՝ Լիվառիան, Վերին Քոնարք, Մամուքա և Սիրաք: Փերիայի շրջանում դպրոցները համեմատաբար քիչ էին. 27 գյուղերից դպրոցներ ունեին 10-ը, իսկ Բուրվառի, Քազաղ, Գյափլա և Քամարա շրջաններում գործում էր ընդամենը մի քանի դպրոց:

Իրանի հայկական դպրոցների վրա հատկապես ուժեղ էր Կովկասի մշակութային կենտրոնների ազդեցությունը: Մասնավորապես Թիֆլիսից Իրան էին գալիս ուսուցիչներ, ստացվում էր ուսումնական ու մեթոդական գրականություն, Կովկասի հայկական դպրոցների ծրագրերը:

Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին իրանահայ դպրոցի վրա սկսեց զգացվել Իրանի կառավարության անցկացրած բարեփոխումների ազդեցությունը: 1927 թ. մեյլիսի ընդունած օրենքներով, ինչպես նաև 1932 և 1933 թթ. որոշումներով երկրում մտցվեց պարտադիր տարրական (վեցամյա) կրթություն, վերանայվեցին ուսումնական ծրագրերը, ավելացվեցին բնագիտական առարկաներին հատկացվող դասաժամերը⁷⁹:

Առաջին համաշխարհային պատերազմը մեծ վնաս հասցրեց երկրի հյուսիսային շրջանների դպրոցներին, որտեղ, ինչպես նշվեց, ժամանակին ստեղծվել էին գաղութի առաջին կրթական օջախները: Սալմաստի երբեմնի 11 դպրոցներից գործում էին միայն

⁷⁹ «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 21:

⁸⁰ E. A. Дорошенко, Система просвещения в Иране. М., 1959, стр. 23—25.

Հավթվան, փայաշուկ և Մալլամ գյուղերի դպրոցները: Ղարադաղի հայկական 21 գյուղեր ունեին 10 դպրոց, իսկ Ուրմիայի շրջանի 33 գյուղերից ոչ մեկը դպրոց չունեին⁸¹:

20—30-ական թվականներին դպրոցական կրթությունը ավելի մեծ թափով էր զարգանում հարավային և կենտրոնական դավառների հայ գաղթօջախներում: 1920—1921 թթ. դպրոցներ հիմնվեցին Ահվազում, Սուլթանաբադում: 1922—1927 թթ. արդեն դպրոցներ կային Չհարմհալի բոլոր գյուղերում⁸², Փերիայի շրջանում դրանց թիվը հասավ 17-ի, Բուրվառիի գյուղերում՝ 6-ի⁸³:

Հայ երեխաները այդ տարիներին ազգային դպրոցներից բացի սովորում էին ամերիկյան, անգլիական և ֆրանսիական միսիոներական դպրոցներում⁸⁴: որոնց հիմնական խնդիրն էր երիտասարդության շրջանում տարածել Արևմուտքի ազդեցությունը: Օգտվելով ազգային դպրոցների սակավությունից, նրանք կարողացան դեպի իրենց հրապուրել հայ երիտասարդության մի նշանակալից մասին: Այսպես, 1926 թ. Թեհրանի «Հայկադյան» դպրոցում սովորում էին 226, իսկ մանկապարտեզում՝ 64 երեխաներ, այնինչ ամերիկյան դպրոցն էին հաճախում 350, ֆրանսիական դպրոցները (արական «Սան Լուի», իգական «Ժաննա դը Արկ», «Սան Ժոզեֆ») 155 երեխաներ⁸⁵: Ամերիկյան միսիոներական դպրոցներում էր սովորում Քերմանշահի և Ուրմիայի մարզի հայ երեխաների մեծ մասը: Համադանի ամերիկյան երկու դպրոցներում (արական և իգական) 1925—1926 ուսումնական տարում սովորում էին տեղի հայերի 100 երեխա:

Միսիոներական դպրոցներում հայոց լեզվի, պատմության և դրականության ժամերը սահմանափակ էին, իսկ մի շարք դեպքերում գործնական ընթացք էր ստացել ուժացման միտումը: Համադանի ամերիկյան դպրոցներում, օրինակ, հայոց լեզուն ծրագրից հանված էր: Չնայած տեղի հայ բողոքական համայնքի դիմումներին ու բողոքներին, այդ դպրոցները շարունակում էին իրենց նման վարվելակերպը⁸⁶:

Ժողովրդական լուսավորության ղեկավարը և, մասնավորապես, դպրոցները հոգևորականության վարույթից անջատելը Իրանում

⁸¹ «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 52—53:

⁸² Ավ. Եղգարյան, «Իրանի Չհարմհալ գավառը», էջ 66—72:

⁸³ «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 63:

⁸⁴ Grosseclose, Elgin, Introduction to Iran, New-York, 1947, p. 113.

⁸⁵ «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 114—116:

⁸⁶ Նույն տեղում, էջ 81—82:

թուլացրին միսիոներների ազդեցությունը: 30-ական թվականների սկզբին միսիոներական գրեթե բոլոր դպրոցները փակվեցին:

Այս հանգամանքը նպաստեց գաղութում դպրոցաշինության գործի զարգացմանը: 1932—1933 թթ. հնդկաստանցի բարերար Դավիթ Դավթյանի միջոցներով Թեհրանում բացվեց «Քուշեշ-Դավթյան» դպրոցը: Այդ իսկ տարիներին դպրոց հիմնվեց նաև Մես-ջեդե-Սուլեյմանում:

30-ական թվականների սկզբին Թեհրանի, Թավրիզի, Նոր Ջուղայի և այլ քաղաքների հայկական դպրոցներում ուսումնական նոր ծրագրեր մտցվեցին: Ավելի մեծ ուշադրություն դարձվեց բնագիտական առարկաներին, ավելացավ պարսկերեն և անգլերեն լեզուներին հատկացվող դասաժամերի թիվը⁸⁷:

1936 թ. շրջադարձային եղավ իրանահայ դպրոցի համար:

Դեռևս 20-ական թվականներին Ռեզ շահի կիրառած քաղաքականությունը, որի նպատակն էր «իրանացնել» երկրի բոլոր ժողովուրդներին, շուտով շոշափեց նաև տեղի հայ բնակչության շահերը:

Այն բանից հետո, երբ Ռեզ շահի բուրժուա-կալվածատիրական բռնկի կառավարությունը սկսեց հակվել ֆաշիստական Գերմանիայի կողմը և երկրում իրագործել շովինիստական քաղաքականություն, մեկը մյուսի հետևից հայկական դպրոցները սկսեցին փակվել:

Սակայն իրանահայ գաղութը չհաշտվեց դրա հետ: Հայկական բնակավայրերում սկսեցին կազմակերպվել հայոց լեզվի դասընթացներ, գրադարաններ, հայոց պատմությունն ու գրականությունն ուսումնասիրող խմբակներ, միջոցառումներ, որոնք կոչված էին փոխարինելու հայկական դպրոցին: Այս գործում առանձնահատուկ դեր խաղացին Թեհրանի, Թավրիզի, Նոր Ջուղայի և մի շարք այլ քաղաքների հայ կանանց կազմակերպությունները:

Գաղութն առանց դպրոցների մնաց ընդհուպ մինչև 1941 թ.: Ռեզ շահի հրաժարումից հետո հայկական դպրոցները վերստին հնարավորություն ստացան շարունակել իրենց գոյությունը:

Հայկական դպրոցների վերականգնման պրոցեսը ըստ ժամանակի ամենուրեք միատեսակ չէր: Այսպես, Թեհրանի դպրոցները վերականգնվեցին 1941—1944 թթ., Աբադանի «Ադար» դպրոցը իր գործունեությունը վերսկսեց 1943 թ., իսկ Թավրիզի «Արամյան» դպրոցը՝ 1944 թ.⁸⁸: Գաղութի դպրոցների մեծ մասը կրկին կյանքի

⁸⁷ «Վերածնունդ», 1930, 28 նոյեմբերի:

⁸⁸ «Վերածնունդ», 1945, 16 մայիսի:

կողմեց միայն 50-ական թվականների կեսերին, որի հիմնական պատճառը երկրի քաղաքական անկայուն վիճակն էր:

Այդ նույն տարիներին սկսեցին գործել ոչ միայն քաղաքների, այլև դուռզական վայրերի՝ Փերիայի, Զհարմհալի, Ռեզայեի, իսկ ավելի ուշ՝ նաև Ղարադաղի դպրոցները:

Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին և ետ-պատերազմյան շրջանում դպրոցական շինարարությունը հատկապես մեծ թափ ստացավ Թեհրանում, որի հայ բնակչությունն արագ աճում էր: 1941 թ. Թեհրանի հյուսիսային արվարձաններում՝ Բեջաթաբադում, Ֆիշերաբադում և Համջեդիեում բնակություն հաստատեցին գյուղերից տեղափոխված մի քանի հազար հայ գյուղացիներ: Նրանց համար մի խումբ Թեհրանաբնակ հայերի միջոցներով 1942 թ. Բեջաթաբադում կառուցվեց «Դանայի» դպրոցը:

1946 թ. հետո Թեհրանի հյուսիսային ծայրամասում հիմնվեցին նաև «Արամ» («Աբովյան»), «Շահ Ազիզ» (Հեշմաթիե թաղում) և «Հախնազարյան» (Յուսուֆաբադում) դպրոցները:

Հետագա տարիներին Յուսուֆաբադ թաղում բացվեց «Արաքս» դպրոցը, Բահսր թաղում՝ «Անի» («Ռոստոմ»), իսկ Սեյեդ թաղում՝ «Շահ Արաս» դպրոցները:

1954 թ. Թեհրանցի Մ. Սարգսյանի միջոցներով կազմակերպվեց «Մարիամյան» դպրոցը: Վերջինիս եռահարկ շենքում տեղավորվեցին նաև «Քուշեշ-Դավթյան» դպրոցի աղջիկների դասարանները: 1957—1958 թթ. նոր շենքում սկսեց պարապմունքները նաև «Քուշեշ-Դավթյան» դպրոցը: Քառահարկ այդ կառույցի շինարարության համար միջոցները հանգանակվել էին Թեհրանի հայ բնակչությունից: 1958 թ. Մ. Սահակյանի միջոցներով դպրոցի եռահարկ շենք կառուցվեց Հեշմաթիե թաղամասում: Նույն թվականին Մաջիդիե թաղում հիմնադրվեց «Արարատ» դպրոցը: 50—60-ական թվականներին Թեհրանում բացվեցին «Հուր», «Նաիրի» և «Թունյան» դպրոցները: 1960 թ. բարեգործ Այդինյանի նվիրած թաղամասում դրվեց «Արաքս» դպրոցի նոր շենքի հիմքը, որը բացվեց 1969 թ.:

Ետպատերազմյան տարիներին գաղութի մշակութային կենտրոններից մեկն էր Աբադան քաղաքը: 1949 թ. այնտեղ կառուցվեց «Աղաբ» դպրոցի նոր շենքը:

Այդ տարիներին դպրոցական նոր շենքեր երևան եկան նաև Մեշհեդում, Ռաշտում և այլ քաղաքներում:

Աշակերտների կողմից մայրենի լեզվի, պատմության և դրականության յուրացումն ապահովելու անհրաժեշտությունից դրդված

40—50-ական թվականներին տարրական դպրոցների մի մասը վերածվեց միջնակարգի: Ուսումնական պրոցեսի երկարաձգման շնորհիվ հնարավոր դարձավ ընդգրկել հայագիտական առարկաների ծրագրի լրիվ շրջանակը: Այդ ժամանակ միջնակարգ դպրոցներ դարձան Թեհրանի «Քուշեշ-Դավթյան», «Մարիամյան» և «Սահակյան», Աբադանի «Ադար», Թավրիզի «Արամյան-Հայկազյան», Նոր Զուղայի «Կատարինյան» և «Քանանյան» դպրոցները:

Տեղի թեմական մարմինների իրավասությանը ենթակա դպրոցներից բացի, Թեհրանում կան նաև մասնավոր դպրոցներ: Դրանք պետական ծրագրերին համաձայն երիտասարդությանը ուսուցանում են հայոց պատմություն, գրականություն և այլ առարկաներ: Այդ դպրոցներից մի քանիսն ունեն նաև անգլերեն կամ ֆրանսերեն լեզվի դասընթացներ:

Այդօրինակ մասնավոր դպրոցներից ամենահինը «Բոսթանն» է: Ներկայումս այն ունի նախապատրաստական բաժանմունքներ (աղջիկների և տղաների համար՝ առանձին), ինչպես նաև միջնակարգ իգական բաժին՝ տասներկուամյա տեղուկյամբ:

1946—1947 ուսումնական տարում բացվեց «Սանդուխտ», իսկ 1955 թ.՝ «Նուբար» դպրոցը: Վերջինս հիմնադրված է Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերության միջոցներով: Վերջին տաս տարում Թեհրանում ստեղծվել է ևս վեց մասնավոր դպրոց՝ «Բերսաբեն», «Թաբան», «Րաֆֆի», «Սթանշ», «Փարթովի», ինչպես նաև «Ալիշան» դպրոցը Վանաքում:

Բացի «Փարթովի-ից», որը միջնակարգ է, մյուս դպրոցներում ուսման տեղուկյունը վեց տարի է: Հիշված դպրոցներից միայն «Բերսաբեն» է իգական:

Այսպիսով, Թեհրանի ազգային 14 դպրոցներից թեմական մարմինների սեփականությունն են «Քուշեշ-Դավթյան», «Մարիամյան», «Սահակյան» և «Արաքս-Այդինյան» դպրոցների շենքերը: Մյուս դպրոցները տեղավորված են վարձու շենքերում: Տեղական թեմական մարմինների սեփականությունն են նաև Ահվազ, Ռեզայե, Համադան, Մեսքեդ-Սուլեյմանի, Ղազվին, Մեշհեդ, Փեհլեի, Ռաշտ, Քերմանշահ, ինչպես նաև Նոր Զուղա, Թավրիզ և Աբադան քաղաքների դպրոցական շենքերը:

Ներկայումս Թեհրանում 22 (ներառյալ մասնավորները) հայկական դպրոց կա: Դրանցից 5-ը միջնակարգ են, 17-ը՝ տարրական: Եթե նկատի առնենք, որ դպրոցներից մի քանիսը բաղկացած են արական և իգական առանձին բաժանմունքներից, ապա քաղա-

քում տարրական դպրոցների թիվը փաստորեն 20-ից ավելի է։ Ամբողջ գաղութում գործում է 40 քաղաքային դպրոց։

Իրանահայ գաղութի դպրոցական կրթության համակարգին անմիջապես հարում են նաև մանկապարտեզները, որոնք, որպես կանոն, ունեն դպրոցական նախապատրաստական խմբեր։ Դեռևս 1899 թ. Թավրիզի բարեգործական ընկերությունը կիլավա թաղում բացել էր մանկապարտեզ, որն առաջինն էր երկրում։ 1907 թ. այդպիսի մանկապարտեզ բացվեց նաև Ղալա թաղամասում⁸⁹։ Ինչպես արդեն նշվեց, Նոր Զուղայում «Գեորգ Քանանյան» մանկապարտեզը հիմնվել է 1902—1905 թթ.։ Մոտավորապես նույն տարիներին Թեհրանում ստեղծվեց մանկապարտեզ, որը կրում էր «Մանկական սլալատ» անունը⁹⁰։

Ժամանակակից բնույթի էին Թեհրանում բացված «Բերսարե» (1931)⁹¹ և «Թումանյան» (1944) մանկապարտեզները։ Մեր հիշատակած բարերար Այդինյանի նվիրած հողակտորի վրա 1963 թ. Թեհրանում կառուցվեց «Քուշեշ» մանկապարտեզի շենքը։

1944 թ. նույնատիպ մանկապարտեզ հիմնադրվեց նաև Աբադանում⁹²։

Գաղութում դպրոցական կրթությունը կազմակերպված է եռաստիճան կարգով. միամյա, նախապատրաստական բաժանմունք, վեցամյա ժամկետով տարրական դպրոց և միջնակարգ դպրոց մինչև 12 (Արագանում՝ 11) դասարանը։ Իրանի հայկական դպրոցներում ուսուցումը տարվում է արևելահայ լեզվով։ 30-ական թվականներին Թեհրանի դպրոցների վերջին երկու դասարաններում անցնում էին նաև արևմտահայերեն, իսկ Նոր Զուղայի դպրոցներում՝ գրաբար։

Հայկական դպրոցների համար դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները կազմվում են տեղում։ Դրանց համար օգտագործվում են սփյուռքահայ այլ գաղութներում, ինչպես նաև Հայկական ՍՍՀ-ում հրատարակված դասագրքերը։

Գաղութի դպրոցները պահվում են միայն իրանահայ բնակչության միջոցներով։ Համեմատաբար ավելի բարեկարգ են քաղաքների դպրոցական շենքերը։ Գյուղական դպրոցները ավելի պակաս բարեկարգ պայմաններում են. ծվարած են փոքրիկ, հա-

⁸⁹ «Վերածնունդ», 1951, 5 մայիսի։

⁹⁰ «Վերածնունդ», 7 ապրիլի։

⁹¹ «Վերածնունդ», 1931, 29 հոկտեմբերի։

⁹² «Վերածնունդ», 1944, 13 ապրիլի։

ճախ խավար, կիսաքանդ, ձմռանը՝ խոնավ, իսկ ամռանը՝ փոշոտ տնակներում: Դրանց մեծ մասում ուսման տեղությունը 2-ից 4 տարի է: Դպրոցական միջոցների կարգավորման հարցը շարունակական ցավոտ խնդիր է դարձել գաղութի համար: Դպրոցների միջոցները կազմվում են հարուստ անձանց կտակներից, նվիրատվություններից, եկեղեցիների նպաստներից ու բարեգործական ընկերությունների անդամավճարներից: Այդ միջոցների նշանակալից մասը գոյանում է ուսման վարձից:

Իրանական իշխանությունները դրամական բավարար օգնություն չեն ցուցաբերում դպրոցներին: Պետական նպաստ են ստանում միայն մի քանի դպրոցներ: Լուսավորության մինիստրությունը աշխատավարձ է վճարում միայն պարսից լեզվի և պետական ծրագրի մեջ մտնող մյուս առարկաների ուսուցիչներին:

Վճարովի ուսումը ծանր բեռ է հայ աշխատավոր խավերի համար: Ձնայած բարեգործական ընկերությունների եռանդուն ջանքերին, չունենոր ծնողների երեխաներից շատերը հարկադրված են հաճախել պետական դպրոցներ, ուր ուսման վարձը համեմատաբար ցածր է:

Ստատվոր հաշվումներով գաղութում սովորող աշակերտների թիվը հասնում է 15 հազարի: Սովորող երիտասարդության 95%-ը ազգային դպրոցներն է հաճախում: Հստ սոցիալական դրության նրանք հիմնականում հայ բնակչության հարուստ և ունեւոր խավի երեխաներն են: Այդ դպրոցներում ավելի փոքր թիվ են կազմում արհեստավորների, բանվորների ու գյուղացիների երեխաները:

* * *

Իրանահայ գրականության ակունքը աշուղական պոեզիան է, որ XII դ. մեծ զարգացում էր ապրում Նոր Զուղայում, ինչպես նաև Փերիայի, Չհարմհալի և այլ շրջաններում: Հայ գուսանական արվեստը իրանում շարունակում էր զարգանալ նաև հետագա դարերում, ընդհուպ մինչև XX դ.⁹³ Սակայն տեղի հայ գրականությունը ստեղծվում էր անբարենպաստ ժամանակաշրջանում (XVI—XIX) դդ.), երբ անկում էր ապրում առհասարակ պարսկական ամբողջ գրականությունը: Դրա հետևանքով, նույնիսկ XVII դ., երբ զաղու-

⁹³ Տե՛ս Ա. Մրեմյան, Աշուղ Հովհաննես, Վենետիկ, 1929, Աշուղ Ամիր օղի, Վենետիկ, 1930, Հայ բանաստեղծության մնացուկները Նոր Զուղայում և Հրեղ-կաստանում, Վիեննա, 1930, Աշուղ Հարություն օղի, Թեհրան, 1946, Իրանի նորագույն հայ աշուղներ, Վիեննա, 1925 և այլն:

թում ծաղկում էր մշակույթը, հայ գրականությունը, մասնավորապես բանաստեղծությունը, չկարողացավ բարձրանալ գուսանական քնարերգության մակարդակից: Գաղութում արձակ ու շափածո գրականությունն սկզբնավորվեց XIX դ., երբ երկրի գրականությունը վերածննդի առաջին նշաններն էր ցույց տալիս: Իրանահայ գրականության զարգացման վրա զգալի ազդեցություն են ունեցել XIX դ. երկրորդ կեսին առաջ եկած գրական այն հոսանքները, որոնք արտահայտում էին իրանական երիտասարդ բուրժուազիայի շահերը, իրանահայ գրական պրոցեսը նշանակալից շափով ձևավորվել է նաև Կովկասի և Ռուսաստանի, ինչպես նաև արտասահմանի հայկական մյուս գաղութների գրականությունների ներազդմամբ:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին իրանահայ գրականության զարգացման ընդունալ առանձնահատկությունը նոր ձևերի որոնումներն են, որոնումներ, որոնց արդյունքը թարգմանական մի շարք ստեղծագործությունների երևան գալն էր: Գրական կյանքի այս ժամանակաշրջանը նշանավորվում է հանրահայտ թարգմանիչներ Հովհաննես Մասեհյանի և Հովսեփ Միրզայանի ասպարեզ գալով:

Մասեհյան-թարգմանչի գրական գործունեությունը սկսվել է դեռևս նասրեդդին շահի պալատում: Նա շահի համար թարգմանել է մի բանի սակեղծագործություններ, այդ թվում Ալեքսանդր Դյումայի, Պյոռ Լոթի և Զարլզ Դիկկենսի մի քանի երկերը: Այդ տարիներին նա թարգմանել է նաև Մուլիերի մի քանի թատերգություններ:

Հովհաննես Մասեհյանի թարգմանություններն ոսկե բաժինը կազմում են Շեքսպիրի ստեղծագործությունները՝ «Համլետ», «Արքա Լիր», «Ռոմեո և Զուլիետա», «Օթելլո», «Վենետիկի վաճառականը», «Մակբեթ», «Ամսոսյին գիշերվա երազը», «Ոչնչից շատ աղմուկ», «Հուլիոս Կեսար», «Ինչպես կամենաք», «Անտոնիոս և Կլիսպատրա», «Կորիոլան», «Փոթորիկը»:

Հովհաննես Մասեհյանը Շեքսպիրի ստեղծագործությունների անդուդական թարգմանիչ լինելուց բացի, եղել է անվանի շեքսպիրագետ: Նա, բացի այդ, հայոց լեզվի ճանաչված նորարարներից մեկն էր:

Լեզուների անթերի իմացությունը (նա տիրապետում էր անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, արաբերենին, պարսկերենին և հայերենին), բարձր կրթվածությունն ու թարգմանչի բնատուր ձիրքը Հովհաննես Մասեհյանին դարձրին հայ թարգմանա-

կան գրականության դարավոր ավանդների արժանավոր ժառանգորդը:

Անցյալ դարի 90-ական թվականներին է սկսել իր թարգմանական գործունեությունը նաև Հովսեփ Միրզայանը: Նրա գրի առաջին փորձերից է Վալտեր Սկոտի «Էձակի լեդին» ստեղծագործությունը⁹⁴: 1894 թ. նա սկսում է նույն հեղինակի այլ գործի՝ «Կղզիարևակ լորդի» թարգմանությունը: Այն տպագրեց ժամանակին Թիֆլիսում գործող հրատարակչական ընկերությունը: Թիֆլիսում եղած ժամանակ Հ. Միրզայանը թարգմանել է Լեոնտոսովի «Դևը» պոեմը: Այդ, ինչպես նաև Թեհրանից նրա ուղարկած՝ Բ. Լիտտոնի «Պոմպեյի վերջին օրը» վեպի թարգմանությունը հետագայում լույս տեսան Թիֆլիսում:

Վերադառնալով Թեհրան Հ. Միրզայանը թարգմանում է Մոլիերի «Փլատը»⁹⁵ և Բայրոնի «Կորսարը»: Երկու թարգմանություններն էլ հրատարակվեցին Թեհրանում: Հետագա տարիներին նա իր թարգմանած բանաստեղծությունները ամփոփեց «Ծաղկաքաղ» ժողովածուի մեջ (ավելի քան 70 զանազան ոտանավորներ—700 քառատող): 1910 թ. Հովսեփ Միրզայանը թարգմանեց էդ. Ռոստանի «Միրսինո դը Բերժերակ» թատերգությունը:

Սկսած 1913 թ. Հովսեփ Միրզայանը ձեռնամուխ է լինում պարսից գրականության լավագույն ստեղծագործությունների թարգմանությանը: Այդ տարիներին նա հատվածներ է թարգմանում Սաադուց, Հաֆեզից, Բաբա Թահեր Օրիանիից: Օմար հայամից նրա կատարած թարգմանությունները, որ մինչ այսօր մնում են չգերազանցված, լույս տեսան քնարերգության սիրահար Մանուկ Մարտինի հրատարակությամբ: Դրանց հետ մեկտեղ տպագրվեցին Բաբա Թահերից և պարսիկ այլ բանաստեղծներից կատարված մի քանի թարգմանություններ: 30-ական թվականներին Հովսեփ Միրզայանը թարգմանում է երեք հատված Ֆիրդուսու «Շահնամեից»: Հ. Միրզայանը մի քանի բանաստեղծություն է

⁹⁴ Հովսեփ Միրզայանը սկսեց այդ ստեղծագործությունները դրարար խորհրդմանել, սակայն Հովհաննես Մասեհյանի խորհրդով հրաժարվեց այդ գաղափարից: Աշխարհաբարին տիրապետելու նպատակով, նա 1892 թ. ձեռնամուխ եղավ Սենկևիչի «Հրով և սրով» վեպի, ինչպես նաև Ջոնսոնի «Ռասելա» գրքի փորձնական թարգմանությանը:

⁹⁵ Հայ դերասանները այդ թատերգությունը բեմադրում են պալատում, որին ներկա է լինում Մուզա Ֆերէդ-դին-շահը:

թարգմանել նաև Ռաբինդրանաթ Տագորից, որի հետ նա հաստատվել էր բարեկամական կապեր:

1905—1911 թթ. իրանական հեղափոխության ազդեցությամբ դադութում սկսում է ձևավորվել բանաստեղծների ու գրողների նոր սերունդ, երևան են գալիս ստեղծագործություններ, որոնք և կազմում են իրանի արդի հայ դրականության հիմքը: 20-ական թվականներին Թավրիզում, Թեհրանում և մյուս քաղաքներում կազմվում են գրական զանազան միավորումներ: 1924 թ. Թեհրանում սկսեց լույս տեսնել գրական-գեղարվեստական «Նոր պատգամ» ամսագիրը: Այս ուղղությամբ կատարված հետազոտ քայլերի արդյունքը հղավ «Նոր էջ»⁹⁶ դրական միավորման ստեղծումը (1932 թ.), որը գործում է ցայսօր:

40—50-ական թվականներին առաջ եկան գրական այլ միավորումներ, որոնք, սակայն, երկար կյանք չունեցան: Տեղացի բանաստեղծների և գրողների՝ գրականության զարգացման գործին նպաստելու ձգտման ու ջանքերի արդյունքն էր 1961 թ. «Իրանի հայ գրողների միության» կազմակերպումը⁹⁷:

Գադութում գրական կենտրոնի ստեղծման հապաղումը բացատրվում է տեղացի գրողների՝ հայ ազգային գրականության հետ ունեցած ավանդական կապերի գոյությամբ:

Գադութի շատ բանաստեղծներ ու գրողներ կրել են Հովհաննես Թումանյանի, Նզիշե Զարենցի, Ավետիք Իսահակյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Միսաք Մեծարենցի՝ հատկապես Վահան Տերյանի ստեղծագործության ազդեցությունը⁹⁸: Իրանահայ բանաստեղծների ու գրողների խումբը իր արվեստը զարգացնում է հայ ազգային գրականության հունով:

Այս ուղղության հայտնի դեմքերից են Արամ Գառոնեն, Գևորգ Դարձին և Մարգար Ղաբաբեկյանը (Դև):

Արամ Գառոնեի⁹⁹ ստեղծագործությունների մեջ զգալի տեղ են գրավում հայրենիքի կարոտի ու թախծի տրամադրությունները, սակայն հին մտայնության բեռին հնազանդ բանաստեղծը ասես

⁹⁶ Նրբ միավորման անդամները օգնության համար դիմեցին «Վերածննդի» խմբագիր Հայկ Գարադաշին, նա հայտնեց, թե նրանց համար նոր էջ կբացի իր թերթում: Այստեղից էլ միավորման անվանումը:

⁹⁷ «Իրանահայ արդի գրողներ», Թեհրան, 1964, էջ 7:

⁹⁸ Ա. Տոնոյան, Անդաստան իրանահայ բանաստեղծության, Բեյրութ, 1963:

⁹⁹ Արամ Գառոնեն (Արամ Տեր-Րադդասարյան) ծնվել է 1905 թ. Թավրիզում: Նախնական և միջնակարգ կրթությունը ստացել է տեղի «Արամյան» և «Կենտրոնական» թեմական դպրոցներում:

հեռանում է իրականությունից, տրվում անցյալի հիշողությունների ու հուշերին: Նա չի ուզում նկատել Սովետական Հայաստանի գոյությունը և գովերգում է հայերի վերացական, ոչ երկրային հայրենիքը:

1924 թ. Թավրիզում լույս են տեսել նրա «Հրաժեշտի պոեմ», «Բանաստեղծություններ», գրքերը, 1926 թ.¹⁰⁰ «Արա և Շամիրամ» գրքուկը: Արամ Գառոնի «Օրերի երգեր» ժողովածուն հրատարակվել է Լիոնում, 1930 թ.: 40—60-ական թվականներին լույս են տեսել Ա. Գառոնի մի քանի այլ բանաստեղծական ժողովածուները, ինչպես նաև «Արդարության ճանապարհով» վիպակը: Գառոնեն բանաստեղծություններ է գրում նաև մանուկների համար¹⁰⁰:

Գևորգ Դարձին¹⁰¹ իրանահայ գրականության այն փոքրաթիվ ներկայացուցիչներից է, որոնք իրենց նվիրել են թատերագրությանը: Առանձին գրքով հրատարակվել են նրա «Սիւմուշ և Սուդարի», «Արդարության ճանապարհին», «Ողջուն քեզ, Միլանո», «Մեսրոպ Մաշտոց» և այլ թատերագրություններ: «Մեսրոպ Մաշտոցը» 1962 թ. արժանացավ «Թեքեյան մշակութային ընկերության» (Բեյրութ) մրցանակին: 1964 թ. լույս տեսան նրա «Վահան և Ռազմ-դուխտ», «Անքավելին» և «Արյունոտ թաղը» թատերագրությունները, իսկ 1967 թ.¹⁰² «Հարազատ էջեր» բանաստեղծությունների ժողովածուն:

Դարձին հայտնի է նաև իր կատարած թարգմանություններով «Ռիչարդ Էրբորդ», «Տրիստան և Իզոլդա», «Լիոնի փոստատարը», «Զոհաբերումի գիշեր», «Աննա Քրիսթի», «Սիդը» և այլն¹⁰²:

Բանաստեղծ Դևր¹⁰³, շնայած «Նոր էջ» գրական միավորման հիմնադիր անդամներից մեկն է, վերջին ժամանակներս ստեղծագործական նկատառումներով հեռացել է միավորումից ու սակավ գիրք է գրավում: Դևր ստեղծագործության վրա նկատելի է Տերյանի պոեզիայի ուժեղ ազդեցությունը: Նրա բանաստեղծությունների տեքստերով երգահան Նիկոլ Գալանտերյանը գրել է մի քանի երգեր ու ռոմանսներ:

¹⁰⁰ «Իրանահայ արդի գրողներ», էջ 141:

¹⁰¹ Գևորգ Դարձին (Գևորգ Հովհաննիսյան-Խուզոյան) ծնվել է 1907 թ. Սամաստի ջրչանի Սուլամերիկ գյուղում: Սովորել է Թիֆլիսում, ապա Թավրիզի ֆրանսիացի լազարիստների դպրոցում: Մահացել է 1964 թ. Թեհրանում:

¹⁰² «Իրանահայ արդի գրողներ», էջ 171:

¹⁰³ Դևր ծնվել է 1901 թ. Թեհրանում: Կրթությունը ստացել է Թեհրանի ու Նոր Զուլայի հայկական դպրոցներում:

«Լժ նրդերը» խորագրով բանաստեղծությունների իր առաջին ժողովածուն Դեբ Հրատարակել է 1947 թ., նրա երկրորդ «Այս երկար ճամփան» ժողովածուն՝ լույս ընծայեց Հայպետհրատը, 1963 թ.¹⁰⁴:

Գրական «նոր էջ» միավորման անդամները, ինչպես նաև դրողների և բանաստեղծների երիտասարդ սերնդի մի քանի ներկայացուցիչներ փորձում են իրենց ստեղծագործության մեջ կիրառել գրական ժամանակակից ձևեր և գեղարվեստական արտահայտչամիջոցներ: Այդ գրողները մոտիկից և լավ ծանոթ են համաշխարհային արվեստի լավագույն նմուշներին:

Նոր, արդի ոճաձևերի յուրացման ուղղությամբ առաջին քայլերն անելու պատիվը, «նոր էջ» կազմակերպությունը նախաձեռնողներին մեկին՝ Հրանտ Ֆալյանին է¹⁰⁵:

Նրա առաջին «Թշնամիներ» պատմվածքը տպագրվել է 1908 թ., Բաքվում: Իր անդրանիկ «նոր աչքեր» վերնագրով ժողովածուն Հ. Ֆալյանը հրատարակել է Թեհրանում, 1961 թ.: Նրա բազմաթիվ պատմվածքները դեռևս անտիպ են մնում:

«նոր էջ» միավորման մեջ որպես նրա հիմնադիր-անդամներ, Ֆալյանից բացի մտնում են Դեբ, Աշոտ Ասլանը, Արան (Արա Տևր-Հովհաննիսյան), Գալուստ Խանենցը, Արշավիր Մկրտիչը, Արմեն Գեսը: Ավելի ուշ, միավորման անդամ դարձան Զորայր Միրզայանն ու Ռ. Բենը (Ռուբեն Հովհաննիսյանը): Միավորման անդամները ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս մեծ աշխատանք են տանում հայ ընթերցողին համաշխարհային գրականության նվաճումներին ծանոթացնելու, ինչպես նաև իրանական ընթերցողին հայ և սովետահայ գրականության նվաճումներին հաղորդակից դարձնելու ուղղությամբ:

«նոր էջ» միավորման մասնակիցների ներկայացուցիչներից հիշատակման արժանի է Զորայր (Զորիկ) Միրզայանի անունը¹⁰⁶: Զ. Միրզայանը բանաստեղծի, արձակագրի քանքարը զուգակցում էր թարգմանչական, գրականագիտական ձիրքի հետ: Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն էր «Թաց մայթը»: Նա հա-

¹⁰⁴ «Երանհայ արդի գրողներ», էջ 131:

¹⁰⁵ Հրանտ Ֆալյանը ծնվել է 1884 թ., Ռեշտում: Սովորել է ծննդավայրում, ապա՝ Թեհրանում: Ապրել է Նոր Զուղայում, Թիֆլիսում, Թեհրանում, ուր և մահացել է 1966 թ.:

¹⁰⁶ Զորայր Միրզայանը ծնվել է 1916 թ. Թեհրանում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ազգային դպրոցում, ապա ավարտել է ամերիկյան քոլեջ: Մահացել է 1964 թ., Թեհրանում:

ներեն է թարգմանել Բաբա Թահնրի քառյակները: Օմար Խայամից նրա թարգմանած 30 քառյակները մտել են իր հոր՝ Հովսեփ Միրզայանի «Օմար Խայամ» թարգմանական ժողովածուի մեջ: Զ. Միրզայանի գրչին են պատկանում Ֆ. Դոստոևսկու «Հեզիկը» վիպակի, Մարկ Տվենի «Պատմվածքների» թարգմանությունը: Նրա մի քանի թարգմանություններ դեռևս պահվում են ձեռագիր վիճակում: Դրանցից են Դոստոևսկու «Նետոշկա Նեզվանովան», Գարսիա Լորկայի «Բանաստեղծությունները», Կոկտոյի «Տարօրինակ ընտանիքը», Կարլ Վիթլինգերի «Ճանաչում եք դուք Միրզաթինը», էրսեին Քոլդուելի «Պատմվածքների ժողովածուն» և այլն¹⁰¹:

Զ. Միրզայանը «Աբու Ալի Իբն Սինայի կյանքը» և «Պարսից գրականության պատմություն» ուսումնասիրությունների հեղինակն է: Իրանահայ գրականության բնորոշ առանձնահատկությունը արձակագիրների (արդեն չենք խոսում թատերագրության մասին) փոքրաթիվ լինելն է: Բնորոշ է նաև վեպի ժանրի բացակայությունը, երևույթներ, որոնք նկատելի են նաև արդի պարսից գրականության մեջ:

* * *

Իրանահայ գեղանկարչության առաջին նմուշները վերաբերում են XIX դ.¹⁰²: Սակայն գաղութում գեղանկարչությունը իր ծաղկմանն հասավ XVII դ., նոր Զուղայում: Տեղացի վարպետները, հենվելով հայ գեղանկարչության ավանդների վրա, յուրացրին սեֆյան շրջանի Իրանի գեղանկարչության լավագույն նվաճումները և ստեղծեցին մի նոր, բուրրովին ինքնատիպ արվեստ: Հայտնի են այդ ժամանակի՝ գրքային մանրանկարչության, որմնանկարի և այլ ժանրերի վարպետներ, մանրանկարիչ Հակոբ Զուղայեցու¹⁰³, նկարիչ-

¹⁰¹ «Իրանահայ արդի գրողներ», էջ 391, «նոր էջ», Թեհրան, 1965, № 14, էջ 7—8:

¹⁰² Հայաստանի պատկերասրահում պահվում է մանրանկարիչ Իսիհատ Անեցու (1356 թ., Սուլեյմանիեում) ծաղկած աստվածաշունչը (տե՛ս Լ. Демнека, Живопись Ирана, стр. 61—62):

¹⁰³ Հակոբ Զուղայեցու վրձինն են պատկանում «Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն» և այլ հույակապ մանրանկարներ, որոնք պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (Տե՛ս Լ. А. Дурново, Минпаторя Армении, Ереван, 1952, стр. 59—60):

ներ Մինասի¹¹⁰, Հովհաննես Մրքուզի¹¹¹, Բողդան Սալթանովի¹¹² անունները:

XVII դ. վերջերից սկսած հայ գեղանկարչությունը, ինչպես և ամբողջ իրանական նկարչական արվեստը, խոր լճացում ապրեց:

Ժամանակակից իրանահայ գեղանկարչությունը սկզբնավորվեց ու սկսեց ձևավորվել XIX դ. երկրորդ կեսին:

«Այդ շրջանի արվեստը,—նշում է Դեյնեկեն,—հիմնականում մնալով որպես տիրող վերնախավի արվեստ... սկսում է արտացոլել ֆեոդալական հասարակության ընդերքում ծնվող բուրժուազիայի գաղափարախոսությունը: Արևմտաեվրոպական գեղանկարչությանը հաղորդակից լինելու շնորհիվ նկարչությունը ընդունում է նոր ձևեր»¹¹³: Այդ ժամանակաշրջանի հայկական արվեստի ներկայացուցիչը իրանում Հակոբ Հովնաթանյանն էր (1806—1881), որը նասրեդդին շահից ստացել էր «Նաղաշբաշի» տիտղոսը¹¹⁴:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին իրանահայ նկարչությունը կրեց նաև Հայաստանի, Կովկասի ու Ռուսաստանի հայ նկարիչների արվեստի ազդեցությունը: 1905—1911 թթ. իրանական հեղափոխության և դրան հաջորդած շրջանում այդ ազդեցությունն էլ ավելի ուժեղացավ:

Այդ տարիներին և, հատկապես 20-ական թվականներին, Թավրիզում, Թեհրանում, Նոր Զուզայում և մի քանի այլ քաղաքներում հիմնվեցին նկարիչների միություններ և ընկերություններ, բացվեցին սրահներ: Տեղացի հայ նկարիչներից մի քանիսը սկսեցին սովորել նկարչություն պարսկական, ինչպես նաև եվրոպական արվեստի նկարիչների դպրոցներում: 1924 թ. Թեհրանում հրատարակված «Նոր պատգամ» դրական-գեղարվեստական ամսագիրը բանաստեղծներից ու գրողներից բացի իր շուրջը համախմբեց նաև նկարիչներին:

¹¹⁰ Նկարիչ Մինասը Նոր Զուզայում որմնանկարներով զարդարել է Շահ Աբաս Ա-ի պալատը, եկեղեցիները, վաճառականների տները (տե՛ս Առաքել Դավրիժեցի, «Պատմություն», էջ 409—412): Ա. Նոնմյան, Նոր Զուզայի օձ դարու որմնանկարչական հուշարձանը, Նյու-Յորք, 1942 թ., էջ 28, 30—31:

¹¹¹ Հովհաննես Մրքուզին են Ամենափրկիչ վանքի որմնանկարները (տե՛ս Գ. Լեոնյան, «Հովհաննես Վ. Մրքուզ», «Էջմիածին», 1944, № 1, էջ 20—34):

¹¹² Բողդան Սալթանովի ստեղծագործություններից մեկը «Խորհրդավոր ընթերիք», որ կատարված է պղնձե տախտակի վրա, հայ վաճառական Զաքարիան 1860 թ. նվիրել էր Ալեքսեյ Միխայլովիչ ցարին: Բողդան Սալթանովը հետագայում Մոսկվայի Զինապալատի առաջատար նկարիչներից մեկը դարձավ:

¹¹³ Д. Дейнека, Живопись Ирана, М., 1938, стр. 152.

¹¹⁴ Նաղաշբաշի—նկարչագետ, մեծ նկարիչ:

Սակայն 20-ական, ինչպես նաև 30-ական թվականներին արվեստի զարգացման նոր ուղիներ որոնելիս նկարիչները հաճախ նախապատվությունը տալիս էին անցյալի ավանդույթներին, փորձելով դրանց մեջ գտնել արդի իրականությունն արտահայտելու միջոցներ: Ամենայն հավանականությամբ դրանով պետք է բացատրել նկարիչների այդ շրջանում դրսևորած ձգտումը՝ հարել դասական ուղղությանը, իսկ իրենց համար ստեղծագործական ասպարեզ դարձնել որմնակարային արվեստն ու գրքային մանրանկարչությունը:

Իրենց ընտրած այս ճանապարհին հայ նկարիչները, որպես կանոն, ընկնում էին իրանական գեղանկարչության, հատկապես նրա հին ուղղությունների ազդեցության տակ:

Գաղութում գեղանկարչության զարգացման այդ շրջանի ներկայացուցիչներից է Անդրե Սևրյուզինը (Դարվիշ)¹¹⁵, նա գեղանկարչությամբ սկսել է զբաղվել վաղ հասակից: Արվեստի տարբեր ուղղություններին մոտիկից ծանոթանալու նպատակով նա 1912 թ. այցելել է Եվրոպա, եղել ժնևում, Փարիզում: Առաջին համաշխարհային պատերազմն սկսելուն պես նկարիչը վերադառնում է Իրան և պատերազմի ավարտից հետո ստեղծում է գործեր, որոնց վրա ակնհայտ է Արևմուտքի արվեստի վարպետների ազդեցությունը: 1922 թ. Անդրե Սևրյուզինը դառնում է այդ ժամանակ Թիֆլիսում գործող հայկական արվեստի տան անդամ:

Սակայն հիշյալ տարիներին Սևրյուզինը ստեղծագործական որոնումների շրջան էր ապրում: 1925 թ. նա մտադրվում է Ֆիրդուսու «Շահնամեի» թեմաներով նկարների շարք ստեղծել: Այդ նպատակին նա նվիրաբերեց իր կյանքի տասը տարիները: Սևրյուզինի այդ նկարները ցուցադրվեցին 1934 թ. Թեհրանում բացված ցուցահանդեսում, իսկ հաջորդ տարին՝ Հնդկաստանի Բոմբեյ և Կալկաթա քաղաքներում, 1936 թ. սկզբին՝ Վիեննայում¹¹⁶:

Ինչպես վկայում են արվեստաբանները, այդ նկարներում դրսևորվել է գույների բազմազանությունն ու հարստությունն զգա-

¹¹⁵ Իր ստեղծագործությունները Սևրյուզինը ստորագրում էր «Դարվիշ Փարվանդեհ Իրան»: Նա ծնվել է Թեհրանում, 1896 թ., լուսանկարիչ-գեղանկարիչ Անթուան Սևրյուզինի ընտանիքում: Սովորել է տեղի «Ման Լուի» ֆրանսիական դպրոցում:

¹¹⁶ «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 278—279: «Ալիք», 1936, 8 մարտի, «Վերածնունդ», 1934, 10 փետրվարի:

լու կարողութիւնն՝ Սակայն իր մի քանի գործերում Սերյուդինը ընդօրինակում է միջնադարյան իրանական մանրանկարչության ոճը¹¹⁷։

30-ական թվականներին գաղութում գեղանկարչության զարգացումը կապվում է նաև Սարգիս հաշատրյանի անվան հետ¹¹⁸։ Նրան չի կարելի իրանահայ գաղութի նկարիչների շարքը դասել, քանի որ մշտապես չի բնակվել Իրանում։ Սակայն Ս. հաշատրյանի ստեղծագործութիւնը սերտորեն կապված է այդ երկրի հետ։ 1931—1933 թթ. ընկած ժամանակամիջոցում երկու անգամ այցելելով Իրան, նա ուսումնասիրում է Ալի Գափուի պալատների, Չեհել Սուրթունի, Քեյսարիի շահական շուկայի և Աշրաֆի աթոռանիստի, Նոր Զուլայի հնագույն տների որմնանկարները, ինչպես նաև Ալահվերդի կամրջի դիմանկարները։ Իր երևակայության ուժով նա կարողացավ վերակերտել Սեֆյան Իրանի որմնանկարային արվեստի դրեթե ոչնչացած գլուխգործոցները և դրանք համաշխարհային արվեստի սեփականութիւնը դարձնել։

1932 թ. փետրվարի 25-ին նրա ուրվանկարների մի մասը ցուցադրվեց Փարիզի Գիմե սրահում։ Մի այլ ցուցահանդես, որ կազմված էր նրա 150 աշխատանքներից, բացվեց Թեհրանում, 1933 թ. մարտի 11-ին, իսկ 1934 թ. ապրիլին՝ կրկին Փարիզում Ժորժ Պետիի պատկերասրահում։ Այնուհետև Ս. հաշատրյանի դործերի պատճենների ցուցահանդեսներ են կազմակերպում Նյու-Յորքում, Լոնդոնում, Կոպենհագենում, Ստոկհոլմում, Օսլոյում, Բեռլինում և Կահիրեում¹¹⁹։

Նա պարզել է նաև որմնանկարների հեղինակների, և նրանց թվում՝ նկարիչ Մինասի և XVII դ. ուրիշ հայ վարպետների անունները։

20—30-ական թվականները անցման ժամանակաշրջան էին գաղութում գեղանկարչության արվեստի զարգացման համար։ Ներկայումս Անդրե Սերյուդինի և Սարգիս հաշատրյանի օրինակին նկարիչներից միայն մի քանիսն են հետևում։ Առանձին դեպքերում էլ ոմանք ուղղակի պատճենում են նրանց։

¹¹⁷ Մ. Ղազարյան, Իրանի ժամանակակից հայ նկարիչները, «Սովետական Հայաստան», 1966, № 9, էջ 24։

¹¹⁸ Սարգիս հաշատրյանը ծնվել է Մալաթիայում (Արևմտյան Հայաստան)։ Սովորել է Կարինի Մանսյարյան վարժարանում, ապա Իտալիայում և Ֆրանսիայում։ Ապրել է Կ. Պոլսում, Կովկասում, Եգիպտոսում, Իրանում, Հնդկաստանում, ԱՄՆ-ում։ Մահացել է 1947 թ.։ 1913 թ. Հայաստանում եղած ժամանակ ստեղծել է «Արարատյան հարթավայրի կյանքը» նկարաշարը։

¹¹⁹ «Վերածնունդ», 1932, 9 հունիսի, 1933, 21 մայիսի, 1934, 17 մայիսի, 1936, 12 սեպտեմբերի, 1937, 28 մարտի։

իրանահա, արդի գեղանկարչության դեմքը բնորոշում է հտ-պատերազմյան շրջանում ձևավորված, առավելապես երիտասարդ նկարիչների արվեստը, որն աչքի է զարնվում բազմազանությամբ, նոր աշխարհայեցողությամբ և վառ անհատականությամբ: Հավատարիմ X VII դ. ի վեր գաղութում ստեղծված ավանդույթին, նրանք իրենց ստեղծագործություններում յուրացնում են նաև այն նորը, ինչով հարուստ է ժամանակակից արվեստը:

Այդ նկարիչների շարքում իր ինքնատիպ արվեստով հատուկ տեղ է գրավում Ավագ Հայրապետյանը: Բնանկարներում և կենցաղային ուրվանկարներում նա ձգտում է յուրօրինակ ձևով արտահայտել բնության ու կյանքի նկատմամբ իր վերաբերմունքը: Դրան հեղինակը հասնում է դույնների, երանգների ու նրբերանգների բազմազան զուգակցումներով: Նրա բնանկարներից առանձնապես ուշագրավ են «Ժառերով բնանկար» և «Պարսկական բնանկար» կտավները: Կենցաղային գեղանկարչության ժանրին նկարիչը դիմել է դեռևս 50-ական թվականներին, ստեղծելով խաղաղության թեմային նվիրված մի շարք գործեր: Դրանցից է «Ստորագրությունների հավաքումը Ստոկհոլմյան կոչի տակ» նկարը: Հայրապետյանի կենցաղային ժանրի լավագույն ստեղծագործություններից մեկն է «Թեհրանի շուկայում» կտավը¹²⁰:

Նոր Զուլայի նկարիչներ Ծրվանդ Նահապետյանի և Սմբատ Կյուրեղյանի գործերում արտացոլված է հեղինակների ձգտումը պատմել հասարակ մարդկանց, նրանց անմխիթար կյանքի մասին: Ծրվանդ Նահապետյանը այդ անում է դույնների («Փողոց Իսֆահանում»), իսկ Սմբատ Կյուրեղյանը՝ գյուղացիների կոպտացած, մտասուլզ դեմքերը լույսով ողողուն շրջակա բնությանը հակադրելու միջոցով: Թավրիզաբնակ նկարիչ Աշոտ Կուլյանը ստեղծել է յուրակերպ դիմանկարների մի շարք: Նա միաժամանակ իր ուժերը փորձում է գորգային ուրվանկարների ստեղծման ասպարեզում: Դրանցում նկարիչը առավելապես ելնում է հայկական գորգագործության վաղեմի ավանդներից, որոնք աչքի են ընկնում նախշերի, երանգաշարի ինքնատիպությամբ¹²¹:

Նկարիչ Միքայել Շահբազյանին հրապուրում են հայկական գյուղերի բնապատկերները, ճարտարապետական կիսավեր հուշարձանների տեսքը: Զրանկարային իր նուրբ գործերում նկարիչը այդ

¹²⁰ Մ. Ղազարյան. Իրանի ժամանակակից հայ նկարիչները, «Սովետական Հայաստան», 1966, № 9, էջ 23:

¹²¹ Նույն տեղում:

ամենը պատկերում է բանաստեղծական ոգեշնչմամբ: նկարիչների վերոհիշյալ խմբից են նաև Տիգրան Բազիլը և ուրիշներ:

Նվրոսյական գեղարվեստական ուսումնարաններում ուսած կամ Արևմուտքի ազդեցության տակ ընկած հայ նկարիչների մի ու մեծաթիվ խումբ արդի իրանահայ գեղանկարչության մեջ հետևում է մոդեռնիստական հոսանքին: Վեռջինիս էն հարում կուբիզմի հետևորդ Մարգո Գրիգորյանը, աբստրակցիոնիստ Հարություն Մինասյանը, ինչպես նաև Էդվարդ Այվազյանը, Սեդրակ Ղազարյանը և Սիրակ Մևքումյանը: Նրանցից շատերը զուրկ չեն տաղանդից: Այդ խմբի նկարիչների հաջողված նկարներից են Մարգո Գրիգորյանի «Թանվորուհին» և Սեդրակ Ղազարյանի «Կայարանում» կտավները¹²²:

* * *

Գաղութում երաժշտական արվեստը սկսել է զարգանալ դեռևս XVII դ.: Ընդհուպ մինչև XX դ. այն գոյություն ունեւ գուսանական երգի ձևով:

Սակայն ժամանակակից հասկացողությամբ երաժշտություն իրանահայ գաղութում սկսել է երևան գալ XIX դ. և XX դ. սահմանագծում: Իրանահայերի արվեստի այս ճյուղի ձևավորման գործում նպաստել է Կովկասի երաժշտական մշակույթը: Սակայն հայ երաժիշտներն ու երգահանները չկարողացան հասնել գաղութում երաժշտական բարձր մակարդակի մշակույթի ստեղծման: Նրանցից միայն քչերին հաջողվեց մի քանի ուշագրավ գործեր ստեղծել:

Իրանահայ երաժշտական արվեստի զարգացման մեջ նշանավոր դեր ունի երաժիշտ և խմբավար Լևոն Գրիգորյանը¹²³: Պատանեկան տարիներին նա ջութակի դասեր էր առնում ինքնուս երաժիշտ Արտաշես Տեր-Հովհաննիսյանի մոտ, որը XIX դ. վերջին թավրիզում կազմակերպեց «Երաժշտասիրաց միություն»: 1904 թ. Լևոն Գրիգորյանը երաժշտություն էր դասավանդում Ռաշտի հայկական դպրոցում, իսկ 1905 թ.՝ Թավրիզի Հայկազյան-Թամարյան դպրոցում:

Երաժշտական կրթությունը լրացնելու անհրաժեշտությունը Լևոն Գրիգորյանին բերում է Թիֆլիս, ուր նա չորս տմիս շարունակ

¹²² Մ. Ղազարյան, նշվ. աշխ.:

¹²³ Լևոն Գրիգորյանը ծնվել է 1886 թ., Թավրիզում: Կրթությունը, այդ թվում և երաժշտական նախնական կրթությունը, ստացել է տեղի «Հայկազյան» դպրոցում:

սովորում է ժամանակի հայտնի ջութակահար Վասիլիի մոտ: Սակայն լուրջ գիտելիքներ ձեռք բերելու հրազր հանգիստ չէր տալիս նրան: 1910 թ. սեպտեմբերին Գրիգորյանին հաջողվում է գնալ Բելգիա, ուր նա սկսում է ղասեր վերցնել բրյուսելցի նշանավոր ջութակահար Թոմսոնի դպրոցում:

1912 թ. Լևոն Գրիգորյանը դասավանդում է Թավրիզի թեմական դպրոցում: Այս շրջանում էլ նա ծավալում է խմբավարական գործունեություն: 1915—1916 թթ. Թավրիզում նա հիմնում է «Սալոն» նվագախումբը, որն ընդհուպ մինչև 1946 թ. մի ժամանակահատվածում էր վայելում քաղաքում: Այնուհետև Թեհրան փոխադրվելով, Լևոն Գրիգորյանը կազմակերպում է «Գուսան» երգչախումբը, որը, սակայն, միայն մի քանի համերգ տվեց 1950 և 1951 թվականներին:

Լևոն Գրիգորյանի գրչին են պատկանում հայկական ժողովրդական մի շարք երգերի մշակումներ: Նա ձայնագրել է Ավետիք Իսահակյանի մի քանի բանաստեղծությունները: Լևոն Գրիգորյանը նաև պարսկերեն երգերի մշակումների հեղինակ է:

Իրանահայ գաղութի հետ է կապված հայ ականավոր երգահան Նիկոլ Գալանտերյանի կյանքի ու ստեղծագործության նշանակալից մասը¹²⁴:

Այն սկսվել է 1911 թ., երբ «Հայկազյան» դպրոցի հոգաբարձության հրավերով նա որպես երաժշտության ուսուցիչ փոխադրվում է Թեհրան: Այստեղ նա մնում է մինչև իր մահը՝ 1944 թ. մարտի 2-ը:

Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործական ուղին սկսվում է Սուխումիի (Աբխազիա) մոտ գտնվող Ցեբելդա գյուղից, որի հայկական դպրոցում 1910—1911 թթ. նա երաժշտություն էր դասավանդում: Այստեղ Գալանտերյանը գրում է իր առաջին երգը՝ Ավետիք Իսահակյանի խոսքի հիման վրա: Ապա Թիֆլիսում Վահան Տերյանի, Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի տեքստերով մի քանի նոր երգ է գրում: Թեհրանում բնակվելու տևաջին տարիներին նա Վահան Տերյանի բանաստեղծությունների

¹²⁴ Նիկոլ Գալանտերյանը ծնվել է 1881 թ. սեպտեմբերի 7-ին Ակն (Արևմտյան Հայաստան) քաղաքում: 1897 թ. ընտանիքով տեղափոխվել է Վառնա (Բուլղարիա), 1900—1903 թթ. սովորել է Գևորգյան ճեմարանում, մինչև 1910 թ. ապրել ու աշխատել է Բուլղարիայում, ապա Թիֆլիսում: Այդտեղից նա անցել է Իրան (նրա մասին մանրամասն տե՛ս Ա. Նրեմյան, Երգահան Նիկոլ Գալանտերյան, Թեհրան, 1947):

Հիման վրա գրում է ևս երկու երգ, ինչպես նաև «Զարի վերջը» մանկական օպերան¹²⁵։

1924 թ. սկսվում է Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործության ամենաբևեռուն շրջանը։ 1925 թ. բարեկամների և իր տաղանդի երկրպագուների օգնությամբ նա հանդես է գալիս հասարակական առաջին համերգով։ Այդպիսի համերգներն հետագայում կազմակերպվում էին պարբերաբար։ 1927 թ. Նիկոլ Գալանտերյանը գրում է իր առաջին լայն կտավի երաժշտական ստեղծագործությունը, Վահան Միքաբյանի «Լավվարի որսը» պոեմի մոտիվներով օպերան։ Զնայած մի շարք դժվարությունների, Թեհրանի երկսեռ դրամուրգի շրջանավարտների միության ջանքերով «Հայկազյան» դրամուրգի դահլիճում բեմադրվում են օպերայի նախերգանքն ու երկրորդ գործողությունը։ Այնուհետև օպերան բեմադրվում է զրադաշտականների ամառային թատրոնում։ 1931—1932 թթ. Նիկոլ Գալանտերյանը շուրջ հինգսունի Թումանյանի «Փարվանա» պոեմի թեմաներով գրում է համանուն օպերան, իսկ 1932 թ. նրա գրած «Հովիվ» օպերայի համար հիմք է ծառայում Վրթանես Փափազյանի «Լուրդալուր»¹²⁶ պոեմը։

Կյանքի վերջին տարիներին Նիկոլ Գալանտերյանը աշխատում էր «Անուշ» օպերայի վրա։ Նա դրել էր օպերայի նախերգանքն ու մի քանի հատվածներ, սակայն մահվան պատճառով մնաց անկատար։ Երգահանի թաղումը կատարվեց իր այս անավարտ օպերայի նախերգանքի մեղեդիների հնչյունների ներքո։

Նիկոլ Գալանտերյանի տաղանդը լայն ճանաչում գտավ միայն նրա մահից հետո, և դրանում իր լուծման ունի Սովետական Հայաստանի հասարակայնությունը։ 1946—1947 թթ. երգահանի բարեկամների խնդրանքով Գալանտերյանի դուստր Սեդա Գալանտերյանը Երևան ուղարկեց նրա ստեղծագործությունների ձեռագրերը։

Հատկապես սիրված են Նիկոլ Գալանտերյանի քնարական երգերն ու ռոմանսները։ Դրանց մի մասը, դրված Վահան Տերյանի, ինչպես նաև Մարգար Ղարաբեկյանի (Դև) և Արամ Երեմյանի տեքստերով, տեղ է գտել վերջերս Երևանում հրատարակված «Երգարանում»¹²⁷։ Նրա ստեղծագործություններից շատերը լույս են տեսել Կահիրեում տպագրված «Գանձարան» երգարանի 5-րդ և 6-րդ

¹²⁵ Ա. Երեմյան, Երգահան Նիկոլ Գալանտերյան, Արա Տեր-Հովհաննիսյան, Հուլիս երգահան Նիկոլ Գալանտերյանի մասին։

¹²⁶ Նույն տեղում։

¹²⁷ «Երգարան», կազմ. Շարա Տալյան և Վաղինակ Շաբադյան, Երևան, 1966։

գրքերում: Գալանտերյանի մանկական 6 երգերը տպագրված են Մ. Սարվարյանի «Նոր հասկերում»: Իրանում Ն. Գալանտերյանի երգերը հրատարակվել են Թեհրանում և Նոր Զուլայում, իսկ պարսկական 4 երգերի նրա մշակումները հրատարակված են Թեհրանի «Ռահնեմայե գենդեգի» թերթում¹²⁸:

Սակայն Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործական ժառանգությունը սրանով չի սահմանափակվում: Նրա շուրջ 1000 ստեղծագործությունները՝ օպերաներ, խմբերգեր, արիաներ և այլն, որոնք պահպանվում են Հայաստանի կոմպոզիտորների միությունում, մշակման ու հրատարակման են սպասում:

Ներկայումս գաղութում ապրող և ստեղծագործող կոմպոզիտորներից հիշատակության է արժանի Համբարձում Գրիգորյանի անունը¹²⁹: Իր գործունեությունը նա սկսել է 1914—1915 թթ., որպես Ղազվինի հայկական դպրոցի երաժշտության ուսուցիչ, ապա նույն պաշտոնով աշխատել է Ռաշտում (1917—1918 թթ.): 1923 թ. Զեխոստովակյան կառավարության թռչակով Համբարձում Գրիգորյանը սովորելու է մեկնել Պրագա, որտեղից նա 1924 թ. անցնում է Փարիզ: Այստեղ Հ. Գրիգորյանը սովորում է մոտ 4 տարի: Իրան վերադառնալուց հետո սկզբում դասավանդում է Ռաշտում, ապա փոխադրվում Թեհրան, որտեղ երկար տարիներ վարում էր «Քուշեշ-Դավթյան» դպրոցի երաժշտության դասերը:

Ուսուցչական գործունեությունից բացի Համբարձում Գրիգորյանը իր կազմակերպած «Կոմիտաս» երգչախմբի միջոցով (հիմն. 1929 թ.) լայն աշխատանք է ծավալում հայ երաժշտության մասսայականացման ուղղությամբ:

Կոմպոզիտոր Գրիգորյանի ստեղծագործությունը չափազանց բազմակողմանի է: Նրա գրչի արգասիքն են 100 և ավելի ստեղծագործություններ (խմբերգեր, մեներգեր, ժողովրդական ու գուսանական երգերի մշակումներ, քնարական երգեր և ռոմանսներ): Նա երգեր է գրել Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Շիրազի և սովետահայ մի քանի այլ բանաստեղծների տեքստերով: Քիչ չեն նաև տեղի հայ բանաստեղծների խոսքերով Հ. Գրիգորյանի դրած երգերը: Նա գրել է նաև ուսումնասիրություն Կոմիտասի կյանքի և գործունեության մասին¹³⁰:

¹²⁸ Ա. Երեմյան, Երգչան Նիկոլ Գալանտերյան:

¹²⁹ Համբարձում Գրիգորյանը ծնվել է Թավրիզում, միջնակարգ կրթությունը ստացել է տեղական «Կենտրոնական» թեմական դպրոցում, որտեղ և ստացել է նաև երաժշտական նախնական կրթությունը:

¹³⁰ «Ամենուն տարեգիրքը», 1958, էջ 406—407:

Գաղութի կյանքում նշանակալից է հրգչախմբերի դերը: Եթե դպրոցները տեղի հայերի համար մայրենի լեզուն, պատմությունն ու դրականությունը պահպանելու միջոց են, ապա միևնույն շափով երգչախմբերը ծառայում են ազգային հրգն ու հրաժշտությունը պահպանելու գործին:

Գաղութում հայ հրաժշտության ջանասեր տարածողներից է «Կոմիտաս» հրգչախումբը, որը անընդմեջ գոյություն ունի 41 տարի: Նրա հրգացանկը կազմված է սփյուռքահայ, ինչպես նաև սովետահայ կոմպոզիտորների հրգերից ու հրգչախմբային ստեղծագործություններից:

Երգչախումբը բաղկացած է 80 հոգուց, մասամբ երիտասարդությունից, որը նրա աշխատանքներին մասնակցում է ներքին մղումով, հրաժշտության նկատմամբ ունեցած իր սիրո թելադրանքով: Երգչախմբի կազմում են տաղանդավոր շատ երգիչներ ու կատարողներ: Օրինակ, «Կոմիտասում» ժամանակին հրգել է Հովհաննես Բաղալյանը: Համաձայն ստեղծված ավանդույթի հրգչախումբը տարեկան համերգներով հանդես է գալիս Թեհրանի հայ հասարակայնության առաջ: Նա հյուրախաղեր է ունենում նաև հրկրի այլ հայ բնակավայրերում:

«Կոմիտասից» բացի Թեհրանում գոյություն ունի ևս երեք հրգչախումբ՝ «Արմեն», «Հայերգ» և «Գողթան»¹³¹:

1948 թ. կազմակերպվեց Աբադանի «Գուսան» հրգչախումբը: Ինչպես «Կոմիտասը», «Գուսանը» ևս սիրողական հրգչախումբ է: Նրա կազմը հասնում է 100—120 հոգու: «Գուսանը» գործում է Աբադանի «Հայկական մշակութային միությանը» կից:

40-ական թվականներին Թավրիզում մի քանի հրգեցիկ խմբեր կային, որոնք հիմնականում գործում էին դպրոցներին կից: Պատերազմի ժամանակ դրանք ցրվեցին: 50-ական թվականներին քաղաքում նոր հրգչախումբ կազմակերպվեց, որը կրում է «Մելիք-Թանգյան» անունը:

* * *

Իրանահայ իրականության մեջ թատրոնը սաղմնավորվել սկսեց XIX դ. վերջին: 70—80-ական թվականներին Թավրիզում, Թեհրանում և նոր Զուղայում սկսեցին կազմակերպվել դպրոցա-

¹³¹ «Գողթան» հրգչախումբը դեռևս 20-ական թվականներին հիմնել է Նիկոլ Գայանտերյանը: 40-ական թվ. վերջին այն ժամանակավորապես դադարեցրեց իր գոյությունը՝ բայց հետո վերականգնվեց:

կան բեմադրութիւններ, երևան եկան տնային թատերական առաջին ներկայացումներ¹³²:

Շուտով այդ բեմադրութիւնները սկսեցին դուրս դալ դպրոցական ու տնային ներկայացումների շրջանակներից: Ստեղծվեցին թատերասիրական ընկերութիւններ ու միութիւններ: 1881 թ. Թեհրանում հիմնվեց «Հայ թատերասիրաց ընկերութիւնը»: Ռաշտում, Թավրիզում և այլ վայրերում առաջ եկան սիրողական խմբեր: Դրանց մասնակցում էին Կովկասից ժամանած հայ դերասանները¹³³: Դարասկզբին այդ խմբերի թատերացանկում երևացին հայ թատերգուներ Գ. Սունդուկյանի, Ա. Շիրվանզադեի և ուրիշների ստեղծագործութիւնները: Միաժամանակ բեմադրվում էին եվրոպական հեղինակների, հատկապես Մոլիերի թատերգութիւնները:

1910 թ. հետո, ընդհուպ մինչև 30-ական թվականները, տարբեր ժամանակներում Իրան հյուրախաղերի էին գալիս հայ բեմի նշանավոր վարպետներ Աբելյանը, Մանվելյանը, Ոսկանյանը, Սիրանուշը, Արմենյան-Դուրյանը, Արուս Ոսկանյանը, Ժասմենը և ուրիշներ: Նրանց ելույթները մեծ հետաքրքրութիւն էին զարթեցնում թատրոնի նկատմամբ:

Սակայն իրանահայ թատրոնը այդպես էլ չբարձրացավ սիրողական աստիճանից: Հետագա տարիներին Թեհրանի «Հայ թատերասիրաց ընկերութիւնը» ցրվեց: Առանձին անձանց՝ նոր ընկերութիւններ ստեղծելու համառ ջանքերը հաջողութիւնով չպսակվեցին: Ժամանակ առ ժամանակ շահադիտական նկատառումներով կազմակերպվում են ներկայացումներ: Սակայն առանձին կազմակերպութիւններ, նույնիսկ դպրոցների հոգաբարձութիւնը, թատերական ներկայացումները համարում են դպրոցական բյուջեները հավասարակշռելու միջոց¹³⁴:

Ծուպատերազմյան տարիներին գաղութի թատերական կյանքը նոր հունի մեջ դնելու փորձերը կրկին ձախողվեցին: Այսպես, 50-ական թվականներին Թեհրանի թատերական ուժերը որոշեցին միավորվել: Սակայն 2 տարի անց նրանք նորից ցրվեցին ու սկսեցին առանձին խմբեր կազմել: Սկզբում կազմակերպվեց «Թ.Ծ.Ա. Թ.» և «Աղամյան» ընկերութիւնները, 1954 թ.՝ «Շանթ», իսկ 1955 թ.՝ «Թեհրանի հայկական դրամատիկական խումբը» («Դրա-

¹³² «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 395—397:

¹³³ «Современный Иран» (справочник), М., 1957, стр. 460.

¹³⁴ «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 117—118: «Վերածնունդ», 1933, 19

մատիկայի Այդ թատերախմբերը հանդես եկան ընդամենը մեկական ներկայացումով:

Իրանահայ գաղութի թատերական կյանքի աշխուժացմանը ակնհայտորեն նպաստեց պրոֆեսիոնալ, հիմնականում եկվոր դերասաններ Մկրտիչ Թաշլյանի, Մանվել Մարությանի և Կոստանյան ամուսինների փոքրաթիվ խումբը:

Մկրտիչ Թաշլյանը¹³⁵, հայ բեմի նշանավոր վարպետներից մեկը Իրան էր եկել 1917 թ.: Մինչև 40-ական թվականները նա հանդես էր գալիս Թավրիզի, ապա Թեհրանի, Նոր Զուղայի և Աբադանի բեմերում: Սակայն ինչպես վկայում են ժամանակակիցները, Թաշլյանը ճանաչում գտավ միայն թատրոնի գիտականների փոքրաթիվ խմբի շրջանում: Դրանից Մ. Թաշլյանը չէր վհատվում և չէր խորշում գավառական բեմից: Ծամփորդելով երկրում, նա աշխատում էր դավառացի հանդիսատեսների մեջ ճաշակ զարգացնել թատրոնի նկատմամբ, բարձրացնել նրան մինչև արդի թատերական արվեստը ընկալելու մակարդակը:

Մանվել Մարությանը երիտասարդական տարիներին ձգտում էր մարմնավորել դասական կերպաոճեր, Համեմատաբար հաջողվում էին Շեքսպիրի հերոսների նրա դերակատարումները: Սակայն Մ. Մարությանը սրանից այն կողմ շանցավ, շատեղծեց ժամանակակիցների կերպարներ: Վերջին տարիներին նա հեռացել է բեմից:

30-ական թվականներին գավառի հանդիսատեսների շրջանում մասսայականություն էին վայելում Կոստանյան ամուսինները:

Իրանահայ գաղութի թատերական կյանքի զարգացման գործում մեծ երախտիք ունի «Վերածնունդ» թերթի խմբագիր Հայկ Գարագաշը: Զիրքաշատ դերասանը նաև Իրանում իսկական բարձրարվեստ թատրոնի ստեղծման ջատագով էր:

* * *

Իրանահայ գաղութում առաջին հրատարակությունը եղել է «Սաղմոսարանը», որը լույս է տեսել 1638 թ. Նոր Զուղայում¹³⁶, 1641 թ. նույն տպարանում ինքնահնար և ինքնաշեն տպագրական մեքենա-

¹³⁵ Մկրտիչ Թաշլյանը ծնվել է 1885 թ., Արևմտյան Հայաստանում: XIX դ. վերջին անցել է Կովկաս: Նրա թատերական տաղանդը բացահայտվել է Թիֆլիզի վերջին անցել է Կովկաս: Նրա թատերական տաղանդը բացահայտվել է Թիֆլիսում, 1956, № 7, էջ 12—13): Մկրտիչ Թաշլյանը մահացավ Արադանում, 1956 թ.:

¹³⁶ Տե՛ս «Հայրենիքի ձայն», 1969, 3 դեկտեմբերի:

յով լույս տեսավ «Հարանց վարքը», որը տպագիր առաջին գիրքն է իրանում:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին գաղութում սկսեցին երևան գալ ժամանակակից տպարաններ: 1844 թ. Ամենափրկիչ վանքին նվորոպայից ուղարկեցին տպագրական մեքենա և տառատեսակներ: Սակայն տպագրական մեքենան ի վերջո կարգի գցվեց միայն 1887 թ. վերջին: 1892 թ. Կովկասից նոր տառատեսակներ ստացվեցին: Փոքր-ինչ անց Թեհրանում լույս տեսնող «Շավիղ» թերթի խմբագրի օգնությամբ աշխարհաբարով տպագրվեցին Ղ. Աղայանի «Մայրենի լեզու» դասագրքի առաջին և երկրորդ հատորները: 1904 թ. տպարանը Բաքվից Թումանյանների առևտրական տնից նվեր ստացավ արագատիպ մի մեքենա: Դրա բազայի վրա 1904—1909 թթ. հրատարակվում էր «Նոր Զուղայի լրագրեր» թերթը¹³⁷, որն առաջինն ու միակն էր քաղաքում:

Իրանահայ առաջին թերթերը հրատարակվել են Ռաշտում, Թեհրանում և Թավրիզում: Անցյալ դարի 80-ական թվականներին Ռաշտում լույս է տեսնում «Համայնք» թերթը, 1894—1897 թթ. Թեհրանում՝ «Շավիղ» և «Շարժում» թերթերը, իսկ 1896 թ.՝ «Աստղ արևելյան» թերթը: Տեղական թեմական առաջնորդարանի 1889 թ. հիմնած տպարանի բազայի վրա Թավրիզում հրատարակվեցին «Գործ» (1903 թ.) և «Ազդարար առաջնորդարանի» (1904 թ.) թերթերը:

Ինչպես գաղութում, այնպես էլ ողջ իրանում պարբերական մամուլը զարգացում ապրեց 1905—1911 թթ.: Ընդհուպ մինչև 20-ական թվականները գաղութի թերթերի ու ամսագրերի մեծ մասը հրատարակվում էր Թավրիզում: Դրանք «Առավոտ» (դաշնականների օրգան 1909—1912 թթ.), «Զանգ» (հնչակյանների՝ 1910—1922 թթ.), «Թավրիզի հայտարարություններ» (1910—1912 թթ.), «Ղալաղան» (1912—1913 թթ.), իսկ 1913 թ. 5 համարներից հետո: մինչև 1914 թ., «Ղարաղաղ», «Այգ» (դաշնականների 1912—1922 թթ.), «Միտք» (1912—1917 թթ.), գրական «Խոսք» ամսագիրը (1913 թ. լույս են տեսել 1-ին և 2-րդ գրքերը), «Կոհակ» (1918 թ.), «Պայքար» (հնչակյանների 1918—1919 թթ.), «Արշալույս» (1918—1919 թթ.), «Գեղասեր» (1919 թ.) և «Մինարեթ» (դաշնականների օրգանն էր (1919—1921 թթ.) պարբերականները:

¹³⁷ Գ. Լեոնյան, Հայոց պարբերական մամուլը, էջ 188, «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 21, 149, «Ալիք», 1936, 22 մարտի, 1956, 17 հունվարի, 31 օգոստոսի:

Հայերեն թերթերը Թեհրանում սկսեցին լույս տեսնել իրանական հեղափոխությունից հետո: Դրանք հիմնականում հրատարակվում էին «Փարոս» տպարանի բազայի վրա (հիմնվել էր 1902 թ.)¹³⁸: 1912 թ. այստեղ տպագրվում էր «Արշալույս» թերթը, 1919—1920 թթ.՝ «Առավոտ», 1919 թ.՝ «Իրանի առավոտ» թերթերը: 1920 թ. սկսեցին լույս տեսնել նաև «Այգ», «Հորիզոն», «Իրանի աշխատավոր», «Բոբոխ», «Ռանչպար Իրանի» նոր թերթերը: Բացի «Բոբոխից», այդ թերթերը 1—4 տարի հրատարակվելուց հետո փակվեցին: Նրանց փոխարինեցին «Նոր կյանք», «Բանվոր» (1923—1925 թթ.) պարբերականները, դրական-գեղարվեստական «Նոր պատգամ» ամսագիրն ու «Գաղափար» թերթը (1925—1927 թթ.): Այդ թերթի խմբագրությունը 1927 թ. հրատարակեց իր հավելվածի «Նոր գաղափար» ամսագրի միակ համարը:

Իրանի կառավարության արգելքով 20-ական թվականներին ղաղութի գրեթե բոլոր թերթերը փակվեցին¹³⁹:

20-ական թվականների վերջին գաղութում լույս էր տեսնում միայն մի թերթ: Այդ «Բոբոխ» երգիծական պարբերականն էր, որը 1930 թ. վերակազմվելով վերածվեց «Վերածնունդ» թերթի: «Բոբոխը» գոյություն ունեցավ մինչև 1936 թ., որպես «Վերածնունդի» ներդիր: «Բոբոխի» («Վերածնունդի») խմբագրությունը լույս ընծայեց նաև «Պարսկահայ տարեցույցի» երեք տարեթվեր (1927, 1929 և 1930 թ.): 1931 թ. հրապարակ եկավ դաշնակցականների օրգան «Ալիք» թերթը: Ինչպես նշվեց, II համաշխարհային պատերազմի տարիներին Թավրիզում հրատարակվեց «Հակաֆաշիստ» («Արևելք») թերթը: Ներկայումս իրանահայ գաղութում հրատարակվող հայերեն միակ թերթը դաշնակցական «Ալիքն է»:

* * *

Իրանում մինչև այժմ պահպանվել են մի շարք շինություններ (գլխավորապես եկեղեցական), որոնք հայկական ճարտարապետության հուշարձաններ հանդիսանալու հետ մեկտեղ վկայում են այդ երկրում հայկական օջախների հնադարյան գոյությունը:

Դրանցից ամենահինը, սուրբ Թադևոսի վանքը, Հայաստանում քրիստոնեության տարածման ժամանակաշրջանին վերաբերող ճարտարապետական մի հուշարձան է: Վանքը գտնվում է Մաքուի գավառում: Վանքի հիմնադրման ճշգրիտ թվականի վերաբերյալ

¹³⁸ «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 116:

¹³⁹ «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 151:

միասնական կարծիք դեռևս գոյություն չունի¹⁴⁰։ Պատմաբանները այն կարծիքին են, թե այն պետք է հիմնված լինի մ. թ. IV—VI դարերում։ Վանքի մասին գրավոր առաջին հիշատակությունը վերաբերում է 10-րդ դ.¹⁴¹։ Նրա առաջին շինությունը հիմնադրված տաճարի հիմքերի վրա բարձրացրած եկեղեցին է։ Սև քարով կառուցված լինելու պատճառով այնտեղի մահմեդական բնակչությունը անվանել է Ղարա Քիլիսա (Սև եկեղեցի)։ 1319 թ. Լրկրաշարժի հետևանքով այն քանդվել և վերականգնվել է 1329 թ.։ Այդ մասին վկայում է վանքի պատին եղած մակագրությունը¹⁴²։

Վանքի հետագա շինարարությունը իրագործվել է 1811—1822 թթ. և կապված է եղել ռուս-պարսկական պատերազմների դիվանագիտական նախապատրաստման հետ։ Ատրպատականում թեմի այն ժամանակվա առաջնորդ և վանահայր, արքեպիսկոպոս Սիմոն Բզնունին, որը պարսկական կողմնորոշման մարդ էր, ոչ առանց թագաժառանգ Աբրահամ Խիրզայի բարոյական ու նյութական օժանդակության, վանքի սահմաններում սկսեց նոր տաճար կառուցել։ Այդ նախաձեռնության քաղաքական նպատակը... «նոր էջմիածնի» կառուցումն էր, որեման և նոր կաթողիկոսի նշանակումը, որի արդյունքը կլինեի հայ եկեղեցին ռուսական, ինչպես նաև թուրքական ազդեցությունից դուրս բերելը։

Սակայն այդ փորձը չհաջողվեց։ Նորակառույց եկեղեցին շատ նման դարձավ էջմիածնին։ Ուշագրավ է այն, որ էջմիածինը հետագայում արգելեց ավարտել յուրաքանչյուր վանքի քարե զանգակատան կառուցումը, քանի որ այլապես նրա նմանությունը Մայր աթոռի վանքին ավելի նկատելի կդառնար¹⁴³։

Վանքի վերջին շինությունները կառուցված են սպիտակ մարմարաքարով։ Սպիտակի և սևի զուգակցումը վանքին առանձնահատուկ գրավչություն է հաղորդում։ Շենքը բարձրանում է քարե հաստաբեւստ, չորս սյուների վրա, որոնք միանում են միջակա

¹⁴⁰ Պատմաբանների մի խումբ գտնում է, որ վանքը սկսել են կառուցել IV դ. վերջին, գիտնականների մի այլ խումբ այդ տեսակետը հերքում է այն պատճառով, որ Նիշիի գրքում, Ավարայրի ճակատամարտի նկարագրության մեջ վանքը չի հիշատակվում (Ավարայրի դաշտը գտնվում է վանքից ոչ հեռու)։ Ի հաստատումն իրենց կարծիքի նրանք վկայակոչում են վանքի զմբեթներից մեկի կառուցման տարեթիվը (628 թ.)։

¹⁴¹ Հ. Աճեմյան, Սուրբ Թադեոսի վանքը, Թավրիզ, 1959, մաս 1, էջ 23։

¹⁴² Նույն տեղում, էջ 26։

¹⁴³ Հ. Աճեմյան, Սուրբ Թադեոսի վանքը, 2-րդ մաս, 1960, էջ 8—11, «Ամենուն տարգիրք», 1958, էջ 444—448։

կամարներով: Այն ունի երեք մուտք, երկու բեմ և 11 կամարակապ լուսամուտ: Ինչպես և իր հին մասը, վանքի նոր կառույցը պսակված է կամարակապ 8 լուսամուտներ ունեցող գմբեթով¹⁴⁴:

Վանքի արտաքին պատերը զարդարված են քանդակներով ու փորագրություններով: Դրանք երկու շարքով գոտևորում են շենքը: Առաջին շարքում հիմնականում պատկերված են առաքյալներն ու սրբերը, ինչպես նաև կենցաղային թեմաներով կատարված զարդանկարներ: Գլխավոր մուտքի սյուների տեղադրված են ամբողջական քարից քանդակած առյուծների ֆիգուրներ: Մասնադեպերի կարծիքով, վանքի քանդակագործական աշխատանքներում գգացվում է Ախթամարի սուրբ Խաչ եկեղեցու քանդակագործությունն ազդեցությունը:

Վանքի նոր տաճարը կառուցել են քարտաշ, փորագրող հմուտ վարպետները, քանդակագործները, ինչպես նաև մեյմարները (ճարտարապետներ), նրանց մեջ հիշատակվում է Գալուստ անունը¹⁴⁵:

Մեր դարի 50-ական թվականներին, տեղական թեմերի՝ էջմիածնից անջատվելու կամպանիայի ժամանակ դաշնակցական պարագլուխները Թավրիզի թեմական մարմինների աջակցությամբ միջոցներ էին ձեռնարկում վանքը իրանահայերի ուխտատեղի դարձնելու ուղղությամբ: Այդ պատճառով վանքը վերանորոգվեց:

XVII դ. ճարտարապետական հուշարձան է Ամենափրկիչ վանքը: Նրա կառուցումը սկսվել է 1606 թ.: Վանքի առաջին կառույցը եղել է Ամենափրկիչ եկեղեցին, որն այդպես է կոչվել Հին Զուղայում գոյություն ունեցած վանքի անունով: Պատմական տվյալները վկայում են, որ Շահ Աբբաս I-ը մեծ շահագրգռվածություն է ցուցաբերել վանքի կառուցման գործում: 1654 թ. նոր Զուղան ընդարձակվեց, Ամենափրկիչ եկեղեցին քանդվեց, իսկ նրա տեղում 9 տարում բարձրացավ սուրբ Հովսեփի եկեղեցին, որը Ամենափրկիչ վանքի հիմնական կառույցն է: Այս կառույցվեց թեմական առաջնորդարանի երկհարկանի շենքը: 1905—1906 թթ. այստեղ կառուցվեց նաև Թանգարան-մատենադարանի շենքը:

Ամենափրկիչ վանքը, ինչպես և նոր Զուղան, մինչև այժմ էլ պահպանել է միջնադարյան հատուկ գծերը: Վանքը պատասպարվել

¹⁴⁴ Վանքի ծավալաչափերի մասին տվյալներ կան ՀՍՍՀ ԿՊՊԱ-ում, ֆ. 56, ց. 3, գ. 417, թ. 151, տե՛ս նաև Հ. Աճեմյան, Սուրբ Թադեի վանքը, մաս 1, էջ 18—19:

¹⁴⁵ Հ. Աճեմյան, Սուրբ Թադեի վանքը, մաս 1, էջ 18—19:

է բարձր պարսպի ետև, դրսի հետ հաղորդակցվում է միակ կամարակապ մուտքով: Ուշագրություն է գրավում գմբեթը, որը ավելի շատ մզկիթի գմբեթ է հիշեցնում: Ծնթադրում են, որ շինարարները գմբեթն ալդպիսին են կառուցել տեղի մասնագետների գծողությամբ շինարարության համար:

Տաճարի հիմնական շենքը ամբողջապես կառուցված է հայկական ճարտարապետության ոճով, այն ունի բարձրակամար երկու դահլիճներ: Դահլիճների ներքին պատերն ու առաստաղը զարդարված են աստվածաշնչային պատումների թեմաներով կատարված յուզանկարներով: Այդ նկարազարդումների դույները մինչև այժմ էլ պահպանել են իրենց թարմությունը:

Վանքի պատերի ու առաստաղի որմնանկարները, ինչպես նշեցինք, կատարել է Հովհաննես Մրթուզը: Սակայն ենթադրում են, որ գործի մեծ մասը սեփական ձեռքով իրականացնելով հանդերձ, Մրթուզը հրավիրել է նաև հուանդական և իտալական վարպետների: Ամեն դեպքում, տաճարի որմնանկարներում ժամանակի հուանդական ու իտալական գեղանկարչական դպրոցների ազդեցությունը զգալի է:

Նոր Զուղայում կա հիշատակության արժանի ևս մի ճարտարապետական շինություն՝ Բեթղեհմի եկեղեցին: Այն կառուցված է 1627—1635 թթ., քաղաքի կենտրոնական թաղամաս Մեծ Մեյդանում, Նազարի փողոցի վրա: Եկեղեցին աչքի է ընկնում խոշոր գմբեթով: Գմբեթը հենված է եկեղեցու հյուսիսային և հարավային պարսպից բարձրացող սյուների վրա: Շենքի ներսում հենասյուներ չկան:

Եկեղեցու շենքը ամբողջությամբ զարդարված է որմնանկարներով: Ինչպես և Ամենափրկիչ վանքում, յուզանկարով կատարված այգ նկարազարդումները իրենց նրբությամբ գերազանցում են Ամենափրկիչ վանքի որմնանկարները: Ըստ արվեստագետների ենթադրության, դրանք պատկանում են նկարիչ Մինասի վրձին: Նրա դիմանկարներում զգացվում են հայկական ազգային գեղանկարչության բնորոշ առանձնահատկությունները:

Շիրազի հայկական եկեղեցին կառուցվել է 1662 թ., իսկ 1816 թ.՝ վերակառուցվել է: Արտաքուստ այն անշուք է և ծեփապատ, միջնադարյան շինությունների նման պատած բարձր պարիսպով: Սակայն ինչպես և Ամենափրկիչ վանքն ու Բեթլեհմի եկեղեցին, Շիրազի եկեղեցին գրավիչ է իր առաստաղի որմնանկարներով, որոնք գեղարվեստական մեծ արժեք ունեն: Գորգանախշերը կատարված են այնպիսի վարպետությամբ, որ իսկա-

կան գորգ են հիշեցնում: Ժամանակակիցները վկայում են, որ այդ նախշերն իրոք ընդօրինակված են այն գորգերից, որոնցով ժամանակին ծածկված է եղել եկեղեցու հատակը:

Եկեղեցու մուտքի կամարի տակ զետեղված է Մեսրոպ Թադիսյանին նվիրված հուշատախտակը¹⁴⁶:

Հայկական ճարտարապետության աչքի ընկնող հուշարձաններ են նաև Հին Զուղայի մոտ, Արաքսի աջ ափին գտնվող սուրբ Ստեփանոսի վանքը, ինչպես նաև Դերիկ և սուրբ Թադեի վանքերը՝ Սալմաստում:

* * *

Առաջին ակումբներն իրանում սկսեցին հիմնադրվել 1905—1911 թթ. իրանական հեղափոխության տարիներին:

Այդ տարիներին ակումբներ երևան եկան նաև Իրանի հայկական գաղութում՝ Նոր Զուղայում, Թեհրանում, Թավրիզում, իսկ հետագայում՝ նաև Ռաշտում, Ահվազում, Արաքում, Արագանում, Մեսչեդ-Սուլեյմանիում և այլ վայրերում: 30-ական թվականներին, հրե իրանում սկսեցին ստեղծվել ազգային սկզբունքով ակումբներ, դադարում դրանք կոչվեցին «Հայկական ակումբներ»:

Թեհրանի «Հայկական ակումբը» հիմնվել է 1931 թ.¹⁴⁷ Այն դառնում է քաղաքի կենտրոնական մասում, ունի համերգային դահլիճ, հանգստի սենյակներ, խաղասրահներ և այլ հարմարություններ: Ինչպես նշվեց, 1943 թ. ակումբին կից բացվել է նաև գրադարան: Սակայն ակումբում գրական-գեղարվեստական երեկոներ, համերգներ ու զրույցներ կազմակերպվում են դիպվածաբար:

1932 թ. «Հայկական ակումբ» բացվեց նաև Նոր Զուղայում, որն ունի հանգստի սենյակներ, ինչպես նաև 600 տեղանոց համերգային դահլիճ: Այստեղ կազմակերպվում են թատերական երեկոներ, ցուցադրվում կինոնկարներ և այլն: Նրա միջոցները հիմնականում գոյանում են անդամավճարներից, ինչպես նաև մշակութային միջոցառումներից ստացվող հասույթներից:

Թավրիզահայերը ևս ունեն իրենց տեղական ակումբը, որը կազմակերպված է Թեհրանի և Նոր Զուղայի ակումբների սկզբունքներով:

¹⁴⁶ Շիրազի հայերը հուշատախտակը ամրացրել են այն բանից հետո, երբ քաղաքի հայկական գերեզմանոցը, ուր թաղված էր Մեսրոպ Թադիսյանը, գինավորական կառույցի համար հարթեցվեց և գրողի գերեզմանը հնարավոր չեղավ դնել:

¹⁴⁷ «Վերածնունդ», 1958, էջ 402—403:

1957 թ. մայիսին Թեհրանում հիմնվեց նոր՝ «Գարուն» ակումբը, որը հիմնել են մի խումբ հայ երիտասարդներ։ Այն մշակութային կենտրոնի բնույթ ունի։ Այստեղ ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են ընթերցողների հավաքներ, դասախոսություններ, ժողովներ, գրական-գեղարվեստական երեկոներ։ Ակումբը կազմակերպում է նաև կինոդիտումներ, թատերական ներկայացումներ և այլ միջոցառումներ։ Ունի սրահ, ռեստորան, հանգստի սենյակ և այլ հարմարություններ։ Ակումբն ունի ավելի քան 60 անդամ, աշխատանքները ղեկավարում է 7 հոգուց բաղկացած վարչությունը։

Ահվադի, Աբադանի և Մեսչեդ-Սուլեյմանիի ակումբներն ունեն մարզական թոքում, որի պատճառով Աբադանի հայերը իրենց ակումբը հաճախ անվանում են սպորտկլուբ։ Ահվադի «Հայկական ակումբը» մարզական աշխատանքից բացի, կազմակերպում է նաև թատերական ներկայացումներ, գրական-գեղարվեստական երեկոներ ու նման այլ միջոցառումներ։

* * *

Ժամանակակից բնույթի գրադարանային ցանցը իրանահայ գաղութում ստեղծվել է XIX դ. կեսերին, հայկական աշխարհիկ դպրոցների ստեղծմանը զուգահեռ։ Հայկական առաջին գրադարանները հիմնվել են Թավրիզում, Նոր Զուղայում, Ռաշտում և Թեհրանում։ Որոշ ժամանակ անց գրադարաններ ստեղծվեցին նաև գաղութի մյուս քաղաքներում, ինչպես նաև մի շարք գյուղերում։

Գրադարանները առաջ եկան դպրոցներին կից, ուր կենտրոնացած էր ժամանակի ընթերցող հիմնական հասարակայնությունը։ Սակայն սկզբնական շրջանում գիրք կարդացողները ինչպես և գրքերը նույնքան փոքրաթիվ էին, որքան դպրոցների աշակերտությունը։

Հանրային առաջին գրադարանը (բառի լիակատար իմաստով) կազմակերպվեց Թավրիզի Ղալա թաղում, 1877 թ.։ Նրա ստեղծման համար միատեղվեցին այդ տարիներին գոյություն ունեցող «Գրադարանային ընկերության» և թեմական առաջնորդարանի գրքային «ֆոնդերը»։ Հետագայում գրքերի թիվը գրադարանում զգալիորեն աճեց։ Օրինակ, 1902 թ. այնտեղ արդեն 1850 կտոր գիրք կար, որից 1350-ը՝ հայերեն։

1889 թ. գրադարան հիմնվեց նաև Թավրիզի Լիլավա թաղում։ Գրադարանը, որին շնորհվել էր հաշատուր Աբովյանի անունը, 1902 թ. ունեւր 1377 գիրք։

XX դ. սկզբին Թավրիզում իր գրադարանն ունեւր նաև տեղի կանանց բարեգործական ընկերութիւնը: Այն նախատեսված էր «Հատկապես կանանց ու աղջիկներին համար», քանի որ իգական սեռի ներկայացուցիչներին այդ ժամանակ «պատշաճ» չէր հաճախել հանրային գրադարանները:

XX դ. առաջին տասնամյակին «Խ. Աբովյան» գրադարանը միացավ «Արամյան» դպրոցի գրադարանին: Իսկ երբ «Գրադարանային ընկերութիւնը» ցրվեց, գրադարանի ֆոնդը հանձնվեց թեմական իշխանութիւններին: Հետագայում մի քանի հարյուր ձեռագիր և հնատիպ գրքեր տրվեցին Սովետական Հայաստանին, իսկ մնացածները (8.200 կտոր) կազմեցին այն ժամանակ Թավրիզում գործող «Մշակութային միութեան» գրադարանի հիմքը: Այդ գրադարանը ներկայումս գոյութիւն չունի: Դրա փոխարեն գրադարաններ են բացված «Հայկազյան-Թամարյան» և «Արամյան» դպրոցներում: «Արամյան» դպրոցի գրադարանն ունի գրքերի առավել հին հավաքածու: Թավրիզում կա ևս մեկ գրադարան, որը կազմակերպված է «Ռոստոմ» և թեմական առաջնորդարանի «Գասպար» գրադարանների ֆոնդերի հիման վրա: Այդ միավորումը կրում է «Ռոստոմ-Գասպար» մատենադարան անունը, ունի 6 հազարից ավելի գիրք:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայկական գրադարաններ ստեղծվեցին Նոր Զուղայում: «Րաֆֆի» գրադարանը հիմնվել է 1886 թ.: Մյուս՝ «Երկունք» գրադարանը կազմակերպվել է 1910 թ.: Ի տարբերութիւն Թավրիզի, Նոր Զուղայի գրադարանները գործում են մինչև օրս: Դրանցից առաջինը պատկանում է տեղի հայկական ակումբին, իսկ երկրորդը՝ «Հայ կանանց գթութեան» ընկերութեանը:

Ռաշտի հայ բնակչութիւնը գրադարան կազմակերպեց XVIII դ. 60-ական թվականներին: Այդ «Մեսրոպյան» գրադարանն է, որ գոյութիւն ունի մինչև օրս: Այն ունի ավելի քան 4 հազար դիրք և XIX դ. լույս տեսած պարբերական շատ հրատարակութիւններ:

Ընդհուպ մինչև 30-ական թվականները Թեհրանում հայկական գրադարանները գոյութիւն ունեին տեղի հայկական դպրոցին կից: Ինչպես նշվեց, մեծ գրադարան ստեղծվեց 1936 թ., երբ տեղի հայ կանանց բարեգործական ընկերութիւնը ի մի հավաքեց այդ ժամանակ փակված դպրոցների գրքային ֆոնդերը: Հետագայում Թեհրանի թեմական խորհրդի որոշմամբ այդ գրքերը (3—4 հազար կտոր) հանձնվեցին հայկական ակումբի տնօրինմանը¹⁴⁸: Ակում-

¹⁴⁸ «Համառոտ պատմութիւն...», էջ 33:

բի գրադարանը ներկայումս ունի 12 հազարից ավելի գիրք: Դրանց մեծ մասը հայերեն է, մնացածը՝ պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլ լեզուներով:

Գավառի կենտրոններում (Ռաշտից բացի) հայկական գրադարաններ ստեղծվեցին մեծ մասամբ XX դ. սկզբներին: Դրանց կազմակերպման նախաձեռնողները տեղական մշակութային միություններն էին: Այդ միություններին կից մինչև օրս էլ գրադարաններ են գործում Ղազվինում, Համադանում, Մեշհեդում և այլ քաղաքներում: 20-ական թվականներին գրադարաններ կազմակերպվեցին նաև Ահվազում և Արաքում¹⁴⁹:

Ներկայումս համեմատաբար խոշոր գրադարան ունի Արադանի հայ բնակչությունը: Նրա ֆոնդում 2 հազարից ավելի գիրք կա: Գրադարանը գտնվում է տեղի «Հայ մշակութային միության» տնօրինության տակ և տեղավորված է «Ագար» դպրոցի շինքում:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին գրադարաններ կազմակերպվեցին նաև հայկական գյուղական բնակավայրերում: Այս իմաստով, ինչպես և դպրոցների հարցում, առաջավոր դեր խաղացին Սալմաստի հայկական դպրոցները: Գաղութի բոլոր գյուղերից առաջին գրադարանը ստեղծվեց Հաֆթվանում 1886 թ.: Գործի նախաձեռնողը և ջանադիրը XIX դ. վերջի հայկական ազգային-ազատագրական շարժման մասնակից Վարդան Գուլոշյանն էր, որի անունն է կրում գրադարանը մինչև օրս¹⁵⁰:

1889 թ. ավելի մեծ գրադարան հիմնվեց Սալմաստի Ղալասար գյուղում, որը արդեն 1903—1905 թթ. ուներ շուրջ 1300 գիրք: Չնայած 1884, 1897 և 1899 թթ. կատարված փորձերին, Փայաջուկ գյուղում հաջողվեց գրադարան ստեղծել միայն 1903 թ.: Նույն թվականին վերականգնվում է նաև Մալլամ գյուղի գրադարանը: Այսպիսով, 1903—1905 թթ. Սալմաստի նահանգում արդեն 7 գրադարան կար: Հիշատակված գյուղերից բացի դրանք գործում էին նաև Սավրա, Հին քաղաք և Ախտախանա գյուղերում:

149 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 92:

150 Վ. Գուլոշյանը XIX դ. 90-ական թթ. Մոսկվայի համալսարանում ընդհատելով ուսումը դնում է Արևմտյան Հայաստան՝ Վան: Այդտեղից անցնում է Բաֆ-ֆու ծննդավայրը՝ Սալմաստ և մի քանի տեղափոխություններից հետո հաստատվում է Հաֆթվան գյուղում: Այստեղ նա հիմնում է գրադարան-ընթերցարան, որը կոչվում է «Գրասիրաց գրադարան»: Վ. Գուլոշյանը զոհվում է 1889 թ. Վան անցնելու փորձ կատարելիս: Գրադարանի հիմնադրի անունը հավերժացնելու նպատակով, այն վերանվանվում է «Գուլոշյան գրադարան» (տե՛ս «Վերածնունդ»: 1944, 27 և 28 օգոստոսի):

Դարասկզբին հայկական գրադարան բացվեց նաև Ուրմիա քաղաքում: Սակայն ամբողջ Ուրմիայի գավառում, ուր այդ ժամանակ շատ թվով հայկական գյուղեր կային, գրադարաններ չույթյուն չունեին: Գաղութի հյուսիսային շրջանների մյուս բնակավայրերից հայկական գրադարաններ կային Մարաղա, Խոյ և Արդերիլ քաղաքներում, ինչպես նաև Բաքիդղին մոտակա Մուժամբար գյուղում: Ողջ Ղարադաղի շրջանում, ուր հայկական շատ գյուղեր կային, ոչ մի գրադարան գոյություն չուներ:

Գաղութի հյուսիսային շրջաններում գրադարանային գործը ներկայումս, դարասկզբի վիճակի համեմատությամբ, հազիվ թե ավելի բարձր լինի: Սալմաստում իր գոյությունն է շարունակում միակ գրադարանը: Այդ Հաֆթվան գյուղի «Գոլոշյան» գրադարանն է: Միայն մի գրադարան կա նաև Ռեզայեի մարզի ամենամեծ՝ Գևարդաբադ գյուղում:

Գաղութի հարավային շրջանի հայկական գյուղերի նշանակալից մասում ավելի ուշ են գրադարաններ հիմնվել, քան երկրի հյուսիսում: Փերիայի և Չհարմհալի շրջաններում դրանք սկսեցին երևան գալ դարիս առաջին տասնամյակում: Սակայն դրանից դեռևս շատ Դարիներ անց գյուղերի մեծ մասը գրադարան չուներ: Փամանակի ընթացքում, հատկապես համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին, այդ շրջանների մի քանի գյուղերում, այնուամենայնիվ, գրադարաններ ստեղծվեցին: Ներկայումս Փերիայի 17 հայկական գյուղերից 6-ը գրադարան ունեն:

Սկսած 1903—1907 թթ. տեղի հայկական դպրոցներին կից գրադարաններ էին գործում նաև Չհարմհալի շրջանի գյուղերում:

Մենք ճշգրիտ տվյալներ չունենք Բուրվառի, Գյափլա, Քամաքա և Քաղազ շրջանների գրադարանների մասին: Սակայն մեր ձեռքի տակ եղած տվյալները տեղի հայկական դպրոցների մասին հիմք են տալիս ենթադրելու, որ այդտեղ քիչ թե շատ նշանակալից թվով գրադարաններ հազիվ թե լինեն:

* * *

Հայ գաղթականները XVII դ. իրենց հետ Իրան բերեցին անգին գրչագիր մատյաններ: Այդ ձեռագրերի մեծ մասը նախապես հավաքվեց Ամենափրկիչ վանքում: Այնուհետև վանքի ձեռագրերի ժողովածուն աստիճանաբար սկսեց հարստանալ շնորհիվ Նոր Զուլայի բնակիչների նվիրաբերած ձեռագրերի, որի հետևանքով Հ.

Տեր-Հովհանյանցի արտահայտությամբ «Զուղան դարձավ Հայաստանի մատենադարանը»¹⁵¹:

XVIII դ. ֆեոդալական երկպառակությունների, թալանի ու կողոպուտի հետևանքով մատենադարանի հավաքածուն հսկայական վնաս կրեց: Շատ գրքեր ու ձեռագիր նյութեր ընկան անգետների ձեռքը ու շնչին գնեցրով վաճառվեցին:

XIX դ. վանքի սպասավորների տքնաշան գործունեության հետևանքով հնարավոր եղավ նվիրատվության կամ գնելու միջոցով ժողովել ձեռագրերի ու գրքերի մի մասը: Հավաքված փաստաթղթերի շնորհիվ մատենադարանի հավաքածուն հասավ մի քանի հազար օրինակի: 1844 թ. թեմական առաջնորդարանի շենքի մի մասը հատկացվեց մատենադարանին: Այդ տարիներին Մատենադարանում կենտրոնացված էր 250 ձեռագիր: Պատրաստվեցին ժամանակակից փայտյա պահարաններ: Հետագայում մատենադարանը փոխադրվեց մի այլ սենյակ, ուր մնում էր մինչև 1907 թ.¹⁵²:

XX դ. սկզբին, հնագույն արժեքների նկատմամբ հետաքրքրության աճի շնորհիվ միջոցներ ձեռնարկվեցին մատենադարանի նոր շենքի կառուցման ուղղությամբ: 1905—1906 թթ. վանքի բակում կառուցվեց եռադահլիճ, մի քանի սենյակներ ունեցող առանձին շենք: Այդ նպատակին միջոցներ էր տրամադրել Թադեոս Տեր-Հովհանյանը՝ «նոր Զուղայի պատմության» հեղինակի որդին: Այս շենքը մինչև 30-ական թվականները ծառայում էր որպես գրադարան-մատենադարան:

1931 թ. նկարիչ Սարգիս հաշատրյանը ձևավորեց մատենադարանի ու թանգարանի ներկայիս ցուցասրահները, և 1933 թ. սկսած դրանք բացվեցին ընդհանուրին ի տես¹⁵³: Այժմյան թանգարան-մատենադարանն ստեղծելիս նախկին գրադարան-մատենադարանից առանձնացվեց տպագիր գրքերի բաժինը: Այն փոխադրվեց առաջնորդարանի շենքը, ուր և գտնվում է այժմ:

Մատենադարանն ունի ավելի քան 10 հազար կտոր հին ու նոր գրքեր: Ձեռագրերի թիվը 683 է, որոնցից 34-ը դրված են մագաղաթի վրա: Դրանցից 200-ը ավետարաններ են, 42-ը՝ մաշտոց, 39-ը՝ վարք սրբոց, 13-ը՝ սաղմոսներ, 24-ը՝ քարոզագրեր: Բացի

¹⁵¹ Հարություն Տեր-Հովհաննիսյանց, Պատմություն նոր Զուղայի, Հ. 2, էջ 15—17:

¹⁵² «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 25:

¹⁵³ «Վերածնունդ», 1933, 21 մայիսի:

այդ, կան 24 մեկնութիւններ, պատմական բնույթի 17 գրքեր և 5 բառարան: Մնացածը հիմնականում եկեղեցական բնույթի զանազան գրքեր են:

Մատենադարանի ամենահին ձեռագիրը X դ. ավետարանն է: Նոր Զուղայի մատենադարանում ու եկեղեցիներում, ինչպես նաև դրանց կից հայ դպրոցայիններում պահպանվող ձեռագրերի ցուցակը կազմել է Ս. Տեր-Ավետիսյանը¹⁵⁴: Նոր Զուղայում պահպանվող ձեռագրերի նշանակալի մասը հիշատակվում է Հարություն Տեր-Հովհանյանի «Նոր Զուղայի պատմության» երկրորդ հատորում: Ձեռագրերից միայն 125-ն է, որ անմիջականորեն առնչվում է Նոր Զուղայի պատմությանը, մնացած 560-ը «եկվոր» գրքեր են: Այդ գրքերի ստեղծման ու նախկինում սյահպանման աշխարհագրությունը չափազանց ծավալուն է: Դրանց թվում կան էջմիածնում, հոր Վիրապում, Հաղսպատում ստեղծված գրքեր: Ձեռագրերի մի մասի ծննդավայրը Արևմտյան Հայաստանն է՝ Տարոնը (սուրբ Կարապետի վանք), Բաղեշը և այլն: Կան նաև Կ. Պոլսում և Անկարայում ստեղծված ձեռագրեր: Ձեռագրերի մի մասը Նոր Զուղա է հասել Հնդկաստանից ու Ինդոնեզիայից (Ճավա կղզի): Կան ձեռագրեր, որ ստեղծված են Իրաքում (Բաղդադ, Բասրա), Շիրազում և այլուր:

Առանձին հավաքածույի մեջ են պահվում Իրանի շահերի ֆիրմանները (հրամաններ): Այդ փաստաթղթերը անմիջականորեն առնչվում են Ամենափրկիչ վանքին ու Նոր Զուղային, քանի որ արտացոլում են նրա պատմության զանազան փուլերը: Ժամանակին այդ ֆիրմաններով զաղութի բնակչությանը ապահովության երաշխիքներ, առևտրական ու ընտանեկան-ժառանգական և այլ բնույթի իրավունքներ ու արտոնություններ են շնորհվել: Դրանց թվում են շահ Թահմասպի (1564), շահ Համզայի (1585 թ.), շահ Աբբաս 1-ի (1606 և 1618 թթ.), շահ Աբբաս 2-րդի (1642), շահ Սեֆիի, շահ Սուլեյմանի, շահ Սուլթան Հուսեյնի, Նադիր շահի, Քերիմ խան Զանդի և այլոց ֆիրմանները: Արդի ժամանակաշրջանի փաստաթղթերը ներկայացված են Ռզա շահի և Մուհամեդ Ռզա շահ Փեհլևիի ֆիրմաններով:

Իրանի շահերի ֆիրմաններից բացի այս հավաքածույի մեջ պահպանվում են նաև էջմիածնի մի քանի կաթողիկոսների կոն-

¹⁵⁴ Տե՛ս Ս. Տեր-Ավետիսյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի (մեքենագրված), ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գ. 188:

դակաները: Այդ փաստաթղթերը ևս պատմական մեծ արժեք են ներկայացնում:

Մատենադարանի տպագիր գրքերից առավել ուշագրավ են Հակոբ Մեղապարտի «Պատարագատետրն» ու «Ուրբաթագիրքը», որ լույս են տեսել 1513 թ., Վենետիկում: Հաղվագրուտ են Նոր Զուղայում հրատարակված առաջին տպագիր գրքերը: Սրանցից բացի կան XVII դ. 80-ական թվականներին հրատարակված երկու գրքեր՝ «Գիրք որ ասի վիճաբանական» և «Գիրք համառոտ վասն իսկապես և ճշմարիտ հավատոյ»:

Մատենադարանում պահպանվող տպագիր հրատարակութուններից է Կասպից ծովի ու Իրանի քարտեզը, ինչպես նաև «Համատարած աշխարհացույց» քարտեզը, որ կազմված է 1695 թ. Ամստերդամում:

Մատենադարանում ի մի են բերված նաև Իրանա-Հնդկական թեմի, եկեղեցական ու համայնքային խորհուրդների, Նոր Զուղայի դպրոցների հոգաբարձության, ինչպես նաև հարավային ու կենտրոնական շրջանների հայ գաղթօջախների արխիվային նյութերը: Նրանք հարուստ տեղեկություններ են պարունակում իրանահայ գաղութի, ինչպես նաև Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Բիրմայի ու այլ երկրների հայ բնակչության վերաբերյալ:

Մատենադարանի պարբերական մամուլի նյութերում պահպանվում է հայկական առաջին՝ «Ազգարար» թերթի ժողովածուն (1794—1796 թթ. Մադրաս-Հնդկաստան): Այս թերթից բացի մատենադարանն ունի իրանահայ գաղութում և արտասահմանի հայկական այլ գաղթօջախներում ու Կովկասում հրատարակված թերթերի, ամսագրերի և այլ պարբերականների հավաքածուներ:

1931 թ. մատենադարանից բացի Ամենափրկիչ վանքին կից բացվեց թանգարան: Վերջինիս ցուցանմուշները դարձան Նոր Զուղայի վանքում և եկեղեցիներում ժողովված արվեստի առարկաները, ազգային տարազները, եկեղեցական հագուստները և այլն: Վերանորոգումից և կարգաբաշխվելուց հետո դրանք ցուցադրվեցին:

Իր հիմնադրման սկզբնական շրջանում թանգարանն ուներ 262 ցուցանմուշ: 1957 թ. հետո թանգարանը զնեց ու նվեր ստացավ ևս 43-ը: Թանգարանի ցուցանմուշները բաժանվում են 4 խմբի. ա) պատմական փաստաթղթեր և նյութեր, բ) արվեստի գործեր, գ) ժողովրդական ստեղծագործության առարկաներ, դ) եկեղեցական պիտույքներ:

Մատենադարանին պատկանող պատմական փաստաթղթերից են թանգարանում ցուցահանված 24 շահական ֆիրմանները, ինչպես նաև տպագիր առաջին գրքերն ու պարբերականները: Այդ բաժնում ներկայացված են նաև հայկական, պարսկական և իսլամական թագավորների, շահերի ու գրգավարների 58 արծաթե ու պղնձե դրամներ:

Արվեստի ստեղծագործություններից երկուսը Սարգիս Խաչատրյանի նվիրած գիմանկարներն են: Դրանցից մեկը «Հայր Աբրահամ» օֆորտը վերագրվում է Ռեմբրանգտին, իսկ մյուսը՝ Շահ Աբրահա 1-ի դիմանկարն է. որը արտանկարված է Չեհհել Սութունի պալատի որմնանկարից: Մասնագետների հավաստմամբ թանգարանի արժեքավոր ցուցանմուշներից մեկը «Հիսուսի հուղարկավորությունը» նկարն է, որը, ինչպես ենթադրում են, XV—XVI դդ. իտալացի նկարիչ Հաննիբալ Կարաչչիի ստեղծագործությունն է: Թանգարանի հավաքածուի մեջ կա նաև Հիսուսին պատկերող մի այլ նկար՝ «Քրիստոսը պսակը ձեռքին», որը հավանաբար հվրոպական որևէ ղեղանկարչական դպրոցին պատկանող նկարի ստեղծագործություն է: Ժամանակակիցների վկայությամբ նկարիչ Սարգիս Խաչատրյանը այդ նկարը դասում էր համաշխարհային արվեստի լավագույն նմուշների շարքը:

Թանգարանն ունի նաև դեղանկարչության մի շարք այլ ստեղծագործություններ: Դրանց մեծ մասը կրճնական թեմաներով է: Նկարներից մի քանիսը ասիղնագործած են ոսկե և արծաթե թելերով:

Քանդակագործական աշխատանքներից թանգարանն ունի արձաններ, արձանիկներ, կիսանդրիներ և այլն: Ուշագրավ է սուրբ Աստվածամայրը մանկան հետ քանդակը, որը պատրաստված է ամրողջական փայտակտորից շնորհաշատ մի անհայտ վարպետի ձեռքով:

Ժողովրդական ստեղծագործության առարկաներից հիշատակման արժանի են Նոր Զուղայի բնակիչների ազգային տարազները, որոնք ազգազրական մեծ արժեք ունեն: Տեղի հայերի ազգային տարազից բացի, որն հիմնականում վերաբերում է XVII դ., կան նաև դարաբաղյան, վրացական և պարսկական գլխարկներ ու այլ իրեր: Թանգարանում ցուցադրված են ազգային տարազով վաճառականների (խոջաների) ու կանանց անդրիներ: Դրանց դիմանկարը պատրաստել է Սարգիս Խաչատրյանը: Խոջայի դիմանկարը բնօրինակված է Նոր Զուղայի խոջա Ավետիք Վելիջանյանից, իսկ

կանացի դիմակը՝ Թանգարան-մատենադարանի հիմնադիր Թադևոս Տեր-Հովհանյանի մոր (այսինքն՝ պատմաբան Հարություն Տեր-Հովհանյանի կնոջ) դիմանկարից: Թանգարանում ցուցադրվում են նաև հարսանեկան զգեստներ՝ իրենց զարդերով, ինչպես և այլ պա-
րագաներ:

Թանգարանի ցուցանմուշներում կան մի քանի տեսակի գոր-
գեր, իրանում հյուսված գորգերից բացի, կան նաև XVI—XVII դդ.
Հայաստանում և Անդրկովկասում պատրաստված գորգեր:

Այդ բաժնում զետեղված են նաև ժանյակագործական, ոսկով,
արծաթով ու մետաղով բանված (դերձանով ու մետաղաթելով)
իրեր, կոփածո արծաթ ու մետաղ, փղոսկրից ու ապակուց աշխատ-
ված քանդակներ, կաշեդրոշմ առարկաներ և այլն:

Եկեղեցական պիտույքներից են եկեղեցու սպասավորների
խաչերով զարդարուն հանդերձանքը, աստվածաշնչի թմաներով
նկարներ և այլն:

Նոր Ջուղայի Թանգարանում են պահվում Մեսրոպ Թադիադ-
յանի անձնական մի քանի իրերը, այդ թվում եռաճյուղ մի աշտա-
նակ, հնագույն մի մկրատ, մեղալյոն և այլն:

Թանգարանի հազվագյուտ ցուցանմուշներից են այն ինքնա-
շեն տառերն ու տպագրական մեքենան, որոնցով տպագրվել են
առաջին գրքերը:

* * *

Գաղութն ստեղծել է իր ինքնատիպ մշակույթը, որը գալիս է
լրացնելու հայկական մշակույթի գանձարանը: Լինելով ազգային,
նա իր մեջ է ներառել հայ ժողովրդի մշակութային լավագույն
ավանդույթները: Միաժամանակ տեղի հայերը ներազդել են ու
շարունակում են ներազդել իրանական մշակույթի վրա: Այս հան-
գամանքը հայ-իրանական մշակութային դարավոր կապերի վառ
արտացոլումն է:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

Իրանահայ գաղութի, ինչպես նաև արտասահմանի մյուս հայ
գաղթօջախների հասարակական կյանքում կարևոր նշանակու-
թյուն ունի հայերի հայրենադարձությունը Սովետական Հայաս-
տան:

1920 թ. նոյեմբերին Սովետական Հայաստանի ծնունդը հե-
ռանկարներ բացեց հայրենիք վերադառնալու մասին արտասահ-

մանի հայության փայփայած դարավոր երազանքի իրականացման համար: Ստեղծվեցին կազմակերպված ձևով նրանց Սովետական Հայաստան տեղափոխելու նախադրյալներ: Հայրենադարձության գործը դրվեց պետական հիմքի վրա, և դրանով անմիջականորեն գրադվեց Սովետական Հայաստանի կառավարությունը:

Այս ուղղությամբ գործնական քայլեր արվեցին դեռևս 1921 թ.: Այդ տարվա ամռանը Սովետական Հայաստանի կառավարությունը գրադվեց Միջազգետրում ապաստանած 16 հազար հայ գաղթականների ճակատագրով, որոնք դիմել էին Սովետական Հայաստանի կառավարությանը, խնդրելով անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել իրենց հայրենիք վերադառնալու առթիվ: Սովետական Հայաստանի կառավարությունը Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի միջոցով դիմեց Անդրկովկասյան հանրապետություններում ՌՍՖՍՀ-ի ներկայացուցիչ լեգրանին: Վերջինիս միջոցով ի դեմս լորդ Քերզոնի Անգլիայի կառավարության հետ բանակցություններ վարվեցին՝ նայր-օլ-Օմարի հայ գաղթականներին Հայաստան փոխադրելու հարցի շուրջը¹⁵⁶:

Սկզբում Լեթադրվում էր ծովային ճանապարհով նրանց փոխադրել Բաթում: Սակայն այս նախագիծը Սովետական Հայաստանի այդ տարիներին ունեցած ֆինանսական ու նյութական դժվարությունների պատճառով հնարավոր չէր իրագործել: Ուստի նպատակահարմար համարվեց օգտագործել իրանով անցնող տարանցիկ ցամաքային ճանապարհը: 1922 թ. նայր-օլ-Օմարի ճամբարի հայ գաղթականների նշանակալից մասը Բասրա-Համադան-Թավրիզ ճանապարհով հասավ Հայաստան:

Այդ նույն տարիներին տարբեր վայրերից դադթած մի քանի հազար հայեր էին հավաքվել Թավրիզում: Սովետական Հայաստանի կառավարությունը կազմակերպեց նաև գաղթականների այդ խմբի հայրենադարձումը: Գաղթականների գործով Թավրիզ ուղարկվեց հատուկ լիազոր: Հայերի փոխադրման գործով զբաղվում էին նաև Թեհրանում Սովետական Հայաստանի հավատարմագրված ներկայացուցիչն ու Թավրիզի հյուպատոսը: Իրանից հայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան շարունակվեց մինչև 20-ական թվականների վերջը: Այն իրականացվում էր՝ իրանում ՍՍՀՄ-ի դեսպանության միջոցով, կազմակերպված ձևով:

Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության հաղթանակը հնարավորություն տվեց կազմակերպել արտասահ-

¹⁵⁶ ՀՍՍՀ ԶԶԳՊԱ, ֆ. 4/114, ց. 2, գ. 172, թ. 174—181:

մանի հայերի զանգվածային հայրենադարձությունը Հայկական ՍՍՀ, 1945 թ. դեկտեմբերի 2-ին սովետական կառավարությունը որոշում ընդունեց արտասահմանում ապրող հայերի Սովետական Հայաստան հայրենադարձվելու մասին:

Հայրենադարձությունը հասարակական-քաղաքական կարևոր իրադարձություն հանդիսացավ արտասահմանի հայերի, ինչպես նաև իրանահայերի համար: Հայրենադարձմանը աջակցող կոմիտեներ կազմակերպելուն առաջինը ձեռնամուխ եղան Իրանի Նյուսիսային նահանգների հայերը: 1946 թ. փետրվարի 16-ին Բաքուի հայ հասարակայնության ժողովը ընտրեց Իրանական Ադրբեջանի հայերի հայրենադարձման ազգային կոմիտե: Կոմիտեի նիստում ընտրվեց ղեկավարություն: Կոմիտեի նախագահ դարձավ Բաբկեն Քուրուխյանը, տեղակալներ՝ Լ. Բաղդասարյանն ու Հովհ. Բուդաղյանը: Հետագայում Բ. Քուրուխյանի Թեհրան մեկնելու պատճառով նրա պարտականությունները կատարում էր Աշոտ Բաբոյանը, որը և հետո ընտրվեց կոմիտեի նախագահ:

Փետրվար-մարտ ամիսներին ենթակոմիտեներ ստեղծվեցին Մարաղայում, Ռեզայեում, Սալմաստում և Ղարաբաղում: Մարտին Թեհրանում ընտրվեց Իրանից հայերի հայրենադարձման կենտրոնական կոմիտե¹⁵⁶: Կոմիտեի իրավասության մեջ էր մտնում հայրենադարձության հետ առնչվող բոլոր հարցերի լուծումը Իրանում (բացառյալ Իրանական Ադրբեջանը, որն իր կոմիտեն ուներ):

Մարտի 31-ին Թեհրանում, կոմիտեի լիակազմ նիստում իրանահայերի հայրենադարձման կենտրոնական կոմիտեի նախագահ ընտրվեց ձեռնարկատեր Ռոման Իսաևը, պատվավոր նախագահ՝ Իրանահնդկական թեմի առաջնորդ, եպիսկոպոս Վահան Կոստանյանը: Կոմիտեի նախագահության կազմում ընտրվեցին նախագահի տեղակալներ Հայկ Գարաբաշը, Աշոտ Խանջյանն ու Ղազար Սիմոնյանը:

Ապրիլին հայրենադարձության ենթակոմիտե ստեղծվեց Նոր Զուղայում: Սրա պարտականությունների մեջ էր մտնում ոչ միայն քաղաքի, այլև Փերիա, Քյարվանդ և Զհարմհալ շրջանների հայերի հայրենադարձության կազմակերպումը: Ենթակոմիտեի նախագահ դարձավ Լևոն Հովհաննիսյանը, պատվավոր նախագահ՝ եպիսկոպոս Վահան Կոստանյանը:

Հայրենադարձության կազմակերպման ենթակոմիտեներ կազմվեցին նաև Ահվազում, Մեշհեզում, Արաքում և այլ վայրերում:

¹⁵⁶ «Վերածնունդ», 1946, 2 ապրիլի:

Արաքի Լենթակոմիտան հիմնականում զբաղվեց բաղաբամերձ Բուր-վառի, Գյափլա, Քամարս, և Քազազ շրջանների հայրենադարձու-թյուն կազմակերպելու գործով:

Իրանի բոլոր հայ գաղթօջախներում սկսվեց հայրենադարձ-վողների ցուցակագրումը: Առաջին շորս-հինգ օրում Թավրիզում ցուցակագրվեց 1100 բնտանիք: Ապրիլին Իրանական Ադրբեջանի հայերի հայրենադարձության կոմիտեի ցուցակներում գրանցված էր 4, 332 բնտանիք, որ կազմում էր 18.630 մարդ¹⁵⁷: Արաքի հայրե-նադարձության Լենթակոմիտեն մայիսին գրանցեց 5 հազար մարդ, որոնց մեծ մասը Գյափլայի շրջանի հայ գյուղացիներ էին, որ ըն-դունված որոշման համաձայն Սովետական Հայաստան էին մեկ-նելու առաջին քարավանով¹⁵⁸: Այդ ամիսներին հայրենադարձվել ցանկացողները ցուցակագրվում էին նաև Փերիա, Քյարվանդ և Չհարմհալ շրջանների գյուղերում, ինչպես նաև Նոր Զուղայում:

Հայրենադարձվելու համար ցուցակագրվեց ընդամենը մի բա-նի տասնյակ հազար մարդ (միայն գյուղացիների թիվը այդ ցու-ցակներում 30 հազարից ավելի էր):

Ցուցակները կազմելուն զուգահեռ, հայրենադարձման ֆոնդի համար միջոցներ հավաքելու նպատակով, կոմիտեները լայն աշ-խատանք ծավալեցին Թավրիզի, Թեհրանի, Նոր Զուղայի, Համա-դանի, Ահվազի և այլ քաղաքների հայ բնակչության շրջանում: Այդ միջոցառումը երկու նպատակ ուներ. մի կողմից հոգալ հայրենա-դարձների փոխադրման ծախսերը և այլ կազմակերպական հարցեր, մյուս կողմից՝ օգնել հայ գյուղացիների շունեոր խավին (որ կազ-մում էր հայրենադարձվողների մեծամասնությունը)՝ հագուստ, կոշիկներ և անհրաժեշտ այլ իրեր ձեռք բերել:

Հայրենադարձության հաջողությանը մեծապես նպաստեց տեղերում կոմիտեների ու Լենթակոմիտեների գործունեությունը: Թավրիզի, Թեհրանի կոմիտեներում, Նոր Զուղայի, Արաքի և այլ Լենթակոմիտեներին կից ստեղծվեցին կազմակերպական, ֆինան-սական, սանիտարական, փոխադրամիջոցային և զանազան այլ բաժանմունքներ: Կոմիտեներն ու Լենթակոմիտեները միաժամանակ բացատրական աշխատանք էին տանում հայրենադարձվողների շրջանում՝ նրանց ծանոթացնելով Հայկական ՍՍՀ-ի հասարակա-կան կառուցվածքին, սահմանադրությանը, կրթության գործին:

157 «Հակաֆաշիստ», 1946, 19 ապրիլի:

158 «Վերածնունդ», 1946, 24 մայիսի:

Հայրենադարձության առաջին ծիծեռնականները Թեհրանից մեկնած 11 ուսանող-հայերն էին¹⁵⁹։ Հայրենադարձների առաջին քարավանը Թավրիզից դուրս եկավ 1946 թ. հուլիսի 17-ին¹⁶⁰։ Այն կազմված էր Արաքին հարակից շրջանների գյուղացիներից։ Հուլիսի 20-ին հայրենիք ուղևորվեց հայրենադարձների հաջորդ քարավանը։ Վերջինիս կազմում էին թավրիզահայերը և Արաքի մերձակա շրջանների մյուս գյուղացիները։ Սկսեցին Թավրիզ գալ ու նոր քարավաններին միանալ հյուսիսային նահանգներից՝ Թեհրանից, Բուրվադի, Գյափլա, Քամարա և Քազազ, Չհարմհալ շրջաններից, Նոր Զուղայից, Արաքից, Մեշհեդից և այլ քաղաքներից ու բնակավայրերից Սովետական Հայաստան մեկնող հայերը։

Հայրենադարձությունը շարունակվում էր մինչև 1946 թ. հոկտեմբերի 2-ը։ Իրանահայերի հայրենադարձության կենսորոնական կոմիտեի տվյալների համաձայն երեք ամսում Սովետական Հայաստան փոխադրվեց 20.700 մարդ¹⁶¹։ Ծշտված տվյալներով 1946 թ. Իրանից հայրենիք է դարձել 25—28 հազար հայ։ Նրանց ընդհանուր թվից 5 հազարը քաղաքաբնակներ էին, իսկ մոտ 20 հազարը՝ գյուղացիներ։

Իրանից հայերի հայրենադարձությունը պետք է շարունակվեր նաև 1947 թ.։ Սակայն 1946 թ. վերջին և 1947 թ. սկզբին երկրում ստեղծված քաղաքական իրադրության հետևանքով հայրենադարձության գործը ընդհատվեց։ Սակայն այն որոշ ընդմիջումներով շարունակվում էր իրանահպատակությունից առանձին ընտանիքների դուրս գալու միջոցով։ 50-ական թվականներին մի քանի հարյուր հայ ընտանիքներ, մեծ մասամբ Թեհրանի բնակիչներից, իրանահպատակությունից հրաժարվելու և սովետական քաղաքացիություն ընդունելու վերաբերյալ փաստաթղթեր ձևակերպեցին։

60-ական թվականների սկզբին սովետական և իրանական կողմերի միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ համաձայնություն կայացվեց շարունակել հայրենադարձությունը։ Իրանական կառավարությունը իր համաձայնությունը տվեց Հայկական ՍՍՀ-ում մշտական բնակություն հաստատելու ցանկություն հայտնած հայերին թույլատրել դուրս գալ իրանական հպատակությունից։ Միաժամանակ նա պատրաստակամություն հայտնեց հեշտացնել դրա հետ կապված փաստաթղթերի ձևակերպման կարգը¹⁶²։

¹⁵⁹ «Վերածնունդ», 1946, 12 մայիսի։

¹⁶⁰ «Հայկաֆաշխատ», 1946, 21 հուլիսի։

¹⁶¹ ՀՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 362, ց. 2, գ. 17, թ. 87.

1962—1964 թթ. իրանում ՍՍՀՄ դեսպանության հյուպատոսական բաժնում անցկացվեց բաղադրանքի հայերի, գլխավորապես Խհհհհհհհ ընտանիքների գրանցում, ինչպես նաև նախապատրաստվեցին Սպահանի նահանգի Փերիալի շրջանի Բոլորան և Հաղտրշրի գյուղերի գյուղացիների ցուցակները:

1963 թ. սկսվեց հայերի փոխադրումը իրանից Սովետական Հայաստան: Սկզբում այն կատարվում էր Փեհլևի նավահանգստից դեպի Բաքու: Բայց հետագայում իրանական իշխանությունները թույլատրեցին այդ նպատակի համար օգտվել ավելի հարմար ճանապարհից՝ երկաթուղով, Արաքսի վրայի Ջուլֆա կայարանով: Վերջին տարիներս փոքր խմբերով հայրենիք են վերադարձել 7—8 հազար իրանահայեր: Իրանահայերի Սովետական Հայաստան տեղափոխությունը շարունակվում է նաև ներկայումս: Մոտավոր հաշվումներով 1922—1972 թթ. իրանից Սովետական Հայաստան է վերադարձել մոտ 65 հազար հայ:

А. У. МАРТИРОСЯН

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ В ИРАНЕ (НОВЕЙШИЙ ПЕРИОД)

Резюме

Работа посвящена современной жизни иранских армян, сравнительно многочисленному национальному меньшинству в Иране. Она охватывает ряд основных областей жизни колонии—социально-экономическую, административно-правовую и культурную. Соответственно работа делится на три раздела.

В первом разделе освещаются вопросы социально-экономического положения колонии. Показанные на фоне процессов, вызванных развитием буржуазных отношений, этапы социально-экономического развития колонии отражают коренные сдвиги и качественные изменения в классовой структуре страны. В то же время в работе нашли отражение специфические особенности социально-экономического положения иранских армян, обусловленные их положением в качестве национального меньшинства.

Вопросы правового положения и епархиального деления колонии сгруппированы во втором разделе, который носит название «Органы внутреннего управления и правовое положение колонии». Вскрывается сущность религиозно-цер-

ковного управления как формы внутреннего управления колонии. Даются характеристики существующих в настоящее время Тавризской, Ирано-Индийской и Тегеранской епархий, структура и функции епархиальных органов управления, отмечается их роль и значение в жизни колонии. Анализируется правовое положение иранских армян, подвергаются оценке права, которыми пользуются епархиальные органы,—семейно-наследственные права, правовые гарантии существования в Иране армянских национальных школ, право представительства в межлисе и др. Отмечается, что права иранских армян ограничены рамками колонии, в чем находит свое отражение особенность действующего иранского законодательства, все еще не отрешившегося от воздействия мусульманского права (шариата).

Культуре иранских армян посвящен третий раздел работы. В нем дается краткий очерк истории армянских культурных очагов в Иране, отражается становление новых методов в школах и развитие современного школьного образования в колонии. В отдельных подразделах освещаются вопросы развития в среде иранских армян литературы, живописи, музыки, театра, книгопечатания и прессы, описываются памятники армянского зодчества в Иране, приводятся сведения о местных армянских клубах и библиотеках, а также музеи и матенадаране Нор Джуги (Новой Джульфы)—одном из ценных хранилищ древних армянских рукописей, творений мастеров и умельцев.

В работе в целом делается первая попытка создать более или менее полное представление о жизни современной армянской колонии в Иране.